



ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

2004 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ, 2005 Թ.

Չեկույցի մասին

Համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը /այսուհետ՝ Պաշտպան/ զեկույց է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին:

ՀՀ առաջին Պաշտպանի զեկույցը վերաբերում է 2004թ.:

Չեկույցում շարադրված գնահատականները, եզրակացություններն ու առաջարկությունները հիմնված են ինչպես բողոքատուներից ստացված դիմումների, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ կատարված ուսումնասիրությունների և դիտարկումների վրա: Նախաձեռնությամբ ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են առավել լայն հասարակական հնչեղություն ստացած դեպքերի վերաբերյալ՝ մասնավոր կամ այլ աղբյուրներից (մասնավոր անձինք, ՀԿ-ներ, ՀԲԿ-ներ, պետական կառույցներ, միջազգային կազմակերպություններ) ստացած տվյալներով:

Չեկույցում առանձնացված են Պաշտպանի գործունեության հետ առնչվող այն դեպքերը, որոնք վերաբերում են երեխաների, կանանց, փախստականների, հաշմանդամների, բռնազաղթվածների և այլ խոցելի ու հատուկ խմբերի իրավունքների վերականգնմանը, վերլուծված են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են միջազգային կապերի զարգացումը, ՀԿ-ների հետ համագործակցությունը, տեղեկատվության տարածումը, իրավաբանական խորհրդատվությունը և այլն:

Լինելով առաջինը, այս զեկույցը հավակնություն չունի արտացոլել հանրապետությունում մարդու իրավունքների խախտումների բոլոր հնարավոր դրսևորումները, մանավանդ որ 10-ամսյա ժամանակաշրջանը շատ քիչ է այդպիսի լայն ընդգրկման համար:

Չեկույցում բերված գնահատականները որոշ դեպքերում կարող են նաև չհամընկնել հասարակության առանձին խմբերի գնահատականների հետ:

Այնուամենայնիվ, այդ գնահատականները գալիս են ապացուցելու, որ հազարամյակների պատմություն ունեցող երկրի ժառանգորդ Հայաստանի Հանրապետությունն անվերադարձ կերպով ընտրել է ժողովրդավարական, սոցիալական և իրավական երկիր կառուցելու ուղին, որի ապացույցներից մեկն էլ հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ստեղծումն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
1. Տեղեկություններ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության մասին	6
1.1 Հաստատության ստեղծումը	6
1.2 Հաստատության նպատակներն ու խնդիրները	7
1.3 Հաստատության կառուցվածքը	8
2. Հաստատության գործունեության հիմնական ուղղությունները	10
2.1. Համագործակցություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ	10
2.2. Համագործակցություն ՀԿ-ների հետ	11
2.3. Տեղեկատվություն և հասարակության հետ կապեր	11
2.4. Միջազգային համագործակցություն	12
2.5. Սեփական նախաձեռնություններ	14
2.6. Արագ արձագանքում	15
2.7. Աշխատանքային քննարկումներ	16
2.8. Փորձագիտական խորհուրդ	16
2.9. Աշխատանք բողոքների հետ	17
2.9.1. Ստացված բողոքների վիճակագրական վերլուծություն	17
2.9.2. Բողոքների ուսումնասիրման ու հետազոտման ընթացքը, ձեռնարկված միջոցառումները, ստացված արդյունքները	19
3. Հայաստանում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին	24
3.1. Կյանքի իրավունք	24
3.2. Ազատության և անձեռնմխելիության իրավունք	26
3.3. Խոշտանգումներից և դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի այլ ձևերից ազատ լինելու իրավունք	26
3.4. Ազատ տեղաշարժման իրավունք	28
3.5. Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք	29
3.6. Միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու իրավունք	30
3.7. Արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունք	31
3.8. Անմեղության կանխավարկած	34
3.9. Իրավաբանական օգնություն ստանալու, պաշտպան ունենալու իրավունք	34
3.10. Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների անօգտագործելիություն	36
3.11. Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք	36
3.12. Խոսքի ազատության և տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու իրավունք	38
3.13. Ընտրական իրավունք	39
3.14. Անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունք	39
3.15. Ազգային փոքրամասնությունների իրավունք	40
3.16. Կանանց իրավահավասարության իրավունք	41
3.17. Երեխաների պաշտպանության իրավունք	41
3.18. Սեփականության իրավունք, տնտեսական այլ իրավունքներ	43
3.19. Կրթության իրավունք	48
3.20. Մշակութային և հեղինակային իրավունք	49

3.21. Սոցիալական պաշտպանության իրավունք	50
3.22. Հատուկ և խոցելի խմբերի իրավունքներ	57
3.22.1. Հաշմանդամներ	57
3.22.2. Փախստականներ	58
3.22.3. Անօթևաններ	59
3.23. Այլ իրավունքներ	60
3.23.1. Բնապահպանություն	60
3.23.2. Սպառողների իրավունքներ	61
3.23.3. Հանգստի իրավունք	63
4. Օրենսդրական բարելավումների անհրաժեշտություն	65
4.1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը	65
4.2. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հետ փոխկապակցված այլ օրենքներ	66
4.3. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք	69
4.4. Հաշմանդամ և սոցիալապես անապահով խմբերի մասին օրենքներ	69
4.5. «Զինծառայողների և նրանց ընտանիքների մասին» ՀՀ օրենքը	70
4.6. «Փախստականների մասին» և «Բաղաքացիության մասին» ՀՀ օրենքներ	70
5. Պաշտպանի հաստատության գործունեության զարգացման ուղիները	71
6. Հավելվածներ	73
Հավելված 1. Համառոտ կենսագրական տեղեկություններ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի և Պաշտպանի տեղակալի մասին	74
Հավելված 2. Մարդու իրավունքների պաշտպանությունը աշխատանքային հարաբերությունների ոլորտում	76
Հավելված 3. Հայաստանի Հանրապետությունում կանանց իրավունքների պաշտպանության մասին	83
Հավելված 4. Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության մասին	89

Նախաբան

Բոլոր ժամանակներում մարդկային հասարակությունից ջանքեր են պահանջվել պաշտպանելու համար համամարդկային այնպիսի արժեքներ, ինչպիսիք են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Յուրաքանչյուր սերնդի համար դա ոչ միայն քաղաքական և քաղաքացիական, այլև քաղաքակրթական մարտահրավեր է:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների ձևավորման հիմքում դրվում են «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների մասին» Փարիզյան սկզբունքները, ըստ որոնց՝ նման կառույցի հիմնական առանձնահատկությունը պետք է լինի անկախությունն իշխանություններից, կառույցի իրավասությունների ամրագրումը երկրի սահմանադրությամբ և օրենքներով, դրանց իրականացման երաշխիքների ապահովումը, կառույցի գործունեության լայն հրապարակայնությունը:

Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հիմնադրվել է Փարիզյան այդ սկզբունքներին համապատասխան: Այսօր, երբ տարածման առավել միտում ունեն մարդկության համար այնպիսի չարիքներ, ինչպիսիք են ահաբեկչությունը՝ ազգային և միջազգային մակարդակներով, սոցիալական բևեռացումը, թրաֆիքինգը, երբ մարդ անհատը դառնում է առավել անպաշտպան և առավել կարիք ունի մշտական իրավական պաշտպանվածության, առավել կարևորվում են մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների, մասնավորապես նաև մեր հաստատության դերն ու նշանակությունը:

Անկախություն, անկողմնակալություն, արդարացիություն, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքների քննության արդյունքների արժանահավատություն՝ սրանք են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական սկզբունքները: Պետք է հուսալ, որ քաղաքացիական և սոցիալական պատասխանատվության մեծացմանն ու երկխոսության մշակույթում հանդուրժողականության ամրապնդմանն ուղղված ջանքերը նոր ընթացք կտան Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը:

Պաշտոնական դիրքի չարաշահումների, վատ վարչարարության, Սահմանադրությանը և օրենքներին հակասող ենթաօրենսդրական ակտերի ընդունման հետևանքով մարդու իրավունքների խախտումների ամենատարբեր դրսևորումների դեմ պայքարում հատկապես կարևոր է իրավակիրառական պրակտիկայի ամրապնդումն ու իրավագիտակցության բարձրացումը, ինչը հավատ ու վստահություն կներշնչի Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների նկատմամբ:

**ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան
Լ. Ալավերդյան**

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.1 Հաստատության ստեղծումը

Սահմանադրությամբ իրեն իրավական պետություն հռչակած և ժողովրդավարական զարգացման ուղիով ընթացող Հայաստանի Հանրապետությունում տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև միջազգային-իրավական բազմաթիվ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ապահովել օրենքի գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Վերոհիշյալ հարցերի լուծումը հնարավոր է սոցիալական արդարության սկզբունքների գերակայության հաստատմամբ, իրավապահպան գործունեության գաղափարայնացմանը և հանրային շահերի պաշտպանությանը գերապատվություն տալու կողմնորոշման վերացմամբ, հանրային և մասնավոր շահերի հավասար պաշտպանվածությամբ:

Այս բոլորը կարելի է իրականացնել միայն այն չափով, ինչ չափով լիարժեք է գործում երկրում իշխանությունների երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի իրական տարանջատման, փոխադարձ զսպումների և հակակշիռների համակարգը: Այս իրավիճակում, իբրև առանձնահատուկ մարմին, պարտավոր և ինքնուրույն դեր է վերապահված Մարդու իրավունքների պաշտպանի /Օմբուդսման/ հաստատությանը, որը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից անձի իրավունքների պաշտպանության իրական դերակատարություն կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ պետական կառուցակարգում այն հաստատված է որպես իշխանություններից անկախ, քաղաքական, գաղափարական, շահադիտական նախահամոզվածությունից ազատ մարմին:

Օմբուդսմանի հաստատությունը ստեղծվում է օրենքով, և այդ օրենքն էլ սահմանում է օմբուդսմանի ընտրության կարգը: Օմբուդսմանը, որպես կանոն, ընտրվում է երկրի խորհրդարանի կողմից: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով այդպիսի կարգ է սահմանված նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի համար:

ՀՀ Սահմանադրությամբ Մարդու իրավունքների պաշտպան նախատեսված չէ, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հիմնելու սահմանադրական հիմքերն անվիճարկելի են: Մասնավորապես, Սահմանադրության 4-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան:

Մինչև սահմանադրական փոփոխությունները, երբ Պաշտպանի նշանակման դրույթները կսահմանվեն նաև ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ՝ «Անցումային դրույթներ» հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, ՀՀ Նախագահը՝ ԱԺ խմբերի և խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո, 2004թ. փետրվարի 19-ի թիվ 23-Ա հրամանագրով ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան նշանակեց Լարիսա Ալավերդյանին:

Պաշտպանի անկախության սկզբունքները և երաշխիքներն ամրագրված են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքում: Օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված է, որ Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի: Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում նաև որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Որպես Պաշտպանի անկախության կարևորագույն երաշխիքներ, օրենքն ամրագրել է նաև Պաշտպանի անձեռնմխելիությունը /հոդված 19/, Պաշտպանին վաղաժամկետ հետ կանչելու դեպքերի սահմանափակումը /հոդված 5/:

Հատկապես կարևոր է օրենքի 2-րդ հոդվածի ձևակերպումը, որում Պաշտպանն անվանված է «ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ»: Օրենսդիրը Պաշտպանին չի նույնացրել պետական պաշտոնատար անձանց հետ, չի անվանել «պետական պաշտոնատար անձ»:

Օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածներում ամրագրված են Պաշտպանի անկախության այնպիսի կարևոր երաշխիքներ, ինչպիսիք են իր աշխատակազմն ինքնուրույն ձևավորելու և անձամբ ղեկավարելու իրավունքները:

2004թ. մարտի 1-ից պաշտոնապես անցնելով իր պարտականությունների կատարմանը՝ Պաշտպանը, այդ հոդվածների համաձայն, անձամբ ձևավորեց աշխատակազմը, որի անմիջական ղեկավարը ինքն է՝ հաստատելով աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը:

35 հաստիքներ ունեցող աշխատակազմը ձևավորելիս Պաշտպանն ընդգրկել է երիտասարդ մասնագետներ, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամների, ինչպես նաև Ադրբեջանից բռնազաղթվածների ներկայացուցիչներ, առաջնորդվելով հասարակության տարբեր շերտերի, սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների ընդգրկվածությունն ապահովելու սկզբունքով: Այսպես օրինակ՝ աշխատակազմի կեսից ավելին կանայք են, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կազմում են մոտ 10 տոկոս:

1.2. Հաստատության նպատակներն ու խնդիրները

Իր ստեղծման օրվանից Պաշտպանի հաստատության գլխավոր նպատակներն են եղել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ու վերականգնումը, մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պետական պաշտպանության երաշխիքների ապահովումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և պետական ծառայողների կողմից այդ իրավունքների և ազատությունների հարգումն ու պահպանումը:

Այդ նպատակների իրականացման համար հաստատությունը իր գործունեությունը ծավալել է հետևյալ ուղղություններով՝

- բարձրացնել երկրում մարդու իրավական և իրավաբանական պաշտպանվածության աստիճանը առաջին հերթին իրավակիրառական պրակտիկայի կատարելագործմանը նպաստելու միջոցով,
- նպաստել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների օրենսդրական ապահովման կատարելագործմանը և ՀՀ Օրենսդրության ներդաշնակեցմանը միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին,
- նախաձեռնել Պաշտպան-իշխանություն և Պաշտպան-հասարակություն կառուցողական համագործակցության գործընթացը և նպաստել այդ համագործակցության զարգացմանը,
- նպաստել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման ոլորտում միջազգային համագործակցության զարգացմանը,
- ապահովել և ընդլայնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հնարավորություններն ու մատչելիությունը,
- նպաստել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, դրանց պաշտպանության ձևերի և մեթոդների իրազեկմանը,
- ապահովել Պաշտպանի գործունեության անհրաժեշտ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, այդ մասին տեղեկատվության պարբերական և լայն տարածումը:

Վերոհիշյալ նպատակների ու խնդիրների իրագործման համար Պաշտպանը քննարկել է դիմում-բողոքներում նշված մարդու իրավունքների խախտման դեպքերը, ստուգայցեր է կազմակերպել առավել խոցելի խմբերի գտնվելու վայրերը (մանկատներ, ծերանոցներ, հոգեբուժարաններ, կալանավայրեր և այլն), վերհանել, քննել և հնարավորության դեպքում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից լուծում է տվել այն անհատների իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման դեպքերին, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն իրագործել իրենց պաշտպանությունն իրավական եղանակներով, տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն Երևանում և մարզերում, հրապարակայնացրել է մարդու իրավունքների վերականգնման հասարակական հնչեղություն ունեցող դեպքերը, վերլուծել և ամփոփել է մարդու իրավունքների խախտման դեպքերը և դրանց հիման վրա

եզրակացություններ ու առաջարկություններ է ներկայացրել համապատասխան մարմիններին, իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով քարոզություն է իրականացրել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հարցերի վերաբերյալ, նախապատրաստել և ներկայացրել է Պաշտպանի նախաձեռնությամբ անցկացված ուսումնասիրություններով հիմնավորված և/կամ օրենքով նախատեսված ելույթներ, զեկույցներ և հաշվետվություններ, ուսումնասիրել և կիրառել է Պաշտպանի կառույցի գործունեությանն առնչվող միջազգային փորձը:

Նշված խնդիրները և նպատակները իրականացնելիս Պաշտպանն առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

- պետական մարմինների հետ կառուցողական հարաբերությունների հաստատում,
- գործի ուսումնասիրման սկզբում ազդեցության առավել “մեղմ” միջոցների կիրառում և ազդեցության միջոցների ինտենսիվացում՝ մարդու իրավունքների վերականգնման գործընթացում դիմադրություն հանդիպելու դեպքում,
- փոխլրացման սկզբունք՝ այնպիսի գործողությունների ձեռնարկում, որոնք նպատակ ունեն լրացնել իրավական պաշտպանության՝ օրենքով նախատեսված միջոցները,
- մարդու իրավունքների պաշտպանության գործընթացում կանխարգելող միջոցառումներին նախապատվություն տալը,
- մարդու իրավունքների խախտման դեպքերի և երևույթների վերլուծության հիման վրա եզրակացությունների և առաջարկությունների տրամադրում համապատասխան մարմիններին և գերատեսչություններին,
- գործընկերային հարաբերությունների ստեղծում քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

1.3. Հաստատության կառուցվածքը

Վերը նշված խնդիրներն ու նպատակներն իրականացնելու համար Պաշտպանը ստեղծել է աշխատակազմ, որի աշխատանքների համակարգումը ըստ գործունեության ոլորտների և ուղղվածության իրականացվել է հետևյալ ստորաբաժանումների միջոցով.

- քարտուղարություն,
- քաղաքացիների ընդունելության և նամակների բաժին,
- մարդու իրավունքների պաշտպանության և վերականգնման խմբեր,
- գիտավերլուծական կենտրոն,
- արագ արձագանքման խումբ,
- տեղեկատվության և հասարակության հետ կապերի խումբ,
- միջազգային կապի խումբ,
- վարչատնտեսական ծառայություն:
-

Քարտուղարության մեջ ընդգրկված են Աշխատակազմի պատասխանատու քարտուղարը, Պաշտպանի երկու խորհրդականները, Պաշտպանի և Պաշտպանի տեղակալի օգնականները, Պաշտպանի գործավարը, որոնք համակարգում են փոխգործակցությունը պետական տարբեր կառույցների, հասարակության տարբեր խմբերի, միջազգային կազմակերպությունների հետ, մշակում ծրագրեր աշխատակիցների մասնագիտական որակավորման և վերաորակավորման համար, օժանդակում Պաշտպանի և Պաշտպանի տեղակալի գործունեությանը:

Քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի աշխատակիցներն ընդունում են քաղաքացիներին և տրամադրում իրավաբանական խորհրդատվություն, ընդունում և նախնական մշակման են ենթարկում բողոքները, կատարում են այդ բողոքների հաշվառում և վերլուծություն, կազմակերպում են Պաշտպանի կամ Պաշտպանի տեղակալի կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելությունը, իրականացնում ընդհանուր բաժնի գործառույթներ: Ներկայումս բաժնում կիրառվում է բողոքների գրանցման և ամփոփման համակարգչային ծրագիր, որին ներկայացվող պահանջները մշակվել են աշխատակազմի կողմից, և որի պատրաստումն ու ներդրումը իրականացվել է հայ մասնագետների կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանության և վերականգնման խմբերը անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրում Պաշտպանի աշխատակազմին դիմող

անձանց: Բացի դրանից՝ աշխատանքի, սոցիալական, տնտեսական ու մշակութային, քաղաքացիական ծառայողների, հատուկ և խոցելի խմբերի իրավունքների վերականգնման խումբը, քրեադատավարական, քրեակատարողական, զինծառայողների իրավունքների վերականգնման խումբը և քաղաքացիական ու գույքային իրավունքների վերականգնման խումբը զբաղվում են հիմնականում այդ ոլորտներին վերաբերող իրավունքների ոտնահարման դեպքերի ուսումնասիրությամբ և այդ իրավունքների վերականգնման աշխատանքներով: Այս խմբերի մասնագետները մասնակցում են նաև **արագ արձագանքման խմբի** այցելություններին և տալիս են դրանց ընթացքում հայտնաբերված մարդու իրավունքների խախտումների իրավական գնահատականը:

Գիտավերլուծական կենտրոնի աշխատակիցները մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող օրենսդրության կատարելագործմանը նպաստելու նպատակով կատարում են օրենսդրության և օրենսդրական նախագծերի վերլուծություններ և նախապատրաստում առաջարկներ՝ նկատի ունենալով դրանք միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Նրանք վերլուծում և ամփոփում են բողոքների վերաբերյալ կատարված աշխատանքները, նախապատրաստում Պաշտպանի տարեկան և այլ զեկույցները, ուղերձները, դիմումները:

Արագ արձագանքման խումբը անհապաղ արձագանքում և տեղերում (հիվանդանոցներ, մանկատներ, ծերանոցներ, անձանց հարկադրական պահման վայրեր, նախնական կալանքի և ազատազրկման վայրեր, դատարան, դատախազություն, ոստիկանություն, համայնքներ, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ) ուսումնասիրում է իրավունքի խախտման մասին ստացված հաղորդումները, անհրաժեշտության դեպքում դիտարկում է դատական նիստերի ընթացքը:

Տեղեկատվության և հասարակության հետ կապերի խումբը իրականացնում է Պաշտպանի գործունեության լուսաբանումը ՉԼՄ-ների միջոցով, մշակում և իրականացնում է Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության մասին հասարակության և միջազգային հանրության իրազեկմանն ուղղված միջոցառումներ, իրականացնում է մարդու իրավունքներին վերաբերող տեղեկատվական նյութերի հրատարակում, դիտարկում է ՉԼՄ-ներով հրապարակված՝ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող դեպքերն ու իրադարձությունները, որոնք կարող են հիմք ծառայել Պաշտպանի սեփական նախաձեռնությունների համար:

Միջազգային համագործակցության խումբը նպաստում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման ոլորտում միջազգային կապերի ստեղծմանն ու զարգացմանը, նախաձեռնում է միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում, ապահովում է՝

- Պաշտպանի աշխատակազմի կապը միջազգային մամուտի կառույցների հետ,
- Պաշտպանի և նրա աշխատակիցների մասնակցությունը միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող տարբեր միջոցառումներին,
- մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող միջպետական և միջազգային կազմակերպությունների կողմից կազմված զեկույցների և այլ նյութերի վերլուծությունը:

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակիցներն ապահովում են Պաշտպանի, Պաշտպանի տեղակալի և Աշխատակազմի բնականոն գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համագործակցություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Փորձը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների պաշտպանության նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության հաստատումը երաշխիք է Պաշտպանի կողմից քննարկվող բողոքներով բարձրացված հարցերի արագ և արդյունավետ լուծման համար:

Համագործակցությունը **«Հ Ազգային ժողովի և կառավարության հետ** իրականացվում է ԱԺ հանձնաժողովների կազմակերպած քննարկումներին մասնակցելու և հարցի կապակցությամբ կարծիք ներկայացնելու ճանապարհով, իսկ կառավարության նիստերին մշտապես մասնակցում են Պաշտպանը կամ Պաշտպանի տեղակալը:

Դեռևս չի կարգավորվել մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող օրինագծերի վերաբերյալ Պաշտպանի կարծիք, եզրակացություն ունենալը պարտադիր դարձնելու խնդիրը:

Դրված են նաև համապատասխան **նախարարությունների ու զերատեսչությունների հետ** համագործակցության հիմքերը:

Նկատի ունենալով **նստիկանության մարմինների** մշտական առնչությունը քաղաքացիների իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտի հետ, հանրապետության նստիկանության հետ կնքվել է համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, որով ամրագրված են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով տեղեկատվության փոխանակման, նստիկանության ղեկավարության կողմից Պաշտպանի դիտողություններին ու առաջարկություններին արագ արձագանքելու սկզբունքները:

Համագործակցության կայուն հիմքեր են ստեղծվել **հանրապետության դատախազության և վճռաբեկ դատարանի հետ** հանդիպումների և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի համատեղ քննարկումների միջոցով: Վճռաբեկ դատարանի նախագահը պատրաստակամություն է հայտնել Դատարանների նախագահների խորհրդի քննարկման առարկա դարձնել դատական նիստերի դիտարկումների, դատարանների դեմ ստացված բողոքների ուսումնասիրությունների հիման վրա Պաշտպանի կողմից ներկայացվող առաջարկները: Նման առաջարկ վճռաբեկ դատարանի նախագահին արդեն ներկայացվել է:

Չնայած **Երևանի քաղաքապետարանի** աշխատակիցների հետ կայացել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ, սակայն մինչ օրս եղած համագործակցությունը չի կարելի համարել արդյունավետ: Քաղաքապետարանի դեմ մեծ թվով բողոքներ կան քաղաքային հողերի տնօրինման, պետական կարիքների համար քաղաքացիների գույքի օտարման, նախկինում քանդված բնակարանների դիմաց փոխհատուցում տրամադրելու և այլ հարցերի վերաբերյալ, որոնցում առկա են մարդու իրավունքի խախտումներ: Դրանց վերացումը կամ խախտված իրավունքի վերականգնումը ձգձգվում է, կամ համապատասխան առաջարկության հետ չեն համաձայնվում՝ անհիմն պատճառաբանությամբ: Անկախ այդ ամենից, Պաշտպանը ձգտում է համագործակցության ուղիներ գտնել նաև քաղաքապետարանի հետ:

Անբավարար կարելի է գնահատել նաև համագործակցությունը **անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և դատական ակտերի հարկադիր կատարման վարչության** հետ, թեև բազմաթիվ բողոքների մեջ բարձրացված հարցերը հենց այդ մարմինների միջամտությամբ ստացել են դրական լուծումներ:

Համագործակցությունն ավելի արդյունավետ է **մարզպետների, մարզերում քաղաքապետների և գյուղապետների** հետ: Մի շարք մարզերում մարզպետները, քաղաքապետները պատրաստակամություն են հայտնել օժանդակել իրենց մոտ Պաշտպանի ներկայացուցչություն հիմնելուն:

Բոլոր գյուղապետերը, որոնց հետ հասցրել են առնչվել Պաշտպանը կամ նրա աշխատակիցները, պատրաստակամ են սերտ համագործակցություն հաստատել համայնքի բնակչության իրավական տեղեկացվածության, օրենքների իմացության մակարդակի բարձրացման հարցերում: Նման համագործակցության շնորհիվ զգալի թվով բողոքների դրական լուծում է տրվել դրանց ուսումնասիրության փուլում:

Իր հետագա գործունեության զարգացման համար Պաշտպանը կարևորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության խորացման անհրաժեշտությունը:

2.2. Համագործակցություն ՀԿ-ների հետ

Բարձր գնահատելով հասարակական կազմակերպությունների տարիների փորձն ու հասարակության մեջ ունեցած հեղինակությունը՝ Պաշտպանը կարևորում է համագործակցությունը նրանց հետ: Դրանով է պայմանավորված այն, որ մարզեր այցելություններ կատարելիս Պաշտպանը պարտադիր կերպով և պարբերաբար հանդիպում է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Մարզերում Պաշտպանի հանդիպումները քաղաքացիների հետ անկաշկանդ և անկեղծ անցկացնելու նպատակով Պաշտպանը ազգաբնակչության հետ հիմնականում հանդիպում է հասարակական կազմակերպությունների միջոցով (Լոռու, Սյունիքի, Արմավիրի, Շիրակի, Վայոց Ձորի մարզեր):

Հասարակական կազմակերպությունների համագործակցության մեկ այլ հաջողված օրինակ կարելի է համարել այն, որ Պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի կազմում ընդգրկվել են մի քանի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հասարակական կազմակերպությունների հետ Պաշտպանը մի շարք աշխատանքային հանդիպումներ ու քննարկումներ է ունեցել նաև իր աշխատակազմում: Մասնավորապես, աշխատակազմում ՀԿ-ների ամենամասնիջական մասնակցությամբ կազմակերպվել են թվով 5 քննարկումներ սոցիալական ապահովության քարտերի վերաբերյալ: Համապատասխան հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ տեղի են ունեցել նաև բնապահպանության, փախստականների, հաշմանդամների հիմնախնդիրներին, կանանց և երեխաների իրավունքներին, սպառողների իրավունքների պաշտպանությանը նվիրված կլոր սեղաններ:

Պաշտպանի նախաձեռնությամբ 4 բարեգործական և իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ կնքվել են համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր: Պաշտպանի աշխատակազմի անդամները ակտիվորեն մասնակցում են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող միջոցառումներին, հանդես են գալիս զեկույցներով:

Հետագա համատեղ միջոցառումներն էլ ավելի առարկայական դարձնելու նպատակով ակնկալվում է համագործակցության կոնկրետ առաջարկությունների ներկայացում հասարակական կազմակերպությունների կողմից:

2.3. Տեղեկատվություն և հասարակության հետ կապեր

Պաշտպանի գործունեությանը բնորոշ են հաշվետվողականությունը (բողոքի գաղտնիության պահպանման երաշխիքով), տեղեկատվության մատչելիությունը, ՉԼՄ-ների հետ երկխոսություն վարելու պատրաստակամությունը: Միայն 2004թ. ընթացքում մամուլում տպագրվել են ավելի քան 140 հրապարակումներ՝ անմիջականորեն նվիրված Պաշտպանի գործունեությանը: Պաշտպանի գործունեությունը լուսաբանվել է նաև ռադիո և հեռուստատեսությամբ եթեր տրված մոտ 90 հաղորդումների ընթացքում, որոնց շարքում եղել են հանդիպումներ, ասուլիսներ Պաշտպանի հետ, նորություններ հաստատության կատարած աշխատանքների մասին: Մի քանի թերթերի խմբագիրների հետ ձեռք է բերվել համաձայնություն այդ թերթերում Պաշտպանի մշտական սյունակ ունենալու վերաբերյալ: Այս ամենը բացատրվում է ՉԼՄ-ների՝ մարդու իրավունքների ազգային հաստատության կայացման հանդեպ անվերապահ շահագրգռվածությամբ:

Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից մեկը եղել և մնում է սերտ համագործակցությունը ՉԼՄ-ների հետ, որոնց հետ ստեղծվել են գործընկերային հարաբերություններ: Այդ մասին են վկայում ՉԼՄ-ներով հնչեցրած մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ նյութերին Պաշտպանի արձագանքերը և սեփական նախաձեռնություններով հանդես գալը: Համագործակցությունը ՉԼՄ-ների հետ նպաստում է նաև երկրի հասարակության տեղեկացվածությանը Պաշտպանի հաստատության մասին, հասարակության անդամների կողմից իրենց իրավունքների գիտակցման աճին և դրանք առավել ակտիվ պաշտպանելուն:

Պաշտպանի հաստատության ստեղծման մեկուկես ամսվա, 100 օրվա, 6 և 9 ամիսների լրանալու հետ կապված կազմակերպվել են Պաշտպանի մամլո ասուլիսներ: Այդ առիթներով ՉԼՄ-ներին բաժանվել են վիճակագրական տվյալներ և բուլլետեններ, պատրաստված աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապի խմբի կողմից:

ՀՀ Ազգային ժողովի և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրերի համատեղ ծրագրի շրջանակներում, որը կոչվում է «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության աջակցության և մարդու իրավունքների բնագավառում հասարակության տեղեկացվածության բարձրացման ծրագիր», Պաշտպանի աշխատակազմը մասնակցել է Պաշտպանի և նրա հաստատության մասին սոցիալական տեսահոլովակների, ցուցապատառների, բրոշյուրների ստեղծմանը, Պաշտպանին նվիրված ինտերնետային էջի մշակմանը: Այդ տեսահոլովակները ներկայումս պարբերաբար ցուցադրվում են հայկական տարբեր հեռուստաալիքներով:

2.4. Միջազգային համագործակցություն

Պաշտպանի հաստատությունը ակտիվ գործնական կապեր է հաստատել և համագործակցում է միջպետական, միջազգային կառույցների և կազմակերպությունների, օմբուդսմանի ազգային և միջազգային հաստատությունների հետ:

2004թ. գործնական կապեր են հաստատվել Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների գլխավոր տնօրինության, ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի, Եվրոպական դատարանի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ), ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի, Հայաստանում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների և դեսպանությունների հետ: Ստեղծվել են տեղեկատվական բազաներ միջազգային և միջպետական հաստատությունների, միջազգային դոնոր-կազմակերպությունների, Պաշտպանի աշխատակազմի հետ համատեղ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ:

Համագործակցության հուշագիր է ստորագրվել մարդու իրավունքների Հելսինկյան Հիմնադրամի հետ (Լեհաստան), ըստ որի Հիմնադրամը ֆինանսավորում է Պաշտպանի աշխատակազմի մեկական ներկայացուցչի մասնակցությունը տարին 2 անգամ կազմակերպվող Մարդու իրավունքների միջազգային դպրոցի դասընթացներին:

Արձագանքելով ժամանակի նոր մարտահրավերին՝ միջազգային ահաբեկչությանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Փարիզյան և Մոսկովյան գրասենյակների հետ համաձայնություն է ձեռք բերվել Երևանում «Հանուն հանդուրժողականության և ընդդեմ խտրականության ու քսենոֆոբիայի՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում (Կովկասյան տարածաշրջան)» խորագրով միջազգային կոնֆերանս կազմակերպելու վերաբերյալ: Այն անց է կացվելու 2005 թ. մայիսի 24-ին և 25-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոսկովյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

ՄԱԿ-ի Չարգացման ծրագրերի (UNDP) կողմից կազմակերպվող կյո սեղանների շրջանակներում սերտ հարաբերություններ են հաստատվել Եվրոպայի և ԱՊՀ պետությունների օմբուդսմանների ազգային հաստատությունների հետ: 2004թ. Պաշտպանը և նրա աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են 3-րդ և 4-րդ կյո սեղաններին, պայմանավորվածություն է ձեռք բերվել 6-րդ կյո սեղանը անցկացնել Երևանում:

Գործունեության մասին տեղեկատվության և փորձի փոխանակումը ԱՊՀ երկրների օմբուդսմանների հետ իրականացվել է նաև ԱՊՀ պետությունների միջկառավարական վեհաժողովների շրջանակներում կազմակերպվող օմբուդսմանների հավաքներում:

Հարկ է նշել արդյունավետ համագործակցությունը Վրաստանի Ժողովրդական պաշտպանի կառույցի հետ: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2004թ. մասնակցել են Թբիլիսիում անցկացված մարդու իրավունքներին նվիրված բոլոր միջազգային կոնֆերանսներին ու թրենինգներին, իսկ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի պատվիրակությունը փորձի փոխանակման նպատակով այցելել է Պաշտպանի հաստատություն, որի ընթացքում լուսաբանվել են Պաշտպանի գործունեությունը, հաստատության կառուցվածքը, աշխատանքի կազմակերպումը, հանդիպումներ են կազմակերպվել աշխատակազմի հետ:

Այն դեպքերում, երբ ՀՀ որոշ քաղաքացիների իրավունքներ խախտվել են արտերկրում, Պաշտպանի կողմից ձեռնարկվել են քայլեր այդ երկրների օմբուդսմանների կամ պատկան մարմինների միջոցով այդ երևույթներին արժանի ուշադրություն դարձնելու նպատակով:

Պաշտպանի օրենքի վերաբերյալ փորձագիտական կարծիք տրամադրելու և Պաշտպանի հաստատության ստեղծմանն ու կայացմանն աջակցելու նպատակով դեռևս 2003թ. ստեղծվել էր միջազգային աշխատանքային խումբ՝ կազմված հետևյալ դիվանագիտական ներկայացուցչությունների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից. ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչություն, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Եվրոպայի Խորհրդի տեղեկատվական կենտրոն, ՄԱԿ-ի Չարագման ծրագիր, Բաց հասարակության ինստիտուտ՝ Մորոսի հիմնադրամ, Համաշխարհային ուսուցում, Հայաստանում Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցչություն, Իրավաբանների միջազգային ասոցիացիա, Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն, Իրավական նախաձեռնություն Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի համար, Հայաստանի օրենսդրի հզորացման ծրագիր:

2004թ. Աշխատանքային խմբի հետ տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ: Այդ հանդիպումների ընթացքում մասնակիցները մասնավորապես անդրադարձել են Դին Մ. Գոթերիերի՝ Օմբուդսմանի հարցերով ՄԱԶԾ-ի խորհրդատուի Հայաստան կատարած աշխատանքային այցին, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխություններին, Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակի վերաբերյալ նոր մոտեցումների վերլուծությանը, Պաշտպանի աշխատակազմի գործունեության զարգացման Ռազմավարական ծրագրի քննարկմանը, ինչպես նաև Պաշտպանի՝ զանգվածային լրատվամիջոցների հետ ունեցած հարաբերություններին:

Պաշտպանի աշխատակազմը դիմել է Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման դեպարտամենտի զարգացման ծրագրի հայաստանյան ներկայացուցչությանը՝ սոցիալական բնույթի կոնֆլիկտներից առաջ եկող մարդու իրավունքների խախտումների կանխմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիական հասարակության համատեղ ջանքերի խթանմանն ուղղված գործողություններում Պաշտպանի աշխատակազմի կարողությունները հզորացնելու նպատակով մարզային ներկայացուցչություններ ստեղծելու ծրագրին աջակցելու առաջարկով:

Եվրոպական հանձնաժողովի Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի (REDAM-TACIS) նախաձեռնությամբ Հայաստանում մարզային ներկայացուցչություններ ունենալու համագործակցության առաջարկին Պաշտպանը դրական է արձագանքել՝ ներկայացնելով համապատասխան ծրագիր-առաջարկ, և տարածքային զարգացման ծրագրի հետ ստորագրվել է համագործակցության երկկողմանի հուշագիր ՀՀ երկու մարզերում Պաշտպանի ներկայացուցչություններ ստեղծելու վերաբերյալ:

Կարևորելով Երեխաների իրավունքների կոմիտեի (ԵԻԿ) նստաշրջանի ժամանակ մասնակից պետությունների կողմից ներկայացված զեկույցների քննարկման արդյունքում արված եզրափակիչ դիտողությունները, մասնավորապես, **երեխաների իրավունքների լրացուցիչ մոնիտորինգ անցկացնելու և երեխայի իրավունքներն արդյունավետ պաշտպանելու նպատակով երեխայի իրավունքների պաշտպանության կառույցի հիմնման նպատակահարմարության մասին**, Պաշտպանի աշխատակազմը երեխայի իրավունքների

պաշտպանության օրենսդրական երաշխիքների ամրագրման գործում Պաշտպանի դերի ուժեղացմանն ուղղված ծրագիր-առաջարկ է ներկայացրել Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Չարգացման ծրագրին:

Կարևորելով ԵԻԿ-ի կողմից արված առաջարկությունը՝ Պաշտպանի աշխատակազմում ունենալ երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող առանձին կառույց, ինչպես նաև ողջունելով ՀՀ Երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունների 10-ամյա ռազմավարական ծրագիրը, երեխաների իրավունքների ոլորտում իրականացվող ծրագրերն արդյունավետորեն համակարգելու և ԵԻԿ-ի առաջարկությունների կատարումը վերահսկելու նպատակով, Պաշտպանը ծրագիր է ներկայացրել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամին:

Ակնկալվում է, որ 2005-2006թթ. այս ծրագրերը կյանքի կկոչվեն :

2.5. Սեփական նախաձեռնություններ

Պաշտպանը որդեգրել է այն սկզբունքը, որ մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ ցանկացած ոտնձգության դեպքում միջամտությունը պարտադիր է՝ անկախ երևույթի մասին բողոքի առկայությունից:

2004թ. մարտ-ապրիլ ամիսներին, երբ արձանագրվել են ոստիկանության կողմից ուղևորատար տրանսպորտի երթևեկության սահմանափակման դեպքեր, Պաշտպանն իր նախաձեռնությամբ, աշխատակիցներից կազմած խմբերով կատարել է Երևանից դուրս եկող տարբեր ճանապարհների ստուգայցեր, ներկայացրել միջնորդություններ:

Իր նախաձեռնությամբ Պաշտպանը ստուգայցեր է կատարել վարչական կարգով կալանավորված անձանց պահման վայրեր, ինչպես նաև դիտարկել է այդպիսի կալանքներին նախորդած դատական նիստերը:

Պաշտպանի նման այցելությունների և միջամտությունների արդյունքում է, որ մեղմացվել են ուղևորատար տրանսպորտի երթևեկության սահմանափակումները, պակասել են վարչական կարգով կալանավորումները:

Պաշտպանն իր նախաձեռնությամբ հանդիպումներ է իրականացրել ազատագրված վայրերում հացադուլ հայտարարած անձանց հետ՝ տեղեկանալով այդ մասին մամուլից կամ հենց վարչակազմից՝ այլ առիթներով ազատագրված վայրեր կատարած այցերի ժամանակ: Հիմնականում հաջողվել է համոզել կալանավորվածներին դադարեցնել հացադուլը:

Սեփական նախաձեռնությամբ Պաշտպանը հանդիպել է ցմահ ազատագրված դատապարտված անձանց հետ և ուսումնասիրել նրանց խնդիրները, որոնց հետ կապված Պաշտպանի նախաձեռնությամբ կայացել են քննարկումներ պետական պատկան մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կատարված աշխատանքում կարևորվում է նաև Պաշտպանի ու նրա աշխատակիցների այցելությունները գորամասեր՝ զինձառայողների կենցաղային, բուժապասարկման, սանիտարահիգիենիկ պայմաններն ուսումնասիրելու, հատկապես ժամկետային զինձառայողներին իրենց իրավունքները բացատրելու, Պաշտպանին դիմելու իրավունքի և կարգի մասին տեղեկացնելու և ունեցած իրավասության շրջանակներում այլ խնդիրներ ուսումնասիրելու նպատակով:

Բանակի առանձնահատկություններից էլնելով, երբեմն դժվարություններ են առաջանում փաստացի իրավիճակն ուսումնասիրելու հարցում: Մակայն հաճախակի հանդիպումներն ստեղծում են փոխադարձ վատահոսության մթնոլորտ, և արդեն Պաշտպանը դիտվում է ոչ թե որպես վերահսկողություն իրականացնող, այլ որոշակի խնդիրների լուծմանն օժանդակող պաշտոնատար անձ:

Սոցիալական քարտերի ներդրման շուրջն ստեղծված անհամաձայնությունների, դժգոհությունների և տարակարծությունների կապակցությամբ Պաշտպանն իր նախաձեռնությամբ կազմակերպել է մեկ տասնյակից ավելի քննարկումներ և տարբեր մակարդակների հանդիպումներ /Երևանում և մարզերում/ :

Հասարակական հնչեղություն ունեցող քրեական գործերով, մամուլի հրապարակումների հիման վրա, Պաշտպանն անց է կացրել սեփական ուսումնասիրություններ և իր առաջարկները ներկայացրել հանրապետության գլխավոր դատախազին:

Նկատի ունենալով, որ մեծ դժգոհություն կա Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ քաղաքացիների գույքի օտարման ընթացքում թույլ տրվող խախտումներից, Պաշտպանն իր նախաձեռնությամբ անց է կացրել ուսումնասիրություններ նաև այդ հարցերով:

Իր նախաձեռնությամբ Պաշտպանն իրականացնում է նաև հասարակական հնչեղություն ստացած գործերով դատական նիստերի դիտարկումներ:

Սեփական նախաձեռնությամբ աշխատանքներ իրականացնելը նպաստում է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանությանն ու վերականգնմանը, այլև այդ իրավունքների խախտումների կանխարգելմանը:

2.6. Արագ արձագանքում

Արագ արձագանքումը, որպես գործունեության առանձին ուղղություն, ձևավորվել է Պաշտպանի գործունեության առաջին իսկ օրվանից՝ լինելով մարդու իրավունքների խախտումների փաստերը բացահայտող, արձանագրող և հաճախ դրանք կանխող արդյունավետ ձևերից մեկը:

Արագ արձագանքումն իրականացվում է՝

- մարդու իրավունքների խախտումների մասին հիմնականում բանավոր ներկայացվող անհապաղ միջամտություն պահանջող դեպքերում,
- մարդու իրավունքների պաշտպանության իրական վիճակը պարզելու նպատակով, առանց զգուշացնելու, մարդու իրավունքների տեսանկյունից առավել վտանգված վայրեր այցելություններ կատարելու միջոցով: Այդ այցելությունների ժամանակ հավաքագրված տեղեկությունները հիմք են ծառայում հետագայում Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություն կատարելու և հայտնաբերված խախտված իրավունքների վերականգնման համար,
- ուսումնասիրման կամ հետազոտման փուլում գտնվող բողոքների առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անօրինական միջամտությունները կանխելու նպատակով,
- որոշ ժամանակահատվածներում, օրինակ՝ հանրահավաքների օրերին, շուրջօրյա հերթապահություն սահմանելու միջոցով, ինչը հնարավորություն է տալիս օրվա ցանկացած ժամին ստանալ ահազանգը, անմիջապես արձագանքել և միջամտել խախտված իրավունքների վերականգնմանը:

Սեփական նախաձեռնությամբ կամ բողոքների հիման վրա թվով 42 այցելություններ են կատարվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ձեռքբերվածների պահման վայր, Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ՝ «Գյումրի», «Գորիս», «Վանաձոր», «Կոշ», «Երևան», «Երևան-Կենտրոն», «Նուբարաշեն», «Էրեբունի», «Դատապարտյալների հիվանդանոց», հանդիպումներ են տեղի ունեցել ցմահ դատապարտյալների, արտասահմանյան քաղաքացի հանդիսացող դատապարտյալների, պարտադիր ժամկետային ծառայությունից խուսափած «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչների, Պաշտպանին հայտնի դարձած բոլոր հացադուլ հայտարարածների, ինչպես նաև 62 այլ դատապարտյալների հետ: Այդ այցելությունների ընթացքում անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություններ են տրվել այն անձանց, ովքեր պատշաճ ձևով իրագեղկված չեն իրենց իրավունքների մասին կամ չեն կարող ինքնուրույն պաշտպանել դրանք:

Այցելությունների ժամանակ ուսումնասիրվել են ոչ միայն կալանավորների պահման պայմանները, այլև այդ հաստատությունների աշխատակիցների իրավունքների պաշտպանվածության վիճակը և աշխատանքի պայմանները: Նույնը վերաբերում է բանակին, հիվանդանոցներին, մանկական հաստատություններին:

Արագ արձագանքման խումբն ամիսն առնվազն երկու անգամ այցելություններ է կատարում հանրապետության մարզերում գտնվող տարբեր հաստատություններ, ինչը մարզերում Պաշտպանի ներկայացուցիչների բացակայության պայմաններում մասամբ ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հասանելիությունը քաղաքացիների համար:

Շնորհիվ արագ արձագանքման օպերատիվության, դրական արդյունքներ են արձանագրվել այնպիսի դեպքերում, ինչպիսիք են ԴԱՀԿ ծառայության կողմից վտարումներ կատարելու կապակցությամբ ապօրինի գործողությունների իրականացումը, անձին

նստիկանությունում ապօրինի պահելը, ուղևորատար տրանսպորտի ազատ տեղաշարժվելու սահմանափակումները և այլն:

Այսպիսով, արագ արձագանքումը, որպես Պաշտպանի աշխատակազմի գործելակերպ, ապացուցել է իր կարևորությունն ու արդյունավետությունը:

2.7. Աշխատանքային քննարկումներ

Առանձին հատուկ և խոցելի խմբերի իրավական և սոցիալական հիմնահարցերի վերհանման և հետազայում առաջարկություններ մշակելու ընթացքում լայնորեն հաշվի են առնվել այդ խմբերի ներկայացուցիչների կամ նրանց իրավունքները պաշտպանող խմբերի կամ կազմակերպությունների գնահատականները, կարծիքներն ու առաջարկությունները:

Այդ նպատակով կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ՝ նվիրված կանանց և երեխաների իրավունքներին, բնապահպանության, փախստականների, հաշմանդամների հիմնախնդիրներին, սպառողների իրավունքների պաշտպանությանը:

Փախստականների իրավական պաշտպանության հիմնահարցերին նվիրված աշխատանքային քննարկմանը մասնակցել են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՄԱԿ-ի ՓԳՀ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության ներկայացուցիչը: Հանդիպման ընթացքում քննարկվել են փախստականների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հետ կապված խնդիրներ՝ մասնավորապես, հաշվառման վայր չունենալու պատճառաբանությամբ անձնագրի տրամադրման մերժումը, փախստականներին վերաբերող բնակարանային, սոցիալական բնույթի այլ խնդիրներ, ինչպես նաև սեփականաշնորհման գործընթացում փախստականների իրավունքների ոտնահարման մի քանի դեպքեր և դատարանների մոտեցումները այդ հարցերին:

Հաշմանդամների պաշտպանությանը նվիրված աշխատանքային քննարկմանը մասնակցել են հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող Հաշմանդամների հայկական ասոցիացիայի, «Հույսի կամուրջ», «Հավատ», «Ունիտոն», «Աստղիկ» հասարակական կազմակերպությունների և ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամների վարչության ներկայացուցիչներ: Քննարկվել են արդի հիմնախնդիրներ, եղել են առաջարկություններ՝ օրենսդրական դաշտում փոփոխություններ կատարելու մասին:

Սոցիալական ապահովության քարտերի վերաբերյալ մի քանի անգամ կազմակերպվել են քննարկումներ՝ կառավարության համապատասխան մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կազմակերպվել և անց է կացվել հատուկ քննարկում, նվիրված նախկին քրեական օրենսգրքով մահապատժի դատապարտված և մինչև նոր քրեական օրենսգրքը գործողության մեջ դրվելը մահապատիժն ի կատար չածված անձանց վերաբերող հիմնախնդիրներին:

2.8. Փորձագիտական խորհուրդ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն Պաշտպանը խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով կարող է ստեղծել Փորձագետների խորհուրդ, որի անդամները խորհրդի աշխատանքներին ներգրավվում են կամավորական հիմունքներով և իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական կարգով:

Կարևորելով իրավապաշտպան գործունեության ընթացքում ծագած հիմնախնդիրների վերաբերյալ անաչառ և անկողմնակալ փորձագիտական կարծիքի անհրաժեշտությունը, Պաշտպանը 2004թ. սեպտեմբերի 28-ի հրամանով ստեղծել է Փորձագիտական խորհուրդ՝ կազմված թվով 15 իրավաբան գիտնականներից, դասախոսներից, փաստաբաններից, իրավախորհրդատուներից: Նույն հրամանով Պաշտպանը հաստատել է Խորհրդի կանոնադրությունը, որը սահմանում է Փորձագիտական խորհրդի նպատակներն ու խնդիրները, գործունեության կարգը:

Խորհրդի կազմում ընդգրկվել են իրավունքների պաշտպանության ոլորտում զգալի փորձառություն և պատշաճ գիտելիքներ ունեցող անձինք, որոնք իրենց մասնագիտական աջակցությունն են բերում Պաշտպանին իր գործունեության ընթացքում:

Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ՝ քննարկելու Պաշտպանի գործունեության ընթացքում ծագած առավել հրատապ և կարևոր խնդիրները, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված այն բողոքները, որոնք ունեն հասարակական հնչելություն և կապված են մարդկանց իրավունքների զանգվածային խախտումների հետ (Հյուսիսային պողոտա, Բյուզանդի փողոց, Դավմայի այգիներ և այլն):

Փորձագիտական խորհրդի նիստերի ժամանակ քննարկվել են, մասնավորապես, դատարանների կողմից թույլ տրված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքների քննարկման ընթացքում դատարանների հետ Պաշտպանի փոխհարաբերությունները, Պաշտպանի աշխատակազմը քաղաքացիական ծառայության մեջ ներառելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը, Հյուսիսային պողոտայի կառուցման կապակցությամբ անձանց սեփականությունից զրկելու խնդիրը մարդու իրավունքների համատեքստում: Պաշտպանի կողմից բարձր է գնահատվել Փորձագիտական խորհրդի՝ որպես խորհրդատվական մարմնի կարծիքն ու դիրքորոշումը վերոնշյալ հարցերի կապակցությամբ:

2.9. Աշխատանք բողոքների հետ



2.9.1. Ստացված բողոքների վիճակագրական վերլուծություն

2004թ. մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը Պաշտպանը ստացել է 1294 գրավոր բողոք 2346 քաղաքացուց: Պաշտպանը, Պաշտպանի տեղակալը և աշխատակազմի մասնագետներն ընդունել են 1337 քաղաքացու և պատասխանել մոտ 2300 հեռախոսազանգերի, տրամադրելով անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն:

Ստացված բողոքների ընդհանուր վերլուծությամբ և խմբավորմամբ հնարավոր է դարձել գնահատել իրավունքների ու ազատությունների պաշտպանվածության մակարդակը ըստ հասարակական կյանքի բնագավառների, անդրադառնալ այն խնդիրներին, որոնք կան և լուծում են պահանջում:


Բողոքները վերաբերել են հետևյալ բնագավառներին.

1. քաղաքացիական իրավունք և գույքի կառավարում	256
2. քրեական իրավունք	218
3. սոցիալական ապահովություն	189
4. վարչական իրավունք և բնակարանային հարցեր	126
5. աշխատանքի իրավունք	108
6. քրեադատավարական իրավունք	83
7. տեղական ինքնակառավարում	65
8. կրթություն, գիտություն	58
9. քրեակատարողական իրավունք	47
10. զինծառայողների և պետծառայողների իրավունք	35
11. տնտեսական իրավունք, հարկեր և տուրքեր, սպառողների իրավունքների պաշտպանություն	29
12. սահմանադրական և միջազգային իրավունք	24
13. ընտանեկան իրավունք և հաշմանդամների իրավունքների պաշտպանություն	20
14. առողջապահություն	10
15. ազգային փոքրամասնությունների և արտասահմանցիների իրավունքների պաշտպանություն	4
16. այլ	22



Քննարկման ընդունված բողոքները հիմնականում վերաբերել են հետևյալ խախտումներին՝

1. արդար դատական քննության բացակայություն /դատարաններ/՝ 132,
2. դատական պաշտպանություն ստանալու իրավունքի խախտումներ /դատարաններ/՝ 19,
3. ԴԱՀԿ ծառայության դեմ՝ 40,
4. ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման դեպքեր /ոստիկանություն/՝ 7,
5. բռնությունից և դաժան անմարդկային վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտում /ոստիկանություն/՝ 52,
6. արդար քննության, մեղադրանքից արդյունավետ պաշտպանվելու իրավունքի խախտումներ /դատախազություն, քննչական մարմիններ/՝ 67,
7. սոցիալական իրավունքի խախտումներ /սոցիալական ապահովության մարմիններ/՝ 9,
8. բնակարան ունենալու իրավունքի խախտումներ /քաղաքապետարաններ, քաղապետարաններ/՝ 38,
9. սեփականության իրավունքի և տնտեսական այլ իրավունքների խախտումներ /տեղական ինքնակառավարման մարմիններ/՝ 47,
10. գույքային այլ իրավունքների խախտումներ /կադաստր/՝ 22:



Ըստ տարածքների՝ ստացված բողոքները բաշխվել են հետևյալ կերպ.

1. Երևան քաղաք՝	782
2. Արագածոտնի մարզ՝	43
3. Արարատի մարզ՝	47
4. Արմավիրի մարզ՝	53
5. Գեղարքունիքի մարզ՝	61
6. Լոռու մարզ՝	75, որից Վանաձոր քաղաք՝ 41
7. Կոտայքի մարզ՝	59
8. Շիրակի մարզ՝	97, որից Գյումրի քաղաք՝ 49
9. Սյունիքի մարզ՝	32
10. Վայոց ձորի մարզ՝	12
11. Տավուշի մարզ՝	22
12. Այլ վայրեր՝	11

Պետք է նկատի ունենալ, որ մարզերից ստացված բողոքների քանակը համեմատաբար քիչ է այն պատճառով, որ Պաշտպանը մարզերում չունի ներկայացուցչություններ, և հաստատության գոյության և իրավասությունների մասին բնակչությունն այստեղ ավելի քիչ է տեղեկացված:

Երևան քաղաքի բնակիչներից ստացված բողոքների մեծ թիվը պայմանավորված է նաև մայրաքաղաքի դատարանների, քննչական մարմինների թվով, ինչպես նաև այն գործընթացներով, որոնք կապված են մայրաքաղաքի կառուցապատման ծրագրի իրականացման նպատակներով քաղաքացիների գույքի օտարման հետ, և այդ առումով պատահական չէ, որ մեծ թիվ են կազմում քաղաքապետարանի դեմ ուղղված բողոքները:

2.9.2. Բողոքների ուսումնասիրման ու հետազոտման ընթացքը, ձեռնարկված միջոցառումները, ստացված արդյունքները

Պաշտպանին հասցեագրված բոլոր բողոքները ներկայացվում են Պաշտպանին:

❖ Ծանոթանալով բողոքի բովանդակությանը և ներկայացված պահանջին, Պաշտպանը՝ մեկամսյա ժամկետում որոշում կայացնելու նպատակով հանձնարարում է աշխատակազմի համապատասխան մասնագետին ***ուսումնասիրել*** բողոքը և բողոքում բարձրացված խնդիրների վերաբերյալ ***հավաքել տեղեկություններ*** հարցումների, այցելությունների, դիտարկումների, իրավական ակտերի ուսումնասիրման միջոցով և օրենքով թույլ տրված այլ եղանակներով:

❖ Պաշտպանը ծանոթանում է ուսումնասիրության արդյունքներին և համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ ***որոշում է կայացնում***.

- բողոքը քննարկման ընդունելու մասին,
- այլ մարմին ուղարկելու մասին,
- իրավունքների պաշտպանության հնարավորությունները բացատրելու մասին,
- բողոքը քննարկման չընդունելու մասին:

❖ ***Քննարկման ընդունված բողոքով իրականացված հետազոտման*** տվյալների հիման վրա ***որոշում է կայացվում*** պետական և տեղական ինքնակառավարման մարմնի /պաշտոնատար անձի/ գործողություններում մարդու իրավունքների ***խախտում հայտնաբերելու կամ չհայտնաբերելու մասին***:

Մարդու իրավունքների ***խախտում չհայտնաբերելու*** դեպքում բողոքի քննարկումը համարվում է ավարտված, ինչի մասին բողոքատուն տեղեկացվում է որոշումն ընդունելու օրվանից հետո 5 օրվա ընթացքում:


Մարդու իրավունքների ***խախտում հայտնաբերելու*** դեպքում այդ իրավունքը վերականգնելուն ուղղված առաջարկ է ներկայացվում պատկան մարմնին, այդ մասին տեղեկացնելով դիմումատուին:

❖ Մարդու իրավունքների հայտնաբերված **խախտումները վերականգնելու** գործընթացում հնարավոր են հետևյալ զարգացումները.

1. պատկան մարմնի կողմից Պաշտպանի առաջարկի հետ համաձայնվելու և բողոքատուի խախտված իրավունքը վերականգնելու դեպքում բողոքի քննարկումն ավարտվում է,
2. եթե պատկան մարմինը չի համաձայնում կամ չի արձագանքում Պաշտպանի առաջարկին կամ տարբեր պատճառաբանություններով ձգձգում է հարցի լուծումը, Պաշտպանը դիմում է օրենքով նախատեսված այլ քայլերի, և բողոքով իրականացվելիք աշխատանքները չեն ավարտվում, քանի դեռ խախտված իրավունքը տվյալ մարմինների կողմից չի վերականգնվել: Այդ է պատճառը, որ նախորդ տարի ստացված տասնյակ բողոքներ, որոնցով որոշումներ են կայացվել իրավունքի խախտումների հայտնաբերելու մասին և համապատասխան առաջարկներ են ներկայացվել, չեն համարվում ավարտված:

❖ Պաշտպանին հասցեագրված 1294 գրավոր դիմում-բողոքների ուսումնասիրման և հետազոտման արդյունքներով ստացված **վիճակագրական տվյալներն** այսպիսին են`

1. ընդունված են քննարկման	471
2. դիմողին ներկայացված են իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները	150
3. փոխանցված են այլ մարմնի	79
4. ենթակա են լրացման	53
5. չեն ընդունվել քննարկման	541



Ուսումնասիրության արդյունքում դիմումները **չեն ընդունվել քննարկման** տարբեր պատճառներով, որոնք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. հարցը, ենթակա լինելով լուծվելու բացառապես **դատական կարգով**, անցել է դատական բոլոր ատյաններով. առկա են դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռները,
2. բողոքները վերաբերվել են քաղաքացիների իրավունքների խախտումներին **մասնավոր սեկտորում**, ինչպես նաև քաղաքացիների միջև եղած վեճերին,
3. քաղաքացին բողոք է ներկայացրել ոչ կոնկրետ, **ընդհանուր** ձևով և`
 - ա/ չի նշել խախտում թույլ տված կոնկրետ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձին,
 - բ/ որևէ պահանջ չի առաջադրել,
 - գ/ չի նշել իր հասցեն, հեռախոսահամարը, և որևէ հնարավորություն չի եղել կապվել նրա հետ ու լրացնել թերի տվյալները,
4. օրենքով նախատեսված այլ պատճառներ, օրինակ` բողոքում բարձրացված հարցերը դատական գործընթացի առարկա են հանդիսացել:

❖ Այն, որ քննարկման չընդունված բողոքները զգալի թիվ են կազմում` **541**, հետևանք է նաև այն բանի, որ հասարակությունը և առավել ևս խոցելի խմբերի ներկայացուցիչները թյուր պատկերացումներ ունեն Պաշտպանի լիազորությունների և գործունեության շրջանակների մասին, այսինքն` այս կառույցից ազգաբնակչության սպասելիքները շատ ավելին են, քան Պաշտպանին օրենսդրությամբ տրված իրավասությունները:

❖ Քննարկման շրջումված բողոքներով ուսումնասիրություններ, այնուամենայնիվ, կատարվել են: Ուսումնասիրությունները ներառել են՝

- դիմումատուի ընդունելություն կամ հանդիպում նրա հետ, եթե նա գտնվելիս է եղել անազատության մեջ, բանակում կամ հեռավոր բնակավայրում,
- հարցում այն մարմին կամ պաշտոնատար անձին, որի դեմ եղել է բողոքը, անհրաժեշտության դեպքում նաև հանդիպում և հարցի քննարկում,
- բարձրացված հարցով դիմումատուին օժանդակելու հնարավորությունների որոնում,
- բողոքների հիմքում ընկած օրենսդրական թերությունների կամ բացերի վերլուծություն ու առաջարկությունների մշակում:

Քննարկման շրջումված բողոքների դիմումատուները Պաշտպանի, Պաշտպանի տեղակալի կամ աշխատակազմի աշխատակիցների մոտ ընդունելության ժամանակ հնարավորություն են ունեցել ներկայացնել խնդիրն անձամբ, ստանալ իրենց բողոքը չքննարկելու պատճառների պարզաբանում: Անհրաժեշտության դեպքում նրանց տրվել է նաև մասնագիտական խորհրդատվություն:

❖ Թեև մասնավոր սեկտորի աշխատանքային հարաբերություններում գործատուների կողմից մարդու իրավունքների խախտումները ենթակա չեն Պաշտպանի քննարկմանը, բայց բողոքների մեծ թիվը և մարդու իրավունքների խախտումների առավել աղաղակող դրսևորումների փաստը հիմք է ծառայել մասնավոր սեկտորում եղած աշխատանքային հարաբերություններում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ օրենսդրական և իրավակիրառական պրակտիկայի վերլուծության համար /տես հավելված 2/:

❖ Քննարկման շրջումված դիմում-բողոքների շարքում զգալի թիվ են կազմում քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանցից ստացված դիմումները, որոնց հիմնական մասը վերաբերում է իրենց վերագրվող մեղադրանքի ապացուցված չլինելուն: Այդպիսի բողոքները քննարկման չեն ընդունվել՝ նկատի ունենալով, որ ապացույցների քննարկումը վերաբերում է դատարանի իրավասությանը:

Սակայն բոլոր դեպքերում կարևորվել է ազատագրված վայրերում մնան անձանց հետ հանդիպելը, քանի որ անկախ բողոքի բովանդակությունից նրանք միշտ էլ կարիք ունեն իրենց գործի, իրենց իրավիճակի վերաբերյալ ստանալ որոշակի խորհրդատվություն, որովհետև նրանք չեն օգտվում փաստաբանների ծառայությունից /հիմնականում դրանք եղել են այնպիսի մեղադրյալներ, ովքեր չեն օգտվել դատապաշտպանի ծառայությունից՝ դատավարական իրավունքի մասին անհրաժեշտ գիտելիքներ չունենալու պատճառով/:

❖ Քննարկման ընդունված 471 բողոքներից ավարտվել է 245 բողոքների հետազոտումը, այդ թվում՝

- | | |
|---|------|
| 1. քննարկման արդյունքներով ներկայացվել է առաջարկություն | 93, |
| 2. քննարկումը դադարեցվել է՝ | |
| ○ դատարան դիմելու հետ կապված | 33, |
| ○ մարդու իրավունքների խախտման կամ պահանջի բացակայության պատճառով | 110, |
| ○ բողոքողի դիմելով՝ կապված բողոքում նշված հանգամանքների փոփոխության հետ | 9, |

ընդ որում՝

դրական արդյունքով են ավարտվել 85:

❖ Բողոքների ուսումնասիրման ու քննարկման ընթացքում և իրավունքների վերականգնմանն ուղղված առաջարկներով Պաշտպանը տարբեր պետական ատյաններ է ուղարկել 679 նամակներ, այդ թվում՝

- | | |
|--|-----|
| ○ ՀՀ Նախագահին | 2 |
| ○ ԱԺ /օրենսդրական փոփոխությունների առաջարկներ/ | 2 |
| ○ ՀՀ Վարչապետին | 2 |
| ○ Նախարարություններ | 103 |
| ○ Գլխավոր դատախազին | 41 |
| ○ Զինվորական դատախազին | 4 |
| ○ Դատախազություններ | 54 |
| ○ Դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողին | 54 |
| ○ ՀՀ Վճռաբեկ դատարան | 5 |

○ ՀՀ Վերաքննիչ դատարան	8
○ Առաջին ատյանի դատարաններ	22
○ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն	2
○ _-//- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	38
○ _-//- Հարկային պետական ծառայություն	2
○ _-//- Մաքսային պետական կոմիտե	4
○ _-//- Միգրացիայի և փախստականների վարչություն	14
○ _-//- ՀՀ ոստիկանություն	56
○ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ	16
○ Սոցիալական ծառայության տարածքային կազմակերպություններ	6
○ Կոմունալ տնտեսության ծառայություններ	7
○ Երևանի քաղաքապետարան	67
○ Մարզպետարաններ	60
○ Թաղապետարաններ	39
○ Համայնքների ղեկավարներին	12
○ Բուհերի ղեկավարներին	8
○ Այլ	51

❖ Որոշ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք չեն ընթրնում մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը: Այդ է պատճառը, որ այս կամ այն մարմինը, պաշտոնատար անձը երբեմն ուշացնում կամ նույնիսկ անտեսում և ընդհանրապես չեն արձագանքում Պաշտպանի գրությանը կամ առաջարկին: Այսպես, Պաշտպանի կողմից Երևանի քաղաքապետին հասցեագրած նամակների մի մասի պատասխանները ստացվում են ուշացումներով, այսինքն՝ չեն պահպանվում Պաշտպանի կողմից տրված ժամկետները: Ստացված պատասխանները, որպես կանոն, անբավարար են, քանի որ առաջադրված հարցերը լրիվ չեն պարզաբանվում: Երևանի քաղաքապետին հասցեագրած ոչ մի նամակին քաղաքապետն անձամբ չի պատասխանել:

❖ Ամենևին չակնկալելով, որ Պաշտպանի մեկամյա աշխատանքը իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում կրեթի համակարգային կտրուկ և հեղափոխական փոփոխությունների, այնուամենայնիվ, չի կարելի դրական չհամարել այն, որ բոլոր մարմինները, որոնց հետ Պաշտպանն առնչվել է իրավունքի պաշտպանության վերաբերյալ բողոքներով, գիտեն, որ իրենց կողմից իրավունքի կամ ազատության խախտման դեպքում առաջանում է Պաշտպանի միջամտության սպառնալիքը: Սա արդեն իսկ զսպող, կանխարգելող գործոն է, որի արդյունավետությունը, թերևս, ավելի ու ավելի զգալի կդառնա Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետագա գործունեության ընթացքում:

Պաշտպանի նախորդ տարվա գործունեությունը նպատակաուղղված է եղել նաև հաստատության կայացմանը, նրա ճանաչմանը՝ որպես մարդու իրավունքների խախտումները վերացնելուն միջամտելու, այդ իրավունքների վերականգնմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու լիազորություններ ունեցող մարմին: Պաշտպանն ու իր աշխատակիցները կազմակերպել ու անց են կացրել հանդիպումներ, քննարկումներ համապատասխան մարմիններում, պաշտոնատար անձանց հետ՝ ընդունելով, որ նորաստեղծ կառույցը նաև իր տեղի ու դերի արմատավորման խնդիր ունի:

Այսպես, ոստիկանության համակարգում գիտեն, որ որևէ անձի ապօրինի բերման ենթարկելը, անազատության մեջ պահելը, անձի նկատմամբ ապօրինի գործողությունը կարող է հայտնի դառնալ Պաշտպանին և Պաշտպանը կարող է միջամտել, որ Պաշտպանի «Արագ արձագանքման խումբը» անսպասելի հայտնվում է հենց այն տեղում, որտեղ թույլ է տրվում կամ կարող է թույլ տրվել իրավունքի խախտում:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում տեղյակ են, որ կատարողական գործողությունների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումների, թերացումների վերաբերյալ բողոքներ են հասնում Պաշտպանին, և իրենք հարկադրված պետք է լինեն առնվազն պարզաբանումներ տալ դրանց վերաբերյալ:

Դատական համակարգում տեղյակ են, որ Պաշտպանն անց է կացնում դատական նիստերի դիտարկումներ, և նկատված դատավարական խախտումները կարող են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք ծառայել:

Երևանի քաղաքապետարանում տեղյակ են, որ հատկապես հողահատկացման բնագավառի խախտումները պահվում են Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Ռեզնանսային ոստիկանությունում գիտեն, որ առանձնակի ուշադրություն է դարձվում ոստիկանության պահման վայրերում նախնական կալանքի վերցված անձանց պահելու օրինականությանը:

❖ Որպես հետևանք, **դրական արդյունքներ** են արձանագրվել ոչ միայն խախտված իրավունքների վերականգնման փուլում, այլև բողոքների ուսումնասիրման և հետազոտման փուլերում:

Այսպես, **ուսումնասիրված, բայց քննարկման չընդունված** 541 բողոքներից 72-ում նշված փաստերին Պաշտպանի կողմից պատկան մարմինների ուշադրություն հրավիրելը և համապատասխան հարցապնդումները բերել են նրան, որ վատ վարչարարության հետևանքով թույլ տրված վրիպումները, որոնք բերել էին բողոքներում նշված իրավունքների խախտումներին, համապատասխան մարմինների կողմից վերացվել են և իրավունքները վերականգնվել են, ուստի այլևս անհրաժեշտություն չի եղել որոշում կայացնել բողոքը քննարկման ընդունելու մասին:

Դրական արդյունքներ են արձանագրվել նաև դիմողների համաձայնությամբ **իրավասու մարմիններին փոխանցված** բողոքների հետ կապված, երբ այդ մարմինները՝ Պաշտպանի առաջարկության համաձայն, իրենց լիազորությունների շրջանակներում, վերականգնել են դիմողի խախտված իրավունքը: Այդ մարմիններից և դիմողներից ստացված տեղեկությունների հիման վրա, փոխանցված 79 բողոքներից վերականգնվել են 27 բողոքներում նշված իրավունքները: Պակաս կարևոր չեն իրավական խորհրդատվությունները խախտված իրավունքները պաշտպանելու հնարավորությունների վերաբերյալ, ինչը բավարարել է ավելի քան 46 դիմումատուի:

Որպես բողոքների քննարկման **դրական արդյունքներ** արձանագրվել են.

- աշխատանքից ապօրինի ազատված անձին աշխատանքում վերականգնելը,
- ապօրինի զինվորական ծառայության գորակոչվածին գորացրելը,
- հողի նկատմամբ անձի սեփականության իրավունքի վերականգնումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու իրավունքի վերականգնումը,
- անազատության պայմաններում ապօրինի պահելը դադարեցնելը,
- նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն անհիմն ճանաչելը,
- խափանման միջոց ընտրված կալանքը վերացնելը և այլն:

Այսպիսով, Պաշտպանի և պետական ու տեղական ինքնակառավարման որոշ մարմինների փոխգործակցությունը տալիս է լավ արդյունքներ՝ հատկապես այն դեպքերում, երբ բողոքը վերաբերում է վատ վարչարարության հետևանքով տեղի ունեցած խախտումներին:

Այս ամենը վկայում է այն մասին, որ մարդու իրավունքների գերակայության ընդունումը այն արդյունավետ ճանապարհն է, որն առանց ֆինանսական կամ նյութական ներդրումների թույլ կտա շեշտակիորեն բարձրացնել մարդու իրավունքների պաշտպանվածության աստիճանը:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ գնահատականներում Պաշտպանն առաջնորդվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նորմերը ամրագրող ՄԱԿ-ի և Եվրախորհրդի այնպիսի հռչակագրերով ու դաշնագրերով, ինչպիսիք են.

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիան և դրան կից արձանագրությունները,
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ կից կամընտիր արձանագրություններով,
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը,
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան,
- Խոշտանգումների և դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիան,
- Քաղաքացիական դատավարության մասին կոնվենցիան,
- Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիան,
- Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին կոնվենցիան,
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան,
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան:

Մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող սկզբունքները, որոնք ամրագրված են վերը թվարկված միջազգային փաստաթղթերով, հիմնականում ներառված են ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում: Ելնելով դրանից, սույն զեկույցում իրավունքները դիտարկվում են ըստ ՀՀ Սահմանադրության:

3.1. Կյանքի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Մահապատիժը՝ մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար:
(ՀՀ Սահմանադրություն, հոդված 17)

❖ Մարդու կյանքի կամ առողջության դեմ ցանկացած ոտնձգություն ՀՀ քրեական օրենսգրքով որակված է որպես քրեորեն պատժելի հանցագործություն: Մահապատիժը, որպես պատժատեսակ, նոր քրեական օրենսգրքով չի նախատեսված, իսկ նախկին քրեական օրենսգրքի մահապատիժ նախատեսող հոդվածներով դատապարտված անձանց նկատմամբ սահմանված մահապատիժը, որը կիրառված չի եղել, փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

«ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 18.04.03թ. օրենքով պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու սկզբունքին մահապատիժ դատապարտված անձանց մասով տրվել է իրավիճակային լուծում՝ օրենքի հետադարձ ուժը մահապատիժի վերացման մասին կիրառելի չի համարվել ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն, տեղորոշական ակտ, մանկահասակների բռնաբարություն կատարած անձանց նկատմամբ: Մնացած կատեգորիաների անձանց նկատմամբ սահմանված մահապատիժները, տվյալ օրենքի համաձայն, ենթակա են եղել դատարանների միջոցով վերանայման և ցմահ ազատազրկմամբ փոխարինման, ինչը և արվել է /օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մաս և 6-րդ հոդված/:

Ըստ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի, հոդվածում թվարկված կատեգորիաների անձանց նկատմամբ նշանակված մահապատիժները ենթակա են եղել իրականացման: Խնդիրը լուծվել է այլ ճանապարհով՝ ՀՀ Նախագահի 2003թ. օգոստոսի 1-ի հրամանագրով այդ անձանց ներում է շնորհվել և մահապատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

Նախկին քրեական օրենսգրքով մահապատժի դատապարտված անձինք իրավացիորեն բողոքում են, որ տվյալ օրենքով խախտվել է հանցագործության պահին գործող օրենքով նախատեսված պատժից ավելի ծանր պատիժ ստանալուց ազատ լինելու իրենց սահմանադրական իրավունքը:

Նախկին քրեական օրենսգրքով ցմահ ազատազրկում նախատեսված չի եղել: Ազատազրկման առավելագույն ժամկետը սահմանված է եղել 15 տարի, իսկ մահապատիժը ներման կարգով ազատազրկմամբ փոխարինելիս՝ 20 տարի: Հետևաբար, երբ նոր օրենքով մահապատիժը վերացվել է և նույն օրենքով հռչակվել է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի հետադարձ ուժ ունենալը որպես սկզբունք /քրեական օրենսգրքի հոդված 13/, նախկին օրենքով մահապատժի դատապարտված անձինք իրավունք ունեն պահանջելու, որ իրենց նկատմամբ ազատազրկում սահմանվի նախկին քրեական օրենսգրքով նախատեսված ազատազրկման առավելագույն չափից ոչ ավելի:

Այդ հարցի ճիշտ լուծումը գտնելու նպատակով Պաշտպանի կողմից կազմակերպվել են քննարկումներ Արդարադատության նախարարության, դատախազության, Ազգային ժողովի ներկայացուցիչների հետ: Այդ քննարկումների արդյունքում արվել է հետևություն, որ վերը շարադրած խնդիրը կարելի է լուծել համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ:

❖ Հանրապետությունում սպանության, մարմնական վնասվածքի դեպքեր, թեկուզ և ունենալով նվազման տենդենց, այնուամենայնիվ տեղի են ունենում և դրանց քննության լրիվության և օբյեկտիվության ապահովումը, ժամանակին ու մինչև վերջ բացահայտումն է, որ կհանգեցնի նման դեպքերի բացառմանը, յուրաքանչյուրի մոտ իր կյանքի ապահովության զգացողության ամրապնդմանը:

Սպանությունների գործերով բողոքներ, դժգոհություններ ստացվում են ինչպես մեղադրյալներից, այնպես էլ տուժողների իրավահաջորդներից: Մեղադրվող կողմից բողոքները հիմնականում վերաբերում են իրենց դատավարական իրավունքների խախտումներին, մեղադրանքի արհեստական ապացույցներին և ընդհանրապես ոչ օբյեկտիվ քննությանը: Տուժող կողմը հիմնականում բողոքում է քննության ոչ լրիվ և բազմակողմանի լինելուց, որի հետևանքով պատասխանատվության են կանչվում ոչ բոլոր հանցավորները:

Այսպիսի բողոքների դեպքում Պաշտպանը հնարավորություն ունի միջամտել և միջամտում է, եթե ակնհայտ է դատավարական իրավունքի խախտումը՝ անձին մերժել է տուժողի իրավահաջորդ ճանաչելը, նրան՝ որպես տուժողի իրավահաջորդի, գործի նյութերը չեն տրամադրվել ծանոթանալու համար, մեղադրյալը զրկվել է պաշտպան ունենալու իրավունքից, խախտվել են կալանքի տակ պահելու՝ օրենքով սահմանված ժամկետները և այլն:

Դրան զուգահեռ եղել են և կան բողոքներ, որոնցում շարադրված են փաստեր նախաքննական մարմնի ոչ օբյեկտիվության, դատավարական խախտումների, մեղադրյալի իրավունքների սահմանափակումների մասին:

Մեծ է դժգոհությունը հատկապես Ջինվորական դատախազության քննած գործերից: Բողոքում են, որ այստեղ չի ապահովվում քննության լրիվությունը և օբյեկտիվությունը, գործով անցնող անձինք հաճախ ապօրինի պահվում են անազատության մեջ:

Այդ հանգամանքի վրա Պաշտպանի կողմից հրավիրվել է ՀՀ գլխավոր դատախազի ուշադրությունը:

3.2. Ազատության և անձեռնխելիության իրավունք

Յուրաքանչյուր որ ունի ազատության և անձեռնխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: (ՀՀ Սահմանադրություն, հոդված 18)

Որպես խափանման միջոց կալանքի կիրառումը, առանց դրա հիմնավորման, շարունակում է մնալ քննչական մարմինների պրակտիկայում: Թեև կալանավորման թույլտվությունը տրվում է դատարանի կողմից, այնուամենայնիվ կալանավորման նախաձեռնողը նախաքննական մարմինն է՝ հաճախ նաև մեղադրանքը հաստատող բավարար տվյալների բացակայության պայմաններում: Դատարանները կալանավորման թույլտվություններ տալիս չեն ստուգում մեղադրանքի հիմնավորվածությունը, անտեսում են խափանման միջոցը կալանք ընտրելու հիմք տվող տվյալների բացակայությունը, հազվադեպ է կիրառվում գրավը որպես նախնական կալանքին փոխարինող այլընտրանքային խափանման միջոց:

Պաշտպանին հաճախ են դիմում ոստիկանության և քննչական մարմինների կողմից վկային, տուժողին, կասկածյալին կամ մեղադրյալին քննչական մարմին կանչելու դատավարական կարգը չպահպանելու վերաբերյալ բողոքներով՝ կանչվող անձին ծանուցագիր չի ուղարկվում, կանչվողը չի ծանուցվում, թե որ գործով և ինչ կարգավիճակով է կանչվում:

Ըստ բողոքատուների և քննարկման ընդունված դիմումների հետազոտման արդյունքների, քիչ չեն այն դեպքերը, երբ քրեական հետապնդման մարմնի ոչ հիմնավոր հանձնարարությամբ անձը կարող է բերման ենթարկվել և նույնիսկ պահվել անազատության մեջ առանց բերման ենթարկելու մասին որոշման, երբ այս կամ այն հանցագործության մեջ կասկածվողին, որի հանցանքն ապացուցող բավարար տվյալներ չկան, վերագրվում է վարչական իրավախախտում, և նա դատարանով կալանավորվում է՝ նրա հետ, այսպես կոչված՝ «օպերատիվ աշխատանքներ» իրականացնելու նպատակով:

Մի շարք գործերով, երբ ակնհայտ սխալ է եղել որպես խափանման միջոց ընտրված նախնական կալանքը, Պաշտպանի կողմից համապատասխան առաջարկ է ներկայացվել այն փոխելու մասին: Առաջարկը բավարարվել է միայն եզակի դեպքերում:

3.3. Խոշտանգումներից, դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և պատժից ազատ լինելու իրավունք

Մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 19)

Այս իրավունքի խախտումները հիմնականում կապվում են անձին հանցանք կամ վարչական իրավախախտում կատարելու կասկածով կամ փաստով ոստիկանություն կամ քննչական մարմին բերման ենթարկելու, անազատության մեջ պահելու և հարցաքննությունների հետ:

Ստացված դիմում-բողոքներում դիմումատուները պնդում են, որ ոստիկանությունում վերջ չի տրվել անհիմն բերման ենթարկելու, անազատության մեջ ապօրինի պահելու, այս կամ այն իրավախախտումը կատարած լինելու վերաբերյալ խոստովանական ցուցմունք կամ բացատրություն կորզելու, մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելու, նաև բռնություններ կիրառելու արատավոր պրակտիկային:

Այն քրեական գործերով, որոնցով նյութերի նախապատրաստումն իրականացվել է ոստիկանության կողմից, առկա են գործով անցնող անձանց բողոքներն այն մասին, որ խոստովանական բացատրություններ իրենք գրել են ապօրինի անազատության մեջ պահվելու պայմաններում և բռնության ու ահաբեկման ազդեցության տակ: Տվյալ անձանց կողմից այդ մասին հայտարարվում է ինչպես նախաքննության ընթացքում՝ նախաքննական մարմնին, այնպես էլ դատաքննության ընթացքում՝ դատարանին: Նման հաղորդումները, հայտարարությունները ոչ միայն լիարժեք չեն ստուգվում, այլ նաև կատարվում են լոկ ձևական քննչական գործողություններ և այն էլ փաստը ժխտելու նպատակով միայն:

Հանրապետության գլխավոր դատախազին, մարզերի դատախազներին հասցեագրված նման բողոքներով առանձին վարույթ չի կազմվում, հիմնականում բողոքի ստուգումը հանձնարվում է գործը քննող քննիչին նույնիսկ այն դեպքում, երբ բողոքարկվում են ~~հան~~ հենց տվյալ քննիչի գործողությունները: Ծայրահեղ դեպքում, երբ բողոքի ստուգումը հանձնարվում է դատախազական մեկ այլ ստորաբաժանման, դարձյալ չի երաշխավորվում բողոքի ստուգման օբյեկտիվությունը: Դատարանները դատաքննության ընթացքում շրջանցում և չեն քննարկում նման բողոքները:

Նման գործերից առավել բնութագրական է Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ քրեական գործը:

Գ. Վիրաբյանն առանց որևէ օրինական հիմքի Արտաշատի ոստիկանության բաժին բերման է ենթարկվել իրենց գյուղից 23.04.04թ., ժամը 14.30-ին: Ոստիկանության բաժնում ոստիկանության աշխատակիցը Վիրաբյանին վիրավորել, նվաստացրել, հայհոյել և հարվածել է: Չդիմանալով նվաստացումներին, Վիրաբյանն իր հերթին հարվածել է ոստիկանության այդ աշխատակցին: Այնուհետև ոստիկանությունում նրան հասցվել է մարմնական նվազ ծանր վնասվածք:

Դատախազության կողմից քրեական գործ է հարուցվել Վիրաբյանի նկատմամբ՝ ոստիկանության աշխատակցին մարմնական վնասվածք հասցնելու համար: Քրեական գործով օրինական են համարվել ոստիկանության աշխատակցի բոլոր գործողությունները, և որևէ գնահատականի չի արժանացել այն փաստը, որ ոստիկանությունն ապօրինի բերման ենթարկված Վիրաբյանը մարմնական վնասվածք ստացել է այդ հաստատությունում, և հաստատության որևէ աշխատակից դրա համար պատասխանատվություն չի կրել:

Տվյալ դեպքին Պաշտպանի գնահատականը միանշանակ է՝ տեղի ունեցածը պետք է որակել որպես դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք Վիրաբյանի նկատմամբ, քանի որ հաստատության ղեկավարությունը պատասխանատու է հաստատություն տարված կամ հրավիրված անձի առողջության և անվտանգության համար: Այդ անձի վարքագիծը նման հաստատությունում հիմք չէ և չի արադարացնում նրան ծեծի ենթարկելը: հաստատության ղեկավարությունը և աշխատակիցներն ունեն նաև հանդուրժող լինելու պարտավորություն:

Տվյալ դեպքով Պաշտպանը հանդիպում է ունեցել ոչ միայն Վիրաբյանի, այլ նաև մարզի դատախազի, մարզի և բաժնի ոստիկանության ղեկավարության հետ, անց է կացվել դեպքի հանգամանքների համատեղ քննարկում և ենթադրվել է, որ կապահովվի քննության օբյեկտիվությունը: Սակայն դրական տեղաշարժ չի նկատվել: Դա նկատի ունենալով, հանրապետության գԳ-լխավոր դատախազին առաջարկվել է գործի քննությունը հանձնարարել քննչական այլ մարմնի, ինչը բավարարվել է, և քննությունը հանձնարարվել է Էրեբունի համայնքի դատախազությանը: Սակայն այստեղ նույնպես դրական ոչինչ չի արվել՝ դարձյալ մեղադրվել է նույն Վիրաբյանը, և արդեն իսկ կազմված է եղել մեղադրական եզրակացություն գործը դատարան ուղարկելու համար: Պաշտպանի միջամտությունից հետո է միայն, որ հանրապետության գԳ-լխավոր դատախազի ցուցումով կարճվել է գործի վարույթը:

Պաշտպանը ոստիկանության այլ բաժիններում նույնպես արձանագրել է անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ բռնություն կիրառված լինելու երկու դեպք, որոնք սակայն հետևանք չեն առաջացրել, քանի որ բռնության ենթարկվածներն իրենք են ժխտել փաստը:

Պաշտպանին հասցեագրած բողոքներում նշվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով ամրագրված այն սկզբունքը, որ «Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարություններն իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում **օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի վարույթն իրականացնող մարմինը**», չի իրականացվում, խախտումները չեն վերացվում, խախտում թույլ տված պաշտոնատար անձինք պատասխանատվության չեն ենթարկվում:

Այս ամենը բերում է այն համոզման, որ կան լուծում պահանջող համակարգային խնդիրներ: Անհրաժեշտ է, որ դատարանների կողմից ցուցաբերվի անհանդուրժողականություն, և նման խախտումները դառնան հատուկ քննարկման առարկա, ինչը կարգելի քրեական հետապնդման մարմինների առանձին ներկայացուցիչների կատարել նման խախտումներ և մարդու իրավունքների և ազատությունների ապօրինի սահմանափակումներ:

3.4. Ազատ տեղաշարժման իրավունք

Յուրաքանչյուր քաղաքացի ունի Չանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու եւ բնակավայր ընտրելու իրավունք: (ՀՀ Սահմանադրություն, հոդված 22)

❖ Պաշտպանի գործունեության սկիզբը համընկել է մարտ-ապրիլ ամիսներին հանրապետությունում անցկացվող հանրահավաքների ժամանակաշրջանի հետ:

Ընդդիմության հանրահավաքները, որպես ընտրողների հետ հանդիպումներ, սկսվել և անց են կացվել տարբեր մարզերում դեռևս փետրվարի սկզբներից: Իշխանությունների միջամտություն նման հանրահավաքներին չի եղել:

Իշխանությունների առաջին միջամտությունը հանրահավաքներին տեղի ունեցավ մարտի վերջին Գյումրի քաղաքում, որի արդյունքում ձերբակալվեցին հանրահավաքի մասնակիցներ, հարուցվեցին քրեական գործեր:

Գյումրիի հանրահավաքի կապակցությամբ Պաշտպանը եղել է Շիրակի մարզում, հանդիպում է ունեցել ձերբակալվածների, նրանց դեմ վկայողների, մարզի դատախազի և ոստիկանության պետի հետ և այնուհետև իր գնահատականները տեղի ունեցածին գրավոր ներկայացրել է հանրապետության գլխավոր դատախազին և մարզի դատախազին՝ առաջարկելով վեր հանել այն բացթողումները, որոնք թույլ են տվել իշխանության տեղական մարմինները՝ կապված այդ դեպքերի հետ:

Ապրիլին մայրաքաղաքում անցկացված հանրահավաքների առնչությամբ Պաշտպանը ոստիկանության գործողություններում արձանագրել է մարդու իրավունքների մի շարք խախտումներ:

Հանրահավաքների օրերին արձանագրվել են մարզերից դեպի մայրաքաղաք հասարակական տրանսպորտի տեղաշարժի սահմանափակումներ ոստիկանության կողմից, որով խախտվել է հանրապետությունում քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը:

Այդ օրերին Պաշտպանն այցելել է մարզեր, ավտոճանապարհներին դիտարկել է ոստիկանության ուժերի միջոցով իրականացվող ծառայությունը, հանդիպել է ուղևորատար մեքենաների վարորդների հետ, եղել է ավտոհավաքակալաններում:

Այսպես, Էջմիածնի ուղևորատար տրանսպորտի հավաքակալաններից մեկում օրվա կեսին կանգնած են եղել բոլոր ուղևորատար ավտոմեքենաները: Պարկի տնօրենը խուսափել է Պաշտպանի հետ հանդիպումից, իսկ ավելի ցածր պաշտոնի պատասխանատուները՝ այն հարցին, թե ինչու մեքենաները երթուղի դուրս չեն եկել, պատասխանել են, թե իբր անց է կացվում մեքենաների տեխնիկական ստուգատես:

Ստեղծված իրավիճակի մասին տեղեկացվել է Կապի և տրանսպորտի նախարարը, որին առաջարկվել է միջամտել և ապահովել տրանսպորտի երթևեկությունը միջմարզային ճանապարհներին: Հանրապետության ոստիկանության պետից պահանջվել է պարզաբանում՝ միջմարզային ճանապարհներով դեպի մայրաքաղաք շարժվող մարդատար տրանսպորտի երթևեկությունն արգելելու վերաբերյալ:

Չնայած ստացված պատասխանները իրողությանը համարժեք գնահատականներ չեն պարունակել, տեղի են ունեցել նկատելի դրական փոփոխություններ:

Այդ օրերին հաճախակի են դարձել վարչական իրավախախտումների համար անձանց ոստիկանության բաժիններ բերման ենթարկելու և դատարանի որոշմամբ վարչական կարգով կալանավորելու դեպքերը:

Նման գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նաև չարաշահվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության պահանջները՝ զագրախոսությունը գնահատվել է որպես վարչական կարգով անձին կալանքով պատժելու հիմք:

❖ Բնակավայր ընտրելու մարդու իրավունքն ինչ-որ տեղ սահմանափակված է անձնագրային համակարգին վերաբերող նորմերով: Բազմաթիվ են դեպքերը, երբ ամուսնացած կանայք հաշվառված են մնացել իրենց ծնողների բնակարանի հասցեում, ապա ամուսնալուծվել, ընտրել են այլ բնակարան, սակայն չեն հաշվառվում տվյալ վայրում և տվյալ վայրի բնակիչ չեն հանդիսանում՝ բնակարանի սեփականատիրոջ համաձայնության բացակայության պատճառով:

Նման արհեստական արգելքն առաջացել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով սահմանված բնակության իրավունքի թյուրըմբռնման հետևանքով՝ բնակարանի

սեփականատերը խուսափում է իր բնակարանում այլ անձի հաշվառելուց՝ վախենալով բնակօգտագործման իրավունքի առաջացումից:

Ունենք դեպք, երբ ամուսնավուծված կնոջ մոտ ապրող երեխաներն իրենց բնակության վայրում չեն անձնագրավորվում այն հիմնավորմամբ, որ մայրը տվյալ հասցեում հաշվառված չէ, իսկ ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրությամբ ասված է, որ անչափահաս երեխաները հաշվառվում են ծնողների հաշվառման վայրում: Հենվելով այս կետի վրա, 17 տարին լրացած անչափահասին մերժվել է նույնիսկ իր անվամբ եղած բնակարանում հաշվառելը և անձնագիր տրամադրելը:

Այս ամենից հետևում է, որ հասունացել է անձնագրային համակարգի մասին օրենք ընդունելու անհրաժեշտությունը:

3.5. Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք

Քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունք:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 26)

Հանրահավաքների հետ կապված դեպքերով լայնորեն շրջանառության մեջ է դրվել «Չարտոնված հանրահավաք» հասկացությունը՝ կյանքի կոչելով նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության «ԽՍՍՀ-ում ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման ու անցկացման կարգի մասին» 1988թ. հուլիսի 28-ի հրամանագրի սկզբունքներն այն դեպքում, երբ խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելը ՀՀ քաղաքացուն արտոնված է որպես ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունք /ՀՀ Սահմանադրություն, հոդված 26/:

Պաշտպանի կողմից դատարաններից վերցվել և ուսումնասիրվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ մի շարք գործեր:

Դրանց տվյալների ամփոփման արդյունքներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազին և, ակնհայտ համարելով տվյալ գործերով պաշտոնեական դիրքի չարաշահումներ թույլ տրված լինելու հանգամանքը, առաջարկվել է դնել մեղավորների պատասխանատվության հարցը:

Պաշտպանի հայտնաբերած փաստերի մի մասն անջատվել և ուղարկվել է Արմավիրի մարզի դատախազին՝ ստուգելու և ընթացք տալու: Մարզի դատախազը հետագայում հաղորդել է, որ հանցագործության դեպք չի հաստատվել, իսկ որոշ ոչ էական խախտումների համար ոստիկանության համապատասխան աշխատակիցները ստացել են դիտողություն:

Նշված դեպքերի հետ կապված քրեական գործեր են հարուցվել նաև մի քանի այլ անձանց նկատմամբ՝ որպես խափանման միջոց նախնական կալանքի կիրառմամբ: Նրանք մեղադրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 225 /զանգվածային անկարգություններ/, 300 /պետական իշխանությունը յուրացնելը/, 301 /ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու ուղղված հրապարակային կոչեր/ հոդվածներով:

Այդպիսի քրեական գործերի հարուցման հնարավորությունը ցույց է տվել, որ ՀՀ քրեական օրենսգրքի թվարկված հոդվածների նկարագրական մասերը կարիք ունեն վերախմբագրման, հանցակազմերի որոշակիացման, որը և կբացառի դրանց իմաստի տարածական մեկնաբանման հնարավորությունը: Օրինակ, հենց 300-րդ հոդվածի վերնագիրը՝ «Պետական իշխանությունը յուրացնելը», չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը: Հոդվածում խոսքը գնում է ոչ թե իշխանությունը յուրացնելու մասին, այլ այն բռնությամբ զավթելուն ուղղված գործողություններ կատարելուն, ապա նաև իշխանությունը բռնությամբ պահելուն:

Չհամաձայնվելով այդ անձանց արարքները քրեորեն պատժելի արարք որակելու հետ, այդ հարցով Պաշտպանը բազում քննարկումներ է ունեցել [հանրապետության գլխավոր դատախազի](#) հետ՝ գրավոր ներկայացնելով իր մոտեցումները:

Այդ բնույթի քրեական գործերն այնուհետև կարճվել են դատախազության որոշումներով:

28.04.04թ. ընդունված «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» **28.04.04թ. — ընդունված** ՀՀ օրենքը, կոչված լինելով կարգավորելու հանրապետությունում մարդու սահմանադրական այդ իրավունքների իրականացման հետ կապված խնդիրները, այնուամենայնիվ պարունակում է մի շարք անորոշություններ, որոնք կարող են մեկնաբանվել հօգուտ նման իրավունքի սահմանափակման:

Սահմանելով «զանգվածային հրապարակային միջոցառումը» որպես 100 և ավելի մասնակցով հրապարակային միջոցառում, ոչ զանգվածային հրապարակային միջոցառումն արգելման սպառնալիքի տակ է դրվում, եթե միջոցառումն անցկացնելու ընթացքում մասնակիցների թիվն ինքնաբերաբար հասնում է 100-ի կամ անցնում դրանից:

Օրենքը չի նախատեսում զանգվածային հրապարակային միջոցառում իրականացնելու համար թույլտվություն ստանալու ուղղակի պահանջ, սակայն դա հետևում է օրենքի ողջ բովանդակությունից: Հենց այն, որ նախապես չիրազեկելը հիմք է միջոցառումը դադարեցնելու, ինքնին նշանակում է թույլտվություն ստանալու պահանջ:

Բավականին լայն է զանգվածային հրապարակային միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող հանգամանքների, անցկացման համար անթույլատրելի տարածքների ցանկը, սահմանափակված է հակացույց կազմակերպելու հնարավորությունը, արդարացված չէ միջոցառմանը բոլոր կազմակերպիչների անընդմեջ ներկա լինելու պահանջը: Այս առումով օրենքը ենթակա է հիմնովին վերանայման:

Դրան զուգահեռ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.12.04թ. ՀՀ օրենքով քրեական օրենսգրքում ավելացված 225-1 և 258-1 հոդվածները հնարավորություն են տալիս դադարեցնել ցանկացած զանգվածային հրապարակային միջոցառում կամ արգելել ցանկացած հրապարակային ելույթ՝ զուգորդված կազմակերպիչներին և մասնակիցներին քրեական պատասխանատվության կանչելու հետ:

Այս ամենը գալիս է ապացուցելու, որ **ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի հետ կապված** օրենքները պետք է համապատասխանեցվեն միջազգային իրավունքի նորմերին և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

3.6. Միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունք: Այս իրավունքները կարող են սահմանափակվել զինված ուժերում եւ իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ: Մարդուն չի կարելի հարկադրել՝ անդամագրվել որեւէ կուսակցության կամ միավորման:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 25)

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու ազատության իրավունքների իրականացման կարգն ու պայմանները սահմանված են ՀՀ առանձին օրենքներով /«Կուսակցությունների մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին», «Արհեստակցական միությունների մասին» և այլն/:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սկզբունքների հիման վրա ընդունված են առանձին օրենքներ տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների վերաբերյալ:

Այս ամենը վկայում է, որ առկա են միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքի իրականացման օրենսդրական հիմքերը:

«Կուսակցությունների մասին» օրենքում 2004թ. կատարված փոփոխությունները, որոնցով կուսակցությունների համար պարտադիր է համարվում գրանցումից հետո 2000-ից ոչ պակաս անդամ ունենալը, որոշակի արգելք են որպես կուսակցություն մարդկանց միավորվելու ճանապարհին:

Որպես բացասական երևույթ արձանագրվել է 2004թ. ապրիլի 12-ին «Արդարություն» դաշինքի գրասենյակ ներխուժելը և գրասենյակային գույքին վնաս պատճառելը իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից: Դեպքի կապակցությամբ ՀՀ դատախազությունում հարուցվել է քրեական գործ, սակայն մեղավորները չեն բացահայտվել, և ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել:

«Արհեստակցական միությունների մասին» օրենքը չի նպաստել այդ միությունների ակտիվացմանը, դրանց դերի բարձրացմանը, ինչը գնահատվում է որպես էական թերություն աշխատողների իրավունքների պաշտպանության հարցերում:

Արհմիությունների ակտիվացումը, դրանց դերի բարձրացումը կարևորվում է հատկապես այն առումով, որ ներկա շուկայական հարաբերություններում, երբ կա նաև

գործազրկություն, երբ դեռևս գործողության մեջ չի դրվել նոր Աշխատանքային օրենսգիրքը, չի ձևավորվել աշխատանքի պետական տեսչությունը, աշխատողն անպաշտպան է անհատ գործատուի կամայականություններից:

3.7. Արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 39)

❖ Երկրում անցկացված դատական բարեփոխումների արդյունքում ունենք՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, Տնտեսական դատարան, քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան, քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարան:

ՀՀ Սահմանադրական դատարանին դատական համակարգում վերապահված է յուրահատուկ դեր, այն քիչ ազդեցություն ունի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վրա, քանի դեռ Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանափակ է:

Դատական նոր համակարգում հատկապես արժեքավոր է Վերաքննիչ դատարանի առկայությունն այն առումով, որ այստեղ գործը կարող է ամբողջ ծավալով կրկին քննվել երեք պրոֆեսիոնալ դատավորի կազմով, հանգամանք, որը սխալը բացառիկ դարձնելու լավագույն երաշխիք է:

Դատական համակարգում բաց է մնացել վճարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող դատարանների բացակայության հարցը: Օրակարգում մնան դատարանների ստեղծման խնդիրը դրված է և ենթադրվում է, որ կլուծվի 2005թ. ընթացքում:

Առաջին ատյանի դատարաններ ստեղծված են և գործում են Երևան քաղաքի բոլոր թաղային համայնքներում, այդպիսիք կան բոլոր մարզերում, որոնք իրենց նստավայրերն ունեն նաև նախկին շրջանային կենտրոններում:

~~ՀԲնակավայրերից հեռավորության առումով բնակչության համար~~ դատարանները բնակավայրերից հյուսիսից համար հասանելի են, թեև կան որոշ դժվարություններ ծայրամասային բնակավայրերի բնակիչների համար:

Քաղաքացիական գործերով հայցադիմումների և դիմումների համար սահմանված պետական տուրքը բնակչության մի ստվար խավի համար խախտված իրավունքի համար դատական պաշտպանության դիմելը դարձնում է անհնար՝ անվճարունակ լինելու պատճառով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածով հայցադիմումը վերադարձնելու հիմք է սահմանվել նաև պետական տուրքը չվճարելը: Հոդվածի այս կետի պահպանման նպատակահարմարությունը ենթակա է քննարկման:

❖ Դատարաններից՝ դժգոհությունները դատարաններից վերաբերում են դատավարական այնպիսի խախտումներին, որոնք հանգեցրել են գործի քննությանը հավասարության պայմաններում գործի քննությանը մասնակցելու, պաշտպան ունենալու, իր դեմ վկայած անձանց հետ առերես հարցաքննվելու և մնան այլ իրավունքների խախտումներին:

Քրեական գործերով մեծ է դժգոհությունը հատկապես օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցների օգտագործմամբ դատավճիռների կայացումից: Այն, որ դատարանները շրջանցում են և քննարկման առարկա չեն դարձնում հետաքննության կամ նախաքննության մարմնի թույլ տված դատավարական խախտումները, հանգեցնում է նրան, որ անօգտագործելի չեն ճանաչվում նաև մնան խախտումներով ձեռք բերված ապացույցները և դրվում են մեղադրող դատավճռի հիմքում:

Ստացված բողոքների ուսումնասիրման, դատաքննությունների դիտարկումների արդյունքները հանգեցրել են այն հետևության, որ քրեական գործերով պաշտպանության կողմի միջնորդությունները մերժելիս դատարաններն իրենց որոշումներով մնան մերժումները շատ դեպքերում չեն հիմնավորում: Պրակտիկա է դարձել ցանկացած

միջնորդության քննարկումը հետաձգելը, հատկապես, երբ միջնորդությունը վերաբերում է այս կամ այն ապացույցն անօգտագործելի ճանաչելուն:

Հաճախակի են դեպքերը, երբ առանց հիմնավորման մերժվում են լրացուցիչ կամ նոր փորձաքննություններ նշանակելու, փորձարարություն կատարելու, նոր վկաներ հրավիրելու և նման բնույթի այլ միջնորդությունները:

Պաշտպանության կողմը միշտ չէ, որ մեղադրող կողմի հետ գտնվում է հավասար պայմաններում: Մշտապես զգալի է այն, որ դատարանը կանգնում է մեղադրողի կողմում՝ հատկապես երբ առաջանում է մեղադրական վարկածի տապալման սպառնալիքը, չի զգացվում դատարանի՝ միայն իրավունքի շահն արտահայտող մարմին լինելու հանգամանքը: **Արձանագրված է կոնկրետ դեպք, երբ դատաքննությունն անց է կացվել և դատավճիռ է կայացվել ամբաստանյալի բացակայությամբ, ինչը դատական պրակտիկայում արտառոց երևույթ է:**

Քննչական մարմինների կողմից խախտվում են հանցագործության մասին տրված հաղորդումներով որոշում կայացնելու դատավարական ժամկետները: Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ նման հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, առանձին դեպքերում՝ 10-օրյա ժամկետում¹:

Մինչդեռ կան դեպքեր, երբ տրված հաղորդման կապակցությամբ ոստիկանությունում կամ դատախազությունում նյութեր են նախապատրաստում ամիսներով: Անտեսվում է այն հանգամանքը, որ դա դատավարական խախտում է, և նույն քրեական դատավարության օրենսգրքի 174 հոդվածի համաձայն, ժամկետի խախտումով իրականացված քննչական գործողությունները որպես ապացույց օգտագործելի չեն:

❖ Քաղաքացիական գործերով զգալի է դժգոհությունը դատաքննության անհիմն ձգձգումներից, հայցադիմումը և մյուս փաստաթղթերը, գործով կայացված որոշումը կամ վճիռը ժամանակին չուղարկելուց, պատշաճ կերպով չծանուցված պատասխանողի բացակայությամբ վճիռ կայացնելուց և նման այլ բնույթի խախտումներից:

Արձանագրվել է դեպք, երբ առաջին ատյանի դատարանից քաղաքացիական գործը վերաքննիչ դատարան ուղարկվել է վերաքննիչ բողոքի պատճենը տվյալ դատարանի գրասենյակ հանձնելուց 40 օր հետո միայն: Գրասենյակի որևէ աշխատակից նման խախտման համար չի պատժվել:

Դատարաններում հաստատվում է ևս մեկ արատավոր երևույթ՝ դատարանների աշխատակազմերի ներկայացուցիչները /աշխատակազմի ղեկավար, գործավար, դատավորի օգնական/ իրենց իրավունք են վերապահում մերժել քաղաքացու դիմումի ընդունումը, գնահատականներ տալ հայացադիմումին կամ ընդհանրապես իրենց վրա վերցնել դատավորի կողմից լուծվելիք մի շարք հարցեր: Այսպիսով արհեստական արգելքներ են հարուցվում քաղաքացու դատարան դիմելու իրավունքի իրականացման ճանապարհին:

Զգալի թիվ են կազմում դժգոհությունները կայացված վճիռներից: Դա կարելի է վերագրել նաև նրան, որ վիճող կողմերից մեկը, որին ի վնաս է կայացվել վճիռը, չի կարող գոհ լինել: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երբեմն նաև կայացվում են ակնհայտ անարդար վճիռներ՝ ձևական հիմնավորումներով, երբեմն նաև անառարկելի ապացույցների շրջանցմամբ:

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ քաղաքացիների համարյա բոլոր դատական վեճերն իրացնողի հետ՝ կապված վերցվող գույքի անարդար գնահատման, պայմանագրի պայմանների անընդունելի լինելու հետ, դատարանները լուծել են հօգուտ իրացնողի՝ չքննարկելով կամ հաշվի չառնելով այն փաստերը, որ իրացնողը վերցվող գույքի շուկայական արժեքը գնահատել է միակողմանի, անտեսել է ընդհանուր տարածքները, սեփականատիրոջ բացթողնելիք օգուտը, շուկայական գների փոփոխությունները և այլն:

Նման վճիռների ամփոփ տվյալների հիման վրա, Պաշտպանը միջնորդել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հարցը քննարկել Դատարանների նախագահների խորհրդում և խորհրդի որոշմամբ դատարաններին նման գործերով տալ կոնկրետ պարզաբանումներ:

¹ Նախնական տարբերակում այս նախադասության մեջ տեղ է գտել վրիպում՝ «անհապաղ» բառի փոխարեն տպագրվել է «եռօրյա ժամկետում»:

❖ Դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարևորագույն տարրերից է նաև դատարանների վճիռների հարկադիր կատարումը:

ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործունեությունը, քաղաքացիների իրավունքների պաշտպանության առումով, հեռու է բավարար լինելուց, ինչի վկայությունն առաջին հերթին բողոքների քանակն է, որոնցով դիմումատուները հիմնականում դժգոհում են դատարանների վճիռները չկատարելուց:

Եթե ինչ-որ տեղ կարելի է արդարացնել պարտապան քաղաքացուց գումար գանձելու վերաբերյալ վճռի չկատարումը պարտապանի անվճարումակ լինելու պատճառով, ապա ոչնչով չի կարող արդարացվել պարտապան իրավաբանական անձից աշխատավարձի չվճարած և պարտք մնացած գումարների բռնագանձման վերաբերյալ վճիռների չկատարումը:

Մի քանի հարյուրի են հասնում Վանաձորի «Մանրաթելերի գործարանից» և «Ուղևորատրանսպորտային ձեռնարկությունից», Երևանի «ԴՎԻՆ» հյուրանոցից և «Նաիրիտ» միավորումից աշխատավարձի չվճարված գումարներ բռնագանձելու վերաբերյալ դեռևս 2003 թվականից չկատարված վճիռները:

Վանաձորի ՈՒՏՁ-ն արդեն իսկ ճանաչվել է անվճարումակ, և այդ գումարների բռնագանձումը դարձել է անհուսալի, ինչում իր մեղքն ունի նաև ԴԱՀԿ ծառայությունը՝ ժամանակին գանձումներ չկատարելու, գույքն արգելանքի տակ չդնելու հարցերում:

«Նաիրիտ» գործարանից իրենց չվճարած աշխատավարձի գումարներ պահանջողները հիմնականում կենսաթոշակի անցած տարեցներ են, նաև ծայրահեղ կարիքավորներ, որոնց համար այդ գումարները կենսական անհրաժեշտություն են:

«Նաիրիտ» գործարանից ոչինչ չի գանձվում: ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի որոշմամբ այն ճանաչվել է պետական հանձնարարություն կատարող ձեռնարկություն և ԴԱՀԿ ծառայությունում կասեցվել են «Նաիրիտից» գումարներ բռնագանձելու վերաբերյալ բոլոր կատարողական վարույթները՝ օգտվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ ենթակետով իրենց տրված իրավունքից. «Հարկադիր կատարողն իրավունք ունի կասեցնել կատարողական վարույթը, եթե պարտապանը ներգրավված է որևէ պետական հանձնարարության կատարման մեջ»:

«Նաիրիտը» որևէ պետական հանձնարարություն չի կատարում: Կառավարության վերոհիշյալ որոշումը կայացվել է հենց այդ պարտքերի գանձումը կասեցնելու նպատակով, և կասեցումը պարտադրվել է ԴԱՀԿ ծառայությանը:

Պաշտպանի որոշմամբ՝ հասանելիք աշխատավարձի գումարները բռնագանձելու վերաբերյալ ԴԱՀԿ ծառայության կողմից կատարողական վարույթների կասեցումը դիտվել է որպես աշխատանքի դիմաց վարձատրություն ստանալու իրավունքի խախտում: Առաջարկվել է վերսկսել վարույթները և ապահովել գանձումները: ԴԱՀԿ ծառայությունը Պաշտպանի առաջարկները չի կատարել: Այդ մասին տեղեկացվել է նաև Արդարադատության նախարարը, որը նույնպես գտել է, որ դատարանների այդ վճիռները կատարման ենթակա չեն, քանի դեռ ուժի մեջ է գործարանը պետական հանձնարարություն կատարող ճանաչելու մասին կառավարության որոշումը:

Այս ամենը վկայում է, որ ԴԱՀԿ մասին օրենքի 38-րդ հոդվածի հիշյալ դրույթը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածով ամրագրված սկզբունքին. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում»:

ԴԱՀԿ մասին օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ ենթակետով հարկադիր կատարողին փաստորեն իրավունք է տրվել նաև չկատարելու ուժի մեջ մտած դատական ակտը: Նշված կոնկրետ դեպքում հարկադիր կատարողը չարաշահել է իր այդ իրավունքը:

Գտնում ենք, որ ԴԱՀԿ մասին օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ ենթակետը պետք է ուժը կորցրած ճանաչել:

Այս ամենից բացի, արդար դատաքնության և դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար կարևորվում է դատավարական իրավունքների խախտում թույլ տալու, անհիմն կամ անարդար որոշումներ, վճիռներ կամ դատավճիռներ կայացնելու համար պատասխանատվության ամրագրումը: Դատական վերադաս ատյանը նախորդ ատյանի դատարանի թույլ տված խախտումների կապակցությամբ, դատավորի

պատասխանատվության հարցը դնելու առումով որևէ իրավասություն չունի՝ անկախ խախտման բնույթից:

Առաջարկվում է քննարկել մասնավոր որոշում կայացնելու դատարանի իրավունքի ներդրումը՝ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարելով համապատասխան փոփոխություններ:

3.8. Անմեղության կանխավարկած

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 18)

Այս սկզբունքն ամրագրված է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով, որը անմեղության կանխավարկածի սկզբունքի հասկացության տակ ներառել է նաև իր անմեղությունն ապացուցելու պարտականությունից մեղադրյալի ազատ լինելու, բացառապես գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջության առկայությամբ միայն հանցանք գործելու մեջ մեղավոր ճանաչվելու, չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու, պատժի տարրեր պարունակող խափանման միջոցի կիրառումից ազատ լինելու իրավունքները:

Խնդիր չի առաջացնում այն, որ հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը պետք է հաստատված համարվի միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Խնդիրներ առաջանում են կապված մեղադրական դատավճռի հիմքում դրվող ապացույցներն անմեղության կանխավարկածի սկզբունքներին համապատասխան գնահատելու հետ: Պաշտպանի ստացած բողոքները հիմնականում վերաբերում են հենց նախաքննական մարմնի և դատարանի կողմից այդ սկզբունքների անտեսմանը: Այս սկզբունքներն արդար դատաքննության կարևորագույն տարրերն են, որոնք սակայն դատարանների կողմից հաճախակի անտեսվում և չեն կիրառվում, ինչը հանգեցնում է արդար դատաքննության իրավունքի խախտման, տեղիք է տալիս բողոքների և դժգոհությունների: Եզակի չեն դեպքերը, երբ դատարանները, մինչև դատավճռի կայացումը, նախապես չեն քննարկում և ճանաչում օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցների անօգտագործելի լինելը, երբ դատավճիռը կայացվում է ենթադրությունների հիման վրա:

Դատարանի վարույթում գտնվող քրեական գործերով բողոքներ ուսումնասիրելիս, Պաշտպանը դատարանին առաջարկներ է ներկայացնում՝ դատարանի ուշադրությունը հրավիրելով հենց նման խախտումների վրա:

3.9. Իրավաբանական օգնություն ստանալու, պաշտպան ունենալու իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 38)

Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար: Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք: Յուրաքանչյուր դատապարտյալ ունի օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման իրավունք: Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Տուժողին պատճառված վնասի հատուցումը ապահովվում է օրենքով սահմանված կարգով:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 40)

ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված է իրավաբանական օգնություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը, օրենքով նախատեսված դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, պաշտպան ունենալու իրավունքը ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով անվճարունակ կասկածյալի, մեղադրյալի համար նախատեսված է անվճար պաշտպան ունենալու իրավունքը: Քաղաքացիական դատավարության մասնակիցների համար անվճար իրավաբանական օգնություն որևէ օրենքով նախատեսված չի եղել:

14.12.04թ. ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է փաստաբանական պալատի փաստաբանների միջոցով անվճար իրավաբանական օգնություն քաղաքացիական որոշ գործերով, որոնք վերաբերում են ալիմենտի գանձմանը, խեղման կամ առողջությանը վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով վնասի փոխհատուցմանը:

Այդ նույն օրենքը նախատեսում է փաստաբանների պալատի ներսում Հանրային պաշտպանի գրասենյակի ստեղծում, որը պետք է ֆինանսավորվի պետական բյուջեից, և հենց այդ գրասենյակի փաստաբանների միջոցով պետք է իրականացվի անվճար պաշտպանություն և իրավաբանական օգնության տրամադրում:

Սա քայլ է Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու ճանապարհին: Նման ծառայության մատուցման պահանջվող որակի ապահովումը փաստաբանների նոր ձևավորվող պալատի խնդիրն է:

Սահմանադրության 40-րդ հոդվածը նաև սահմանափակել է քրեական գործերով պաշտպան ունենալու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, որի հետևանքով քրեական գործերով անցնող այն անձինք, որոնք փաստացի գտնվում են կասկածյալի իրավիճակում, քանի դեռ վարույթն իրականացնող մարմինը նրանց դատավարական այդ կարգավիճակը չի ձևակերպել, պաշտպան ունենալու իրավունքից չեն օգտվում:

Այս սահմանափակման հետևանքով է, որ հետաքննության մարմինները, այս կամ այն հանցագործության վերաբերյալ նյութեր նախապատրաստելիս, տվյալ հանցագործության մեջ կասկածվող անձին հարցաքննությունների են կանչում առանց պաշտպանի մասնակցության, խոստովանական բացատրություն կամ ցուցմունք են կորզում՝ օգտագործելով տվյալ անձի իրավական գիտելիքների բացը: Այս ընթացքում են կատարվում իրավունքի այնպիսի խախտումներ, ինչպիսիք են՝ ապօրինի բերման ենթարկելը, անազատության մեջ ապօրինի պահելը, բռնությունների կիրառումը:

Սահմանադրական բարեփոխումներում պետք է անդրադառնալ նաև 40-րդ հոդվածի այս սկզբունքների վերանայմանը:

Նախաքննության և դատաքննության ընթացքում օրենքով նախատեսված կարգով պաշտպան ունենալու իրավունքի իրականացումը հիմնականում ապահովվում է: Սակայն բացառիկ չեն դեպքերը, երբ պաշտպանին բավարար ժամանակ չի տրամադրվում գործի նյութերին ծանոթանալու և միջնորդություն ներկայացնելու համար: Հատկապես նախաքննության ընթացքում, երբ կալանքի տակ պահելու ժամկետի ավարտման սպառնալիք կա, գործի նյութերին ծանոթանալու ժամկետը քննիչի որոշմամբ հաճախ առանց որևէ հիմքի սահմանափակվում է՝ դրանց հետ ծանոթանալն անհիմն ձգձգելը վերագրելով պաշտպանին:

Երբ պաշտպանը նոր է ներգրավվում գործին, դատարանները նույնպես երբեմն գործի նյութերին ծանոթանալու համար պաշտպանին տրամադրում են ողջամիտ չհամարվող սահմանափակ ժամկետ:

Այսպիսի մոտեցումները ինքնին հանգեցնում են պաշտպանության իրավունքի խախտման:

3.10. Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների անօգտագործելիություն

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 41)

Մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու եւ մերձավոր ազգականների դեմ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր: Արգելվում է

օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով: Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 42)

Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն օգտագործելն արգելված լինելու սկզբունքն ամրագրված է Սահմանադրության 42-րդ հոդվածով: Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված են ապացույցների ձեռք բերման կարգն ու պայմանները, այդ կարգի խախտումներով ձեռք բերված ապացույցներից՝ որպես օրենքի խախտումով ձեռք բերված ապացույցներ, ազատվելու հիմքերն ու կարգը:

Դատավարական այս սկզբունքի կիրառումն արդի դատաքննության ապահովման կարևորագույն երաշխիքներից է, սա նաև օրենքի գերակայության հաստատմանն ուղղված սկզբունք է:

Քրեական գործերով ստացված բողոքները, դատական նիստերի մեր դիտարկումները բերել են այն համոզման, որ դատարանները խուսափում են ապացույցն օրենքի խախտմամբ ձեռք բերված լինելու և անօգտագործելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունները քննարկելուց, առավել ևս՝ բավարարելուց: Հիմնականում որոշում է կայացվում քննարկումը հետաձգելու և դատավճռով ապացույցի գնահատմանն անդրադառնալու մասին:

Օրինակ, Լավրենտի Կիրակոսյանի հանրահայտ գործով պաշտպանության կողմը միջնորդել է անօգտագործելի ճանաչել իրեղեն ապացույց համարվող թմրանյութը, քանի որ այն հայտնաբերվել է բնակարանում օրենքի խախտմամբ իրականացված խուզարկությամբ՝ չեն ապահովվել պահանջվող թվով ընթերականեր, խուզարկություն կատարողները դուրս են մնացել մասնակցող երկու ընթերակաների տեսադաշտից:

Միջնորդության քննարկումը դատարանն հետաձգել է, իսկ հետագայում այդ հարցին ընդհանրապես չի անդրադարձել:

Այսպիսի մոտեցումը հակասում է օրենքի իմաստին և պահանջին, քանի որ ապացույցն անօգտագործելի ճանաչելու իմաստը հենց նրանում է, որ այն կարող է հանգեցնել վարույթի կարճմանը, խափանման միջոցի փոփոխման հիմքերի առաջացմանը, գործը լրացուցիչ քննության վերադարձնելուն և նաև հետագա դատաքննության անհրաժեշտության բացառմանը:

Դատարանների նախագահների խորհուրդը կարող է և պետք է հատուկ անդրադառնա այս հարցին՝ կարևորելով այս կամ այն ապացույցի թույլատրելիության որոշումը մինչև դատաքննությունն ավարտելը:

3.11. Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունք: Կրոնի եւ համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրության 45-րդ հոդվածում նախատեսված հիմքերով:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 23)

ՀՀ-ում գրանցված են թվով 55 կրոնական կազմակերպություններ, որոնք պատկանում են քրիստոնեական, հուդայական, հեթանոսական, նոր կրոնական շարժման հոսանքների:

❖ Խղճի և դավանանքի ազատության իրավունքների խախտման հետ կապված բողոքներ ստացվել են «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչներից, ոչ թե իրենց հավատքի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի, այլ զինվորական ծառայության առնչությամբ:

«Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության 2004թ. գրանցմամբ և «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի ընդունմամբ հիմնականում լուծվել են այդ հավատքին հարող քաղաքացիների խնդիրները:

Չլուծված է մնում այն հարցը, թե ինչպես վարվել այն անձանց հետ, որոնք հերթական գորակոչից խուսափելու համար մեկ անգամ արդեն ենթարկվել են քրեական պատասխանատվության, կրել են պատիժը, կրկին խուսափում են հերթական գորակոչից: Այսպիսի խնդիր կա կապված «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչների հետ:

Կա նախադեպ, երբ դատախազության որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է այն հիմնավորմամբ, որ նման անձանց քրեական պատասխանատվության կանչելը պետք է դիտել որպես նույն արարքի համար կրկին դատապարտում, որն անթույլատրելի է:

Դատախազության նման մոտեցման հետ զինվորական կոմիսարիատները չեն համաձայնվում՝ գտնելով, որ հերթական գորակոչից խուսափելու համար դատապարտվելն անձին չի ազատում պատիժը կրելուց հետո զինվորական ծառայություն անցնելու պարտականությունից: Հետևաբար, հետագա գորակոչից խուսափելու համար պատասխանատվության կանչելը չի կարող դիտվել որպես պատասխանատվություն միևնույն արարքի համար:

Այս խնդրի լուծումը պետք է տրվի «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացում կատարելու միջոցով:

Ձինկոմիսարիատները, զինակոչի չլուծված խնդիրներ ունենալով իրենց եհովականներ անվանող անձանց հետ, իրենց մոտ պահում և չեն վերադարձնում այդպիսիների անձնագրերը, ինչի իրավունքը չունեն և տեղիք են տալիս ավելորդ դժգոհությունների և բողոքների:

Ունենք նաև դեպք, երբ զինկոմիսարիատը հրաժարվել է ազատագրվման ձևով պատիժը կրելուց հետո վերադարձած անձին զինվորական հաշվառման վերցնելուց՝ դրանով նրան գրկելով նաև անձնագիր ստանալու հնարավորությունից:

❖ «Սոցիալական քարտերի մասին» ՀՀ օրենքը թերի և երկիմաստ դրույթներ պարունակելու հետևանքով տեղիք է տվել բողոքների և դժգոհությունների այն հավատացյալների շրջանում, որոնք իրենց դավանանքին հակառակ են համարում մարդու անունը թվային տվյալով փոխարինելը:

Անտրամաբանական է օրենքի այն սկզբունքը, որ սոցիալական քարտերի ներդրումը անհրաժեշտ համարելով սոցիալական մի շարք կարևորագույն խնդիրներ լուծելու համար, այդ քարտերի ստացումը հայտարարել է կամավոր, ապա պարտադիր է դարձրել՝ արգելելով առանց սոցիալական քարտի աշխատավարձ, կենսաթոշակ, այլ վճարումներ ստանալը, ֆինանսական գործարքներ իրականացնելը:

Օրենքը պարտավոր էր ուղղակի մատնանշել, թե ինչպիսի սոցիալական խնդիրներ են լուծվում նման քարտերի ներդրմամբ, և այդ խնդիրների լուծման կարևորությունից ելնելով նման քարտ ստանալը համարել պարտադիր:

Օրենքում տեղ գտած թերասացության հետևանքով չի երևում, թե ինչու մարդու անձնագիրը բավարար չէ նրա անձնական տվյալների կուտակման համար, ինչ կապ ունեն աշխատավարձը և մյուս եկամուտները, ֆինանսական գործարքները սոցիալական քարտ ունենալու հետ:

Քանի որ հենց օրենքի այս բացն է տեղիք տվել տարաբնույթ մեկնաբանությունների և դժգոհությունների, Սոցիալական ապահովության նախարարությանն առաջարկվել է հանդես գալ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկությամբ, որ այն դառնա առավել պարզ ու ընկալելի: Ինչ-ինչ պատճառներով նախարարությունը դա չի կատարել և սոցիալական քարտերի հետ կապված լարվածությունը պահպանվում է:

3.12. Խոսքի ազատության և տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը պնդելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել՝ հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 24)

❖ Խոսքի ազատության, իր կարծիքը պնդելու, գաղափարներ տարածելու իրավունքների իրականացման երաշխիքներից է մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ազատությունը, ինչն ամրագրված է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով: ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսված լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչնդոտելու համար /հոդված 164/:

Սակայն 2004թ. ապրիլին և հետագայում լրատվամիջոցների ներկայացուցիչներին ֆիզիկական, բարոյական և նյութական վնասներ հասցնող բռնարարքներ թույլ տված անձանց չբացահայտելը և պատասխանատվության չկանչելը վկայում է այն մասին, որ օրենքում ամրագրված երաշխիքները բավարար չեն և չեն ապահովում լրատվամիջոցների ներկայացուցիչների լիակատար, ազատ և անվտանգ գործունեությունը:

Հասարակական հնչեղություն են ունեցել մի շարք ՉԼՄ-ների /«Կենտրոն», «Հայ-TV», «Շանթ» մասնավոր հեռուստաընկերություններ, Հանրային հեռուստաընկերություն, «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն», «Սյունաց երկիր», «Արագած աշխարհ» թերթեր, «Ֆոտոլուր» գործակալություն, «Հեռք» ինտերնետային էջ, Ռուսաստանի Հանրային հեռուստաընկերություն/ լրագրողների նկատմամբ տարբեր վայրերում / Երևան, Աշտարակ, Ծաղկաձոր, Գորիս, Արագած/ տեղի ունեցած դեպքերը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը ստացած բողոքների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ արձագանքել է այդ բոլոր դեպքերին: Պաշտպանը հանդիպել է ՀՀ գլխավոր դատախազին՝ նրա ուշադրությունը հրավիրելով կատարվածի վրա և առաջարկելով առավել մանրակրկիտ զբաղվել ՉԼՄ-ների ներկայացուցիչների հանդեպ անօրինականություններ թույլ տված անձանց հայտնաբերելու և պատժելու գործով:

Պաշտպանի միջամտությունները ինչ-որ չափով նպաստել են պատժելիության սկզբունքի իրականացմանը և, թեպետ եզակի դեպքերում, մեղավորները հայտնաբերվել են և կրել իրենց, թեև ոչ համարժեք, պատիժը:

Քաղաքացիական հասարակության, մասնավորապես ՉԼՄ-ների ակտիվությունը, Պաշտպանի միջամտությունները, ինչպես նաև պատկան մարմինների պատրաստակամությունը հանգեցրել են որոշ, թեև քիչ զգալի, դրական տեղաշարժերի:

❖ Լուրջ առարկություններ կան վիրավորանք հասցնելը որպես քրեորեն պատժելի արարք սահմանելու դեմ: **Քրեական օրենսգրքի** այդ հոդվածը սպառնալիքի տակ է դնում խոսքի ազատությունը, հատկապես սահմանափակում է քննադատության ազատությունը, քանի որ քննադատության ենթարկվողը կարող է ցանկացած արտահայտություն գնահատել որպես իր պատվի և արժանապատվության ստորացում: Անընդունելի է նաև պաշտոնյային և սովորական մարդուն վիրավորանք հասցնելու համար պատասխանատվության ենթարկելիս տարբերակում մտցնելը:

❖ Խոսքի ազատության հարցում հուսադրող է այն, որ հանրապետությունում գործում են 40-ից ավելի հեռուստաալիք, մոտ 20 ռադիոկայան, 10 տեղեկատվական գործակալություն և հրատարակվում են 35-ից ավելի թերթեր և ամսագրեր:

Չնայած դրան, Հանրապետության նախագահի մասնակցությունը հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի ձևավորման գործընթացին առաջ է բերում անվստահություն հանձնաժողովի անկախության նկատմամբ:

❖ Ինչ վերաբերում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, ապա դրանով որոշակիացված են տեղեկություններ տրամադրելու, տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովման հիմնական սկզբունքները, կարգն ու պայմանները: Սրան զուգահեռ, խնդիր կա պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակի մարմիններում կիրառել տեղեկությունների տրամադրման՝ օրենքով սահմանված կարգը:

Լայն տարածում է գտել քաղաքացիներին կամ ՀԿ-ներին տեղեկություններ տրամադրելը անհիմն կերպով մերժելը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանը մինչ օրս «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» ՀԿ-ին չի տրամադրել նրա կողմից պահանջված տեղեկությունները, չնայած դատարանի համապատասխան վճռի առկայությանը: Նմանօրինակ իրավիճակ է ստեղծվել Վանաձորում, սակայն այս դեպքում ՀԿ-ին /Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա, Վանաձորի մասնաճյուղ/, երկարատև դատական գործընթացի արդյունքում տրամադրվել են պահանջված տեղեկությունները:

Կամայական մեկնաբանություններ են տրվում «առևտրական գաղտնիք» կամ «անձնական տվյալ» հասկացություններին:

Օրինակ, ժառանգության հետ կապված հարցեր լուծելու նպատակով քաղաքացին ցանկացել է ստանալ իր մոր հիվանդությանը և մահվանը վերաբերող փաստաթղթեր, և չնայած մոր անձնական տվյալների տնօրինումը ժառանգի իրավունքն է, քաղաքացին մերժվել է ինչպես բժշկական հաստատության, այնպես էլ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջների անվերապահ կատարումը իշխանությունների և բոլոր մակարդակների մարմինների կողմից Մարդու իրավունքների պաշտպանվածության կարևորագույն երաշխիքներից է:

3.13. Ընտրական իրավունք

Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն անմիջականորեն կամ կանքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունք: Ընտրել եւ ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաեւ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված եւ պատիժը կրող քաղաքացիները:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 27)

2004 թվականին ընտրություններ չեն անցկացվել: Սակայն 2003 թվականին անցկացված ԱԺ և նախագահական ընտրությունների արձագանքները շարունակում են իրենց ազդեցությունն ունենալ երկրի քաղաքական կյանքի վրա: Ընտրություններն այն առավել խոցելի տեղն է, որտեղ ձևավորվում են քաղաքական ընդդիմությունը, դժգոհությունը:

Ցանկացած մակարդակի ընտրություններն օրենքի խախտումով անցկացնելը ենթակա է դատապարտման առաջին հերթին այն առումով, որ տվյալ դեպքում խախտվում են ոչ թե մեկի կամ երկուսի իրավունքը, այլ ամբողջ ընտրազանգվածի իրավունքները, մյուս խախտումները ենթակա են գնահատման որպես երկրի քաղաքական կայունության դեմ ուղղված արարքներ:

ՀՀ քրեական և վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերը նախատեսում են պատասխանատվության համապատասխան տեսակներ ընտրախախտումների տարբեր տեսակների համար: Սակայն ընտրություններում արձանագրված խախտումներն իրավապահ մարմինների կողմից բավարար հետևողականությամբ քննության առարկա չեն դառնում, խախտումների հեղինակները մնում են անպատիժ: Դրա վկայությունն են ՀՀ Դատախազությունում հարուցված և ապա կարճված քրեական գործերը:

Կարևորելով Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, հատկապես ընտրական հանձնաժողովների ձևավորման մասով, այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ այն կարող է մնալ անարդյունք, քանի դեռ ընտրախախտում թույլ տալու համար պատասխանատվության ենթարկելը չի դարձել անխուսափելի:

3.14. Անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական եւ ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, իր պատիվը եւ բարի համբավը ունեցողությունից պաշտպանելու իրավունք: Արգելվում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը եւ տարածելը: Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 20)

Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 21)

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Այս սկզբունքը իր ամրագրումն է ստացել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրաճանաչ իրավական փաստաթղթերում:

Այս իրավունքի իրականացմանը պետական մարմինների միջամտություն չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա, 8-րդ հոդված):

Նշված միջազգային իրավական դրույթները իրենց ամրագրումն են գտել նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, որը նախատեսում է այդ իրավունքի սահմանափակումը միայն դատարանի որոշման հիման վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածը հստակ ամրագրում է յուրաքանչյուր անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը և այն ապահովելու կարգը:

Նշված օրենսգրքի 14-րդ հոդվածը ամրագրում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի գրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը:

Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ:

Այս իրավունքի պաշտպանության խնդիրները նույնպես պայմանավորվում են նման հարցերի վերաբերյալ միջնորդություն ներկայացվելիս միայն դատարանի բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա որոշում կայացնելու անհրաժեշտությամբ: Խնդիրը դարձյալ հանգում է արդար, անկողմնակալ և անկախ դատարան ունենալու անհրաժեշտությանը:

Նման հարցերով Պաշտպանը բողոքներ չի ստացել, սակայն, խիստ կարևորելով իրավունքի այդ ոլորտները, անհրաժեշտ է հետազայում առանձին ուսումնասիրություններ կատարել իրական վիճակը պարզելու նպատակով:

3.15. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ

Քաղաքացիները անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները եւ պարտականությունները:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 15)

Ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիներն ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի եւ մշակույթի զարգացման իրավունք:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 37)

Հայաստանում ազգային փոքրամասնությունները կազմում են մոտ 3 տոկոս և ներկայացված են ավելի քան 15 ազգություններով՝ եզդիներ, քրդեր, ասորիներ, ռուսներ, հրեաներ, հույներ, լեհեր, գերմանացիներ, վրացիներ և ուրիշներ:

Ներկայումս գործում են բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես, ազգային փոքրամասնությունների իրավունքներին: Հայաստանը միացել կամ վավերացրել է դրանցից կարևորագույնները, որոնցից հարկ ենք համարում հիշատակել «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան», որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 17.02.1998թ.:

Նախորդ տարվա սկզբում ՀՀ կառավարության կազմում ստեղծվել է ազգային և կրոնական հարցերի վարչություն, որի գործունեության արդյունքում լուծում են ստացել նախորդ տարիներից մնացած մի շարք խնդիրներ:

Ազգային կամ ռասայական խտրականության վերաբերյալ Պաշտպանը որևէ դիմում կամ բողոք չի ստացել: Միակ դեպքը, կապված հրեաների հասցեին հնչած հրապարակային ելույթի հետ, ունեցել է իր արձագանքը, և հեղինակը կանչվել է քրեական պատասխանատվության:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին միավորող հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ Պաշտպանի հանդիպումների ժամանակ վեր են հանվել փոքրամասնություններին հուզող մի շարք հարցեր՝ կապված նրանց լեզվի ու մշակույթի հետ, և առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման պետական երաշխիքները:

Ներկայումս նախապատրաստական փուլում է «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կներկայացվի Ազգային ժողովի քննարկմանը:

3.16. Կանանց իրավահավասարության իրավունք

Քաղաքացիներն անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները եւ պարտականությունները:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 15)

Ընտանիքը հասարակության բնական եւ հիմնական բջիջն է: Ընտանիքը, մայրությունը եւ մանկությունը գտնվում են հասարակության եւ պետության հովանավորության ու պաշտպանության

Ներքո: Կանայք եւ տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 32)

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իշխանության մարմիններում ամրագրված է կանանց պարտադիր մասնակցության տոկոսային տեղապահումը, որով խրախուսվում է զանազան տեսակի հասարակական միավորումներում կանանց ներկայացված լինելը, առանձնակի խրախուսվում և պետական աջակցություն են ստանում կանանց հասարակական կազմակերպությունները: Դրանք կարևոր քայլեր են երկրի կառավարմանը, հասարակական-քաղաքական կյանքին կանանց հավասար մասնակցությունն ապահովելու ճանապարհին:

Աշխատանքային օրենսգրքով կանանց համար սահմանված են որոշակի արտոնություններ՝ կապված ինչպես աշխատանքի պայմանների, այնպես էլ հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի հետ: Այդ իրավունքների պաշտպանության նպատակով հարկ կա հատուկ հսկողություն իրականացնել, հատկապես ոչ պետական համակարգի գործատուների նկատմամբ: Դա պետք է լինի նոր ձևավորված աշխատանքի տեսչության կարևորագույն խնդիրներից մեկը:

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական դժվարին պայմաններում խնդիրներ են առաջացել կապված մարմնավաճառության և կանանց սեռական շահագործման ենթարկելու հետ:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրը չունի երկրում հրատապ լուծում պահանջող այլ խնդիրներին հավասար սրություն, սակայն կանանց հիմնահարցերից կարևորը մնում է որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության ընդլայնումը /տես կանանց հիմնախնդիրներին նվիրված **թիվ 3 հավելվածը**/:

3.17. Երեխաների պաշտպանության իրավունք

Քաղաքացիներն անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից ունեն սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները եւ պարտականությունները:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 15)

Ընտանիքը հասարակության բնական եւ հիմնական բջիջն է: Ընտանիքը, մայրությունը եւ մանկությունը գտնվում են հասարակության եւ պետության հովանավորության ու պաշտպանության ներքո: Կանայք եւ տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 32)

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքն ամրագրել է երեխայի հիմնական իրավունքներն ու ազատությունները «Երեխայի իրավունքների մասին» եվրոպական կոնվենցիայի պահանջներին համապատասխան, սակայն այն բավարար չի կարող համարվել այդ իրավունքների իրականացման, իրավունքների պաշտպանության մեխանիզմների՝ հաճախ անորոշ և անկատար լինելու պատճառով:

ՀՀ Ընտանեկան նոր օրենսգիրքը նույնպես ոչինչ չի ավելացնում երեխայի իրավունքների պաշտպանության այդ մեխանիզմներին:

«Երեխայի իրավունքների մասին» օրենքում նշված են երեխայի իրավունքները պաշտպանող պետական լիազոր մարմինները: Ըստ ՀՀ կառավարության «Խճամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 111 որոշման, այդպիսի մարմիններ են համայնքների ղեկավարները, որոնք կարող են ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ՝ իրենց լիազորությունների իրականացմանն օժանդակելու և ստացված փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն տալու համար:

Համայնքների ղեկավարները նման հանձնաժողովներ ստեղծել են, դրանք գործում են հասարակական հիմունքներով, և ինչպես հասարակական հիմունքներով գործող ցանկացած մարմին, այս մարմինները նույնպես լիարժեք չեն ապահովում այն խնդիրների իրականացումը, որոնք կան երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում:

Հանձնաժողովները, խնդիր ունենալով ինքնուրույն հայտնաբերելու առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, հոգ տանելու նրանց մասին, վարելու նրանց հաշվառումը,

երեխաների խնամքի կազմակերպման և իրականացման հարցերով համագործակցելու մանկական հատուկ դպրոցների ու հաստատությունների հետ, իրենց խնդիրն են համարում միայն ստացված դիմումներին այս կամ այն կերպ, հաճախ նաև ձևական ընթացք տալը:

Հանժնաժողովներին կարևոր դեր է վերապահված երեխաների խնամքի իրականացման, տեսակցությունների սահմանման վերաբերյալ անջատ ապրող ծնողների միջև առաջացած վեճը դատական կարգով լուծելիս: Պարտադիր է համարվում հանժնաժողովի կարծիքը, որը բնականորեն պետք է հիմնված լինի անցկացված մանրակրկիտ ուսումնասիրությունների վրա: Սակայն նման ուսումնասիրությունները հաճախ կրում են ձևական բնույթ, կամ ընդհանրապես անց չեն կացվում, հատկապես՝ երբ ծնողները տարբեր համայնքների բնակիչներ են:

Կա օրինակ, երբ երեխաներին մորից վերցնելու և հորը հանձնելու վերաբերյալ դատական վեճով հանժնաժողովը, առանց որևէ ուսումնասիրություն անցկացնելու և միայն երեխաների հոր հետ առնչվելու արդյունքում, կարծիք է հայտնել մորից երեխաներին վերցնելու նպատակահարմարության մասին: Անտեսվել է նույնիսկ այն, որ հայրը չունի բնակարանային բավարար պայմաններ և աշխատանքով զբաղված լինելու պատճառով, երեխաներին թողնելու է առանց խնամքի: Նման եզրակացության հիման վրա երկու անչափահաս երեխաները հանձնվել են հորը, և հանժնաժողովին այլևս չի հետաքրքրել, թե երեխաներն ինչպիսի պայմաններում են հայտնվել:

Դատարանի վճռով երեխային ծնողներից մեկից, կամ այլ անձից հարկադիր վերցնելը և մյուս ծնողին հանձնելը, անջատ ապրող ծնողի տեսակցությունը երեխայի կամ երեխաների հետ իրականացվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով: Նման դեպքերում հանժնաժողովի ներկայացուցչի ներկայությունը պարտադիր է՝ երեխայի նկատմամբ հարկադրանք, բռնություն կիրառելը բացառելու նպատակով, մինչդեռ հանժնաժողովների անդամները հազվադեպ են մասնակցում տեսակցություններին, կամ մասնակցելիս չեն արձանագրում վճռի կատարման աննպատակահարմարությունը այնպիսի դեպքերում, երբ գալիս են հանդգման, որ վճռի պահանջների կատարումը հակասում է երեխայի շահերին:

Երևան քաղաքի մի շարք դպրոցներ կատարած այցելությունից հետո չի կարելի չանդրադառնալ այնտեղ տիրող անմխիթար սանիտարահիգիենիկ վիճակին:

Մի շարք դպրոցներում դասասենյակների միջին ջերմաստիճանը ձմռանը հասնում է առավելագույնը 10-12 աստիճանի, և այդ պայմաններում փորձում են դաս անել: Շատ դպրոցներ տաքացվում են ասբեստից պատրաստված էլեկտրական սալիկներով, ինչը խիստ վտանգավոր է առողջության համար:

Մեր գնահատմամբ, կա անհրաժեշտություն ունենալու երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և լայն լիազորություններով օժտված պետական հատուկ մարմին /տես հավելված4/:

3.18. Սեփականության իրավունք, Տնտեսական այլ իրավունքներ

Յուրաքանչյուր ոք ունի սեփականության եւ ժառանգման իրավունք: Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում: Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 28)

❖ Սեփականության բազմաձևությունը և դրանք հավասարապես պաշտպանելը երաշխավորված են ՀՀ Սահմանադրության 8 և 28 հոդվածներով: Սեփականությունից զրկելը թույլատրված է միայն դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Սեփականության օտարման հարցին անդրադարձել է նաև ՀՀ ***Սահմանադրական դատարանն իր 27.02.98թ. որոշմամբ*** և գտել է, որ հասարակության կամ պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ անհրաժեշտությունը և օտարման կարգն ու պայմանները ***յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է սահմանվեն օրենքով:***

Երևանի կառուցապատման ծրագրերով առաջ է եկել քաղաքացիների սեփական բնակարանները, շինությունները և հողատարածքները հասարակական կարիքների համար վերցնելու անհրաժեշտությունը: Այդ անհրաժեշտությունը սահմանվել է ոչ թե օրենքով,

ինչպես ասված է Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ, այլ ՀՀ կառավարության որոշումներով՝ «Երևանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրի իրականացման միջոցառումների մասին»՝ 16.07.01թ. թիվ 645, «Երևանի Հյուսիսային պողոտայի և Երևան քաղաքի օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու գնային առաջարկի ձևավորման և իրացման կարգը հաստատելու մասին»՝ 05.10.01թ. թիվ 950, նշված թիվ 950 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ 01.08.2002թ. թիվ 1169-ն, 29.01.04թ. թիվ 57-ն, «Երևանի Կենտրոն քաղաքի համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին»՝ 01.08.02թ. թիվ 1151-ն, «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող օտարման գոտիներում առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին»՝ 04.03.04թ. թիվ 399-ն, «Երևան քաղաքի Գլխավոր պողոտայում քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով պետության կարիքների համար վերցված տարածքում կառուցապատման ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին»՝ 17.06.04թ. թիվ 909-ն:

Առանձին օրենք, որը պետք է վերաբերեր հատկապես այս գործընթացին, չի ընդունվել, հղում է կատարվել քաղաքացիական և հողային օրենսգրքերի դրույթներին:

Առանձին օրենքի բացակայության հետևանքով է, որ այդ գործընթացում զանգվածաբար խախտվել են սեփականատերերի և օգտագործողների իրավունքները, և գործընթացի տնտեսական արդյունքը գնահատվում է բացասական:

Քննարկելով մարդու սեփականության և տնտեսական իրավունքների խախտումներին վերաբերող հարցերը, դրանք առաջին հերթին պետք է դիտարկվեն հենց աղքատության հաղթահարման ծրագրային խնդիրների շրջանակներում:

Հարցն այն է, որ Երևան քաղաքի բարեկարգման ու կառուցապատման լայնածավալ ծրագրի իրականացման հետ կապված՝ քաղաքացիներից վերցվում են նրանց սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքներն ու բնակարանները և հարյուրավոր ընտանիքներ դառնում են անտուն, քանի որ տրվող փոխհատուցման գումարները չեն կարող համարժեք համարվել և բավարար չեն մեկ այլ բնակարան ձեռք բերելու համար: Դրան զուգահեռ արհեստականորեն բարձրացվում են բնակարանների շուկայական գները, բնակարանի կարիք ունեցող այլ անձինք նույնպես զրկվում են բնակարան գնելու հնարավորությունից:

Բնակտարածության կարիք ունեցողների առկա բանակը փաստորեն համալրվում է այս ծրագրերով բնակարանագուրկ դարձող քաղաքացիներով, ինչը Երևանի կառուցապատման այդ ծրագրերի առաջին տնտեսական անշահավետությունն է, անհամապատասխանությունն «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» խնդիրներին:

ՀՀ կառավարությունը պարտավորություն ունի այն մի քանի տասնյակ քաղաքացիների հանդեպ, որոնց բնակարանները վերցվել և քանդվել են դեռևս 80-ական թվականներին և որոնց առ այսօր այլ բնակարան կամ համապատասխան փոխհատուցում չի տրվել: Կիսակառույցները, որոնցից նման քաղաքացիները պետք է ստանան բնակարան, այդպես էլ հիմնականում չեն կառուցվում կամ օտարվել և օտարվում են մասնավոր անձանց, որոնք այդ քաղաքացիներին բնակարան հատկացնելու պարտավորություն չեն ստանձնում: Այնինչ իշխանությունները նախ պարտավոր են լուծել նման քաղաքացիներին բնակարանով ապահովելու հարցը, քանի որ նրանք դարձել են բնակարանագուրկ պետական մարմնի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու հետևանքով:

Չեն լուծված բնակչինարարական կոուպերատիվների միջոցներով սկսված և ապա ռուբլու արժեզրկման հետևանքով այդպես էլ ավարտին չհասցված բնակարաններին վերաբերող խնդիրները: Այստեղ նույնպես բնակարանների սպասողների թիվը հարյուրների է հասնում:

Այն, որ նույն բնագավառին առնչվող մեկ կամ մի քանի խնդիրներ չլուծված՝ ավելանում է նույնանման նորը, գործընթացը ինքնին դարձնում է անշահավետ և անտրամաբանական:

❖ Բոլորն են կարևորում մեր հանրապետության մայրաքաղաքի բարեկարգումն ու կառուցապատումը: Սակայն ընդունելի չէ այդ բարեկարգման իրականացումը օրենքի պահանջների կոպիտ խախտումներով, օրենքի անտեսմամբ կամ կոպիտ շրջանցմամբ՝ ի հաշիվ բնակչության ունեզրկման, աղքատության ավելացման: «Հյուսիսային պողոտա և

կասկադ», «Գլխավոր պողոտա» ծրագրերն իրականացվել և իրականացվում են հենց այդ ճանապարհով, այդ ծրագրերի իրականացման անվան տակ տեղի է ունենում սեփականության վերաբաշխում, *անթույլատրելիորեն անարդարացի* վերաբաշխում, որի ընթացքում, ի հաշիվ հարյուրավոր ընտանիքների ունեզրկման, անօրինական շահույթ են ստանում առանձին «գործարարներ», և Երևան քաղաքի կենտրոնական հատվածները կենտրոնացվում են առանձին անհատների ձեռքերում:

Հայտնի է, որ Խորհրդային ժամանակներում, երբ սահմանափակված է եղել սեփականատերերի կողմից իրենց սեփականությունը տնօրինելու իրավունքը, հատկապես բնակարանների տնօրինման իրավունքը, Երևան քաղաքի կենտրոնական հատվածներում հարյուրավոր ընտանիքներ բնակտարածություն են ձեռք բերել սեփականատերերի հետ ներքին պայմանագրեր կնքելու ճանապարհով, որոնք այդպես էլ հետագայում օրինական ձևակերպում չեն ստացել, սակայն ձեռք բերողները և հետագայում նրանց հետնորդները մի քանի տասնյակ տարիներ այդ բնակարանները տիրապետել և օգտագործել են բացահայտ ու անընդմեջ՝ որպես սեփականություն, և վճարել են անշարժ գույքի հետ կապված բոլոր հարկատեսակները: Այն, որ քաղաքային իշխանությունները փորձ չեն արել և ժամանակին չեն որոշակիացրել նման բնակարանների կարգավիճակը, չեն ճանաչել և նույնիսկ զանազան ձևական պատճառաբանություններով մերժել են նման անձանց սեփականատիրական իրավունքների ճանաչումը, չի կարող հիմք հանդիսանալ նրանց այսօր սեփականատերեր չհամարելու և նման տարածքները նրանցից կամայականորեն վերցնելու համար: Այդպես վարվելը նշանակում է պետական մարմինների անթույլատրելի անգործության հետևանքները ծանրացնել շարքային քաղաքացու ուսերին: Հենց այդպես էլ վարվել և վարվում են ՀՀ կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը՝ Երևանի կառուցապատման ծրագրերն իրականացնելիս: Մի քանի տասնյակ ընտանիքներ, մեծ մասը՝ բազմանդամ, որոնք սեփականատերեր են համարվել դեռևս 30-40-ական թվականներից, այսօր դիտվում են միայն որպես տվյալ բնակարանների օգտագործողներ և վտարվում են աննշան փոխհատուցմամբ:

Նման վիճակ առաջացել է այն պատճառով, որ վերոհիշյալ ծրագրերը կազմելուց և գործողության մեջ դնելուց առաջ չի ճշտվել և չի հստակեցվել վերցման ենթակա տարածքների, դրանց վրա գտնվող կառույցների կարգավիճակը, դրանց տիրապետողներին հնարավորություն չի տրվել օգտվելու իրենց իրավունքների օրինական ձևակերպման օրենսդրական սկզբունքներից: Ընդհակառակը, պետական լիազորված մարմինն օգտագործել է իրավունքը բացառող ձևական հիմքերը և նույնիսկ արգելքներ է ստեղծել նման ձևական հիմքերը վերացնելու ճանապարհին:

Օրինակ՝ Փ. Բյուզանդի փողոցի թիվ 11 հասցեում փողոցի կողմից եռահարկ շինություն կա, որի բակի կողմում տասնյակ անհատական կառույցներ են՝ հողատարածքներով և ծառատեսակներով, սակայն չեն առանձնացված թիվ 11 հասցեից: Դրանք հիմնականում կառուցվել են դեռևս 20-ական թվականներին և հետագայում, տեղական իշխանության մարմինների համապատասխան թույլտվություններով, ենթարկվել են վերափոխումների ու վերակառուցումների: Այդտեղ բնակվողները բնակարաններին վերաբերող հարցերով հարաբերվել են պետական բոլոր տեսակի մարմինների հետ որպես սեփականատերեր և առարկությունների չեն հանդիպել, նրանք գործադիր կոմիտեներում կամ աշխատանքի վայրում չեն հաշվառվել որպես բնակարանի կարիք ունեցողներ և չեն օգտվել պետական բնակարանային ֆոնդի բնակարանի վարձակալ դառնալու իրավունքից, զրկվել են նաև բնակարանների սեփականաշնորհման արդյունքում հանրային բնակարանային ֆոնդից սեփականության մաս ստանալու իրավունքից: Դա տեղի է ունեցել միայն այն պատճառով, որ նրանք համարվել են այդ կառույցների սեփականատերեր՝ այն կառույցների, որոնք այժմ նրանցից վերցվում են՝ նրանց դիտելով ընդամենը որպես օգտագործողներ: Մարդիկ չեն կարող հասկանալ նման մոտեցումը, չեն հաշտվում այն իրողության հետ, որ տվյալ տանն ապրել են իրենց պապերը, ծնողները, ապա իրենք, երբեք խոսք չի եղել, որ դա իրենցը չէ ու հանկարծ դա խլվում է իրենցից, և հայտարարվում, որ դրա նկատմամբ իրենք սեփականատիրական որևէ իրավունք չունեն:

Արդեն ասվել է, որ կառուցապատման այս ծրագրերով քաղաքացիների գույքի օտարումը կատարվում է ՀՀ կառավարության որոշումներով և փաստորեն կառավարությունն է սահմանել անշարժ գույքի օտարման գոտին, օտարման անհրաժեշտությունը և կարգը նույնպես:

❖ ՀՀ Սահմանադրական դատարանը՝ «ԱԺ կողմից 27.12.95թ. ընդունված «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի ՀՀ Սահմանադրության 8 հոդվածին և 28 հոդվածի 2-րդ մասին համապատասխանության

վերաբերյալ հարցը որոշելու վերաբերյալ գործով» 27.02.98թ. կայացված որոշմամբ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասի իմաստին, ամրագրել է. «Անձի սեփականությունը՝ ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում՝ պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օտարման բացառիկ կարևորությունն ու նշանակությունը և կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության և պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվելու ... ՀՀ կառավարությունը չի կարող հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք»:

Ուժի մեջ են ՀՀ Սահմանադրության 8-րդ և 28-րդ հոդվածները, ուժի մեջ է նաև Սահմանադրական դատարանի հիշյալ որոշումը: Հետևաբար, երբ որևէ օրենք չի ընդունվել Երևանի կառուցապատման ծրագրերով օտարման գոտում ներառված անշարժ գույքի վերաբերյալ, երբ սեփականատերերը համաձայն չեն օտարմանը, ՀՀ կառավարությունն իրավասու չէ նման որոշումներ ընդունելու:

Կառավարության՝ վերը հիշատակված թիվ 950 որոշմամբ սահմանվում են փոխհատուցման պայմանները, հաշվարկման կարգը և այլ էական հանգամանքներ, որոնք պարտադրվում են սեփականատիրոջը, օգտագործողին: Կառավարությունը, հանդիսանալով տվյալ գործարքում պայմանագրի կողմ, իրավունք ունենալով նաև հարաբերությունը կարգավորող իրավական ակտ ընդունելու, մյուս կողմի՝ սեփականատիրոջ նկատմամբ ձեռք է բերում գերադասելի կարգավիճակ և դատական վեճի դեպքում, երբ սեփականատերը վիճարկում է իր գույքի օտարման կարգն ու պայմանները, վեճը լուծելիս դատարանը հենվում է վեճի կողմ հանդիսացող կառավարության ընդունած իրավական ակտի վրա, այսինքն՝ նման վեճի լուծումը՝ հօգուտ վեճի կողմ հանդիսացող կառավարության, կանխորոշված է:

Կառավարության թիվ 950 որոշմամբ նախատեսված է վերցվող բնակարանն օգտագործողին հատկացնել աջակցություն 2000 դոլարի չափով՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար, և խրախուսման գումար 1500 դոլարի չափով, եթե 5 աշխատանքային օրվա ընթացքում նրանք կազատեն բնակարանը կամ տարածքը: Խոսքն այստեղ այն անձանց մասին է, ովքեր չեն օգտվել բնակարանի սեփականաշնորհումից և այս կամ այն պատճառով չեն հաստատել կամ չեն օրինականացրել սեփականության իրենց իրավունքը: Թե ինչպես պետք է ընտանիքը տվյալ գումարով լուծի իր բնակարանային խնդիրները, կառավարությանը չի հետաքրքրում:

Իրացնողը քաղաքացիների հետ կնքել է հիմնականում ոչ թե փոխհատուցման պայմանագիր, այլ առուվաճառքի պայմանագիր՝ այն դեպքում, երբ գնային առաջարկը եղել է փոխհատուցման առաջարկ, երբ պայմանագիր կնքվել է շատ դեպքերում դատարանի վճռի հիման վրա, միայն սեփականատիրոջ կամքին հակառակ: Ինչպես առուվաճառքի պայմանագրի, այնպես էլ փոխհատուցման պայմանագրի դեպքերում հատկացվող գումարներից պահվել է 10 տոկոս եկամտահարկ՝ անտեսելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի այն պահանջը, որ փոխհատուցման գումարը հարկվող եկամտից ենթակա է նվազեցման ամբողջապես:

❖ Վերցվող անշարժ գույքի գնահատումները կատարվել են «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի կողմից, որի հետ պայմանագիր կնքելով՝ Ծրագրերի իրականացման գրասենյակը /ԾԻԳ/ նրան տվել է գնահատման մենաշնորհ և դարձրել շահագրգիռ կողմ գույքը հնարավորինս ցածր գնահատելու հարցում:

Գնահատողը երբեք հաշվի չի նստել գնահատվող գույքի սեփականատիրոջ հետ, չի քննարկել և հաշվի չի առել գնահատման վերաբերյալ նրա առարկությունները:

Գնահատելով տեղի ունեցածը որպես մեր քաղաքացիների սեփականության և տնտեսական այլ իրավունքների կոպիտ խախտում, Պաշտպանի կողմից ՀՀ կառավարությանն առաջարկվել է՝ Երևանի քաղաքապետին պարտավորեցնել վերանայելու «Հյուսիսային պողոտա և Կասկադ» ծրագրի կապակցությամբ կնքված գույքի օտարման բոլոր պայմանագրերը՝ թույլ տրված խախտումները վերացնելու, խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Առ այսօր տեղաշարժ չի եղել և նույն կարգով իրականացվում են «Երևանի Գլխավոր պողոտա» ծրագրով իրացման գոտում ներառված տարածքների

օտարումները, այն տարբերությամբ միայն, որ այս դեպքում որպես իրացնողներ հանդես են գալիս հինգ մասնավոր կազմակերպություններ և մեկ ֆիզիկական անձ («Էլիտ փրոջեքտ շին», «Գլենդեյլիլ», «Գրիար», «Ավանտուր», «Գապ» ՍՊԸ-ները և Մելիք Գասպարյանը, որպես ֆիզիկական անձ)՝ համաձայն ՀՀ կառավարության 17.06.04թ. թիվ 909-Ն որոշման, որով Երևանի քաղաքապետին թույլատրվել է առանց մրցույթի հողամասեր տրամադրել նրանց՝ կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով: Նրանք այսօր հանդես են գալիս որպես պայմանագրի կողմ և, բնականաբար, պայմանագրեր կնքելու առաջարկներում առաջ են մղում իրենց շահը՝ վճարել հնարավորին չափ պակաս: Նրանց տրամադրվում են պետության կարիքների համար վերցվող հողամասերը կառուցապատման ծրագրեր իրականացնելու համար 3 տարի ժամանակով, որից հետո նրանք նույն տարածքները վարձակալում են 99 տարի ժամանակով:

Կառավարության թիվ 909-Ն որոշմամբ խոսվում է պետության կարիքների համար վերցված հողատարածքներն այս կազմակերպություններին և ֆիզիկական անձին տրամադրելու մասին, մինչդեռ նրանք այսօր հանդես են գալիս նաև որպես դեռևս չվերցված տարածքների օգտագործողներ և սեփականատերերին ու օգտագործողներին իրենք են գնալին առաջարկներ ներկայացնում: Ստացվում է, որ քաղաքապետարանը տնօրինել է քաղաքացիների չդադարեցված իրավունքները՝ գտնելով, որ կառավարության որոշումը բավարար է տվյալ տարածքներում քաղաքացիների՝ օրենքով պաշտպանվող իրավունքները դադարեցված համարելու համար:

❖ ***Քաղաքացիների տնտեսական իրավունքները զանգվածաբար խախտվում են*** նաև Երևան քաղաքի վարչական սահմանագծում ներառված տարածքներից հողահատկացումներ կատարելիս խտրական քաղաքականություն կիրառելու, հողատարածքի փաստացի օգտագործողի իրավունքի հետ հաշվի չնստելու, հողի նպատակային նշանակությունը կամայականորեն փոխելու, ձևական մրցույթներ և աճուրդներ անցկացնելու արդյունքում:

Երևան քաղաքի վարչական տարածքի գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործողները նախկինում եղել են կոլտնտեսությունները: Դրանց լուծարման կապակցությամբ կոլտնտեսության անդամները ՀՀ Նախարարների խորհրդի 13.06.91թ. թիվ 397 որոշմամբ զրկվել են հողի սեփականաշնորհումից օգտվելու իրավունքից, հողը նրանց տրվել է վարձակալության 10 տարի ժամկետով: Վարձակալության պայմանագրերը կնքվել են նախկին գործադիր կոմիտեների միջոցով՝ հողային բարեփոխումների շրջանային հանձնաժողովների որոշումների հիման վրա: Վարձակալության այդ պայմանագրերը, չնայած քաղաքացիների դիմումներին, պետական գրանցումներ չեն ստացել այն պատճառաբանությամբ, որ «Երևան քաղաքի կարգավիճակի մասին» ՀՀ նախագահի 1997թ. հրամանագրով քաղաքի վարչական սահմանագծում ներառված հողերի հատկացման իրավունքը տրվել է Երևանի քաղաքապետին:

❖ Երևանի Նորագավիթ թաղամասի նախկին կոլտնտեսականներին որպես սեփականություն հատկացվել են հողատարածքներ և նրանց տրվել են սեփականության ժամանակավոր վկայականներ հողային բարեփոխումների հանձնաժողովի կողմից: Հետագայում այս վկայականները նույնպես հիմք չեն հանդիսացել նրանց սեփականության իրավունքները ճանաչելու և վկայականները փոխանակելու համար:

Այնուհետև ՀՀ կառավարության 02.10.03թ. թիվ 1253-Ն որոշմամբ այդ հողատարածքները նրանցից վերցվել են պետության կարիքների համար և հատկացվել են «Էրեբունի» օդանավակայանի վերակառուցման և ընդարձակման ծրագրերի իրականացմանը: Քաղաքապետարանը չի ցանկանում նրանց դիտարկել որպես սեփականատերեր և տրամադրել համարժեք փոխհատուցում: Թվում է, թե այստեղ չէր կարող և չպետք է լիներ որևէ առարկություն, սակայն այդ հարցին վերաբերող մեր առաջարկը թեև չի մերժվել, սակայն առ այսօր նաև չի կատարվել:

Երևանի քաղաքապետի թիվ 1314-Ա /17.06.03թ./ որոշմամբ Կուրդինյան և Սեբաստիա փողոցների հատման մասում ընկած 1,5 հա հողամասն աճուրդով վաճառվել է քաղ. Էդիկ Սիմոնյանին՝ ուսումնական կենտրոն կառուցելու նպատակով: Մինչդեռ նույն տարածքը դեռևս 1994թ. 10 տարի ժամկետով վարձակալության է տրվել զոհված ազատամարտիկների ընտանիքներին: Քաղաքապետարանը ոչ միայն հաշվի չի առել տվյալ տարածքի նկատմամբ վարձակալների գներու նախապատվության իրավունքը, այլև այն,

որ վարձակալության պայմանագրի ժամկետը դեռևս լրացած չի եղել, և նաև այն, որ տարածքն օգտագործելի է դարձել միայն տվյալ վարձակալների միջոցներով:

ՀՀ կառավարության 27.03.03թ. թիվ 503-Ա որոշմամբ բավարարվել է Երևանի քաղաքապետի միջնորդությունը և քաղաքապետին թույլատրվել է Երևանի Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքից 3,0 հեկտար մակերեսով հողամաս, առանց մրցույթի, 50 տարի ժամանակով, վարձակալության տրամադրել «Ռենկո Արմեստեյտ» ՍՊԸ-ին՝ դիվանագիտական թաղամաս կառուցելու նպատակով, իսկ Լենինգրադյան փողոցը Իսակովի պողոտային կապող նախագծային ճանապարհի և «Արևի ինստիտուտ» ՓԲԸ-ի միջև եղած տարածքից 5.0 հեկտար մակերեսով հողամաս, առանց մրցույթի, վարձակալության իրավունքով, 50 տարի ժամանակով և գնման նախապատվության իրավունքով տրամադրել «Ֆրանկ Մյուլլեր Արմենիա» ՓԲԸ-ին՝ ժամացույցի մասերի արտադրության գործարան կառուցելու համար:

Այս հատկացումները նույնպես կատարվել են տարածքները օրինական օգտագործողների իրավունքների ու շահերի անտեսմամբ: Տարածքները ձեռք բերողները հասցրել են նույնիսկ վերափոխմանը իրենց իրավունքները:

❖ Դալմայի այգիների տարածքները նույնպես, որպես նախկին Շահումյանի անվան կոլտնտեսության տարածքներ, սեփականաշնորհման փոխարեն դարձյալ 10 տարի ժամանակով տրվել են վարձակալության նախկին կոլտնտեսականներին: Քանի որ այդ ժամկետը հիմնականում լրանում էր 2004թ. սեպտեմբերին, կառավարությունը և քաղաքապետարանը փորձ էին անում հետ վերցնել այդ տարածքները նույնպես:

Դալմայի այգիների հետ կապված ՀՀ կառավարության ծրագրերը որքանով են խրախուսելի, որքանով են հիմնավորված, այլ հարց է: Անհանգստացնող է այն, որ այդ ծրագրի իրականացման հետ կապվում է հարյուրավոր ընտանիքների ունեզրկումը՝ նրանց եկամտի միակ աղբյուրը հանդիսացող հողատարածքները վերցնելու հետևանքով:

Հանրահայտ է, որ քաղաքի վարչական տարածքի սահմանագծում ներառված մի շարք տարածքներ ի սկզբանե եղել են անօգտագործելի՝ ապարապատ տարածք լինելու պատճառով: Այդ տարածքների մեծ մասը մոտակայքում բնակվող այս կամ այն բնակչի ուժերով ու միջոցներով մաքրվել, լրացուցիչ հողահարստացվել է, դարձել է մշակելի հողատարածք և տասնյակ տարիներ, քաղաքային իշխանությունների գիտությամբ ու լռելյայն համաձայնությամբ բացահայտ ու անընդմեջ օգտագործվել է: ՀՀ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի հիման վրա այդ քաղաքացիները տվյալ տարածքների նկատմամբ ունեն ձեռքբերման վաղեմության ուժով օգտագործման կամ սեփականության իրավունքն իրավաբանորեն ձևակերպելու իրավունք: Հետևաբար, նման տարածքները տնօրինելուց առաջ, քաղաքապետը պարտավոր է օրենքով սահմանված դատական կարգով դադարեցնել փաստացի օգտագործողի այդ իրավունքը, եթե կան հիմքեր դրա օրինականացումը մերժելու համար:

Իրականում քաղաքապետարանը երբեք հաշվի չի նստում տարածքն օգտագործողի իրավունքների հետ, բավարար է համարում միայն այն փաստը, որ իրավունքը չի ստացել պետական գրանցում, այս կամ օգտագործումը ինքն է գնահատում որպես ապօրինի և անտեսման ենթակա:

Օրինակ, Թբիլիսյան խճուղուն հարող տարածքում քաղաքացի Սուրեն Եղյանն ավելի քան 17 տարի օգտագործում է քարերից իր մաքրած և մշակելի դարձրած 1000 քմ հողատարածք: 2003թ. դիմել է քաղաքապետին՝ իր օգտագործումն օրինականացնելու խնդրանքով: Առկա է եղել նաև թաղապետի որական եզրակացությունը: Քաղաքապետարանից տրվել է պատասխան, որ հարցը կքննարկվի տվյալ տարածքում քարտեզագրման աշխատանքների ավարտից հետո: Երբ են ավարտվել քարտեզագրման աշխատանքները՝ հայտնի չէ, սակայն Եղյանի դիմումն այլևս չի քննարկվել: Դրա փոխարեն 31.07.04թ. տարածքն աճուրդով վաճառվել է, ինչին Եղյանը չի տեղեկացվել:

Երևանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ սեփականության օտարման վերաբերյալ կնքված բոլոր պայմանագրերը ենթակա են վերանայման՝ սեփականության իրավունքների խախտումները վեր հանելու և վերացնելու նպատակով:

Հողային օրենսգրքում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ, սահմանելով, որ հողատեսքերի նպատակային նշանակությունը կարող է փոխվել միայն այդ մասին օրենք ընդունելու միջոցով:

❖ Պակաս կարևոր չեն մեր քաղաքացիների տնտեսական իրավունքների խախտումները պետական ունեցվածքի սեփականաշնորհման և ապապետականացման դեպքերում:

Հայտնի է, որ ապապետականացվող խոշոր ձեռնարկությունները, մինչև ապապետականացումը, կուտակած են լինում աշխատավարձի խոշոր պարտքեր: Ապապետականացման պայմանագրով պարտքը փոխանցվում է նոր սեփականատիրոջը, որն էլ հետագայում, չկարողանալով կամ չցանկանալով վերագործարկել ձեռնարկությունը, հայտարարում է անվճարունակ և աշխատավարձի պարտքերը մնում են չվճարված:

Մեր գնահատմամբ, պետական մարմինն իրավասու չէ աշխատավարձի գծով իր պարտքերը փոխանցել օբյեկտը գնողին՝ չնախատեսելով այդպիսի պարտքերը մարելու կոնկրետ պարտավորություն:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության իմաստով, պարտքի փոխանցումն այլ անձի թույլատրելի է միայն պարտատիրոջ համաձայնությամբ: Պետական մարմինը պարտքը գնորդին փոխանցելիս չի ստացել այն աշխատողների համաձայնությունը, որոնց աշխատավարձի պարտքեր է ունեցել:

Ներկա դրությամբ ապապետականացված «Նաիրիտ», «Վանաձորի մանրաթելեր» գործարանները, Վանաձորի ուղևորատրանսպորտային ձեռնարկությունը, «ԴՎին» հյուրանոցը և այլ ձեռնարկություններ ունեն չվճարված աշխատավարձի զգալի պարտքեր, որոնց մարման համար երաշխիքներ չեն նախատեսված, չեն կատարվում նույնիսկ դրանք բռնագանձելու վերաբերյալ դատարանների վճիռները:

Անհրաժեշտ է սեփականաշնորհված կամ ապապետականացված ձեռնարկությունների՝ մինչև սեփականաշնորհումը կամ ապապետականացումն ունեցած աշխատավարձի բոլոր տարիների պարտքերի մարումն իրականացնել պետական բյուջեի միջոցներով:

3.19. Կրթության իրավունք

Յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 35)

Երկրում անվճար տարրական և միջնակարգ կրթություն ստանալու իրավունքի իրականացումն ապահովված է և կրթության ոլորտին հատկացվող նյութական միջոցների ամենամյա ավելացումները հնարավորություն են ստեղծում աստիճանաբար հասնել բարեկարգ և պատշաճ կահավորումներով, տեխնիկապես հագեցած դպրոցներ ունենալուն հանրապետության բոլոր բնակավայրերում: Ուսուցիչների աշխատավարձերի ամենամյա բարձրացումները, նրանց համար մասնագիտական վերապատրաստման դասընթացների անցկացումները և ընդհանրապես դպրոցի նկատմամբ ցուցաբերվող հատուկ ուշադրությունը պետք է հանգեցնի նաև միջնակարգ կրթության որակի կտրուկ բարձրացմանը:

Խրախուսելի են նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները վերականգնելուն ուղղված միջոցառումները: Միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորության ապահովումը կրթության իրավունքի իրականացման կարևորագույն երաշխիքներից է, և տնտեսության զարգացմանը զուգընթաց, կնպաստի նաև աշխատանքի իրավունքի իրականացմանը:

Կրթության իրավունքի իրականացման խնդրում հատկապես կարևորվում է բարձրագույն կրթության հասանելիության ապահովումը բնակչության աղքատ խավերի համար: Դա առաջին հերթին հնարավոր է ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման համակարգի կատարելագործման, պետպատվերի ավելացման, վճարովի համակարգում արտոնությունների շրջանակի ընդարձակման, ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին վարձավճարից ազատելու ճանապարհով:

Կրթության բնագավառին վերաբերող բոլորներ են ստացվել՝ կապված Ռուսաստանի Դաշնության հետ կնքած միջպետական պայմանագրի հիման վրա բարձրագույն կրթությունը շարունակելու համար գործողված անձանց մի մասին մնան հնարավորություն չտրամադրելու, ինչպես նաև զինվորական ծառայությունից վերադարձածին բարձրագույն ուսումնական հաստատությունում չվերականգնելուն: Պաշտպանի ակտիվ միջամտությամբ այդ խնդիրները դրական լուծում են ստացել:

Ստացվել է նաև բողոք՝ բժշկական համալսարանի ընդունելության քննությունների արդյունքներով ընդունելություն կատարելիս խտրական մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ: Այն նույնպես դրականորեն է լուծվել Պաշտպանի միջամտությամբ:

3.20. Մշակութային և հեղինակային իրավունք

Յուրաքանչյուր որ ունի գրական, գեղարվեստական, գիտական եւ տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու եւ հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Ստավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 36)

Գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի հռչակումը չի կարող բավարար համարվել այդ իրավունքներից օգտվել կարողանալու համար:

Այդ իրավունքի իրականացումը լիարժեք կարող է դառնալ միայն պետության կողմից մարդու ստեղծագործական գործունեության համար բավարար պայմաններ ստեղծելու, առանձնակի հոգատարություն և ֆինանսական պատշաճ աջակցություն ապահովելու դեպքում:

Գրական, գեղարվեստական ստեղծագործության հեղինակն այսօր միշտ չէ, որ կարող է հրատարակել իր ստեղծագործությունը, քանի որ այստեղ նույնպես գործում է շուկայի օրենքը և հրատարակվել ցանկացող անհայտ հեղինակը դա պետք է իրականացնի իր միջոցներով, իր հնարավորություններով, հակառակ դեպքում կշարունակի մնալ անհայտ, չճանաչված:

Այն, որ մշակույթի գործիչների միություններին իրենց այս կամ այն սպասարկման օբյեկտից զրկելուն ուղղված պետականորեն իրականացվող գործողությունները եզակի չեն, ինքնին վկայում է, որ հասարակության այս խավը պատշաճ ուշադրության չի արժանանում: Դրա վկայությունն է Գրողների միության պոլիկլինիկական նրանցից վերցնելու փորձը, մշակութային հաստատություններ փակելը, այդպիսի հաստատությունների ֆինանսավորման չափը և այլն:

Գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրականացման երաշխիքներ են գրադարանային ցանցի եթե ոչ ընդարձակումը, ապա գոնե եղած գրադարանների պահպանումը, պատշաճ ֆինանսավորումը, գրականության նորացումը և համալրումը:

Ավ. Իսահակյանի անվան գրադարանի հետ սկսված և դեռևս շարունակվող պատմությունը, երբ փորձ է արվում փակել մի գրադարան, որը նաև մշակութային պատմություն է, որը հասանելի է հասարակության առավել մեծ խմբերի, արդեն իսկ վկայում է, որ անտեսված է գիտության նվաճումներից օգտվելու, մշակութային կյանքին մասնակցելու հնարավորության ապահովումը: Որտեղ է մարդն առաջին հերթին ծանոթանալու գիտության նվաճումներին, մասնակցելու մշակութային կյանքին, եթե ոչ գրադարանում:

Տարեցտարի պակասում է պետության կողմից պահպանվող պատմամշակութային հուշարձանների թիվը, ինչը ինքնին նշանակում է, որ եկող սերունդը զրկվում է իր ժողովրդի կենդանի պատմությանն առնչվելու հնարավորություններից:

Երևանի կառուցապատման ծրագրերն իրականացվում են նաև ի հաշիվ մշակութային մի շարք արժեքների ոչնչացման՝ քանդվում են շինություններ, որոնք պատմական արժեքներ են իրենց հիմնադրողի կամ որևէ ազգային մեծության անվան հետ կապված:

Այս հարցերի հետ կապված առաջանում են լուրջ խնդիրներ, եղել են հասարակական քննարկումներ, սակայն դրական լուծումներ դեռևս չկան:

3.21. Սոցիալական պաշտպանության իրավունք

Յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք: Յուրաքանչյուր որ ունի արդարացի եւ պետության կողմից սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 29)

Յուրաքանչյուր քաղաքացի ունի իր եւ իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաեւ կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրավունքի իրականացման համար:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 31)

Յուրաքանչյուր քաղաքացի ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 33)

Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Բժշկական օգնության եւ սպասարկման կարգը սահմանվում է օրենքով: Պետությունն իրականացնում է բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստում ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացմանը:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 34)

Հայաստանի Հանրապետությունը սահմանադրությամբ հռչակված է որպես սոցիալական պետություն: Այստեղից էլ հետևում է պետության տնտեսական քաղաքականության նպատակաուղղվածությունը՝ երկրի տնտեսական զարգացումն ապահովելու միջոցով հասնել բնակչության սոցիալապես լիակատար պաշտպանված լինելուն: 2003-2004թթ. երկրում արձանագրվել է տնտեսական աճ, ինչը հնարավորություն է տվել բյուջեում ավելացած միջոցներով մեծացնել սոցիալական ոլորտի մի շարք բնագավառների՝ բուժսպասարկման, կրթության, սոցիալական կենսաթոշակային ֆոնդի, գործազրկության և աղքատության նպաստների և նման այլ ոլորտների ֆինանսավորումը:

2004թ. հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձի չափ է սահմանված 13 հազար դրամը, որն ընդունվել է որպես կենսաապահովման համար անհրաժեշտ ամենացածր մակարդակ:

Բնակչության կամ մարդկանց որոշակի խմբերի սպասարկում իրականացնող և բյուջեից վարձատրվող աշխատողի նյութական և կենցաղային պայմանների ապահովության աստիճանով է հիմնականում պայմանավորվում իր պարտականությունների կատարման նկատմամբ նրա դրսևորած սրտացավությունը, ջանասիրությունը, նաև կոռումպացվածությունը: Ունենք իրավիճակ, երբ առավել ծանր և դժվարին աշխատանքային, ծառայողական պարտականություններ կատարող անձինք ստանում են ոչ համարժեք վարձատրություն, չունեն նաև բավարար բնակկենցաղային պայմաններ:

❖ Այս առումով հատկապես կարևորվում են բանակը և քրեակատարողական հիմնարկները, որտեղ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից առավել խոցելի խմբեր են պարտադիր զինվորական ծառայության շարքային և սերժանտական կազմը բանակում և անազատության պայմաններում պահվող անձինք քրեակատարողական հիմնարկներում:

Բանակում հրամանատարական կազմին են հանձնվում պատանիներ, որոնք դեռևս կարիք ունեն հոգատարության, պաշտպանության, կարիք ունեն սովորելու և կյանքը ճանաչելու: Հրամանատարական կազմի վրա է դրվում այս անձանց, այս պատանիների բոլոր տեսակի իրավունքների պահպանումն ու պաշտպանումը՝ այդ թվում կյանքի, բժշկական օգնություն ստանալու, կենսաապահովման բավարար պայմաններ ունենալու և սահմանադրությամբ ու միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով ամրագրված այլ իրավունքները:

Պատասխանատու և ծանր պարտականությունների այսպիսի շրջանակ ունեցող զինծառայողի կողմից իր պարտականությունների կատարման մեջ ամենանընչան թերացումը պարտադիր պետք է հանգեցնի նրա ղեկավարմանը հանձնված պատանիների իրավունքների խախտման: Իր պարտականությունների կատարման մեջ չի կարող չթերանալ զինծառայողը, որի նյութական բավարարման և բնակկենցաղային խնդիրները չեն լուծված, երբ այդ հոգսն ամեն օր, ամեն պահ նրան կտրում է ծառայողական պարտականությունների կատարումից:

Քրեակատարողական հիմնարկներում մեծ է ծառայողական անձնակազմի կոռումպացման ռիսկը, եթե ծառայողները բավարար վարձատրություն չեն ստանում և նյութապես ապահովված չեն, իսկ նման ծառայողն իր կոռուպցիոն նպատակներն

իրականացնում է անագատության մեջ գտնվող անձանց իրավունքների խախտման, իրավունքների անօրինական սահմանափակման ճանապարհով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բանակի հրամանատարական կազմի ֆինանսական ապահովման մակարդակը հեռու է բավարար լինելուց:

Դրան զուգահեռ, չեն լուծված ծառայության կամ բնակության վայրում բնակարանով նրանց ապահովելու խնդիրները: Ծառայության վայրից դուրս բնակվող զինվորականների համար չի ապահովվում նրանց ծառայության վայր տեղափոխող տրանսպորտ նույնիսկ այն դեպքերում, երբ հնարավորություն կա նույն երթուղով մեկ տասնյակից ավելի անձանց ծառայության վայր հասցնելու:

Քրեակատարողական հիմնարկներն Արդարադատության նախարարության ենթակայությանը հանձնելուց հետո զգալի աշխատանքներ են կատարվել շինությունների վերակառուցման, վերանորոգման և նման հիմնարկները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու ոլորտում: Ներդրվել են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ սոցիոլոգիական, հոգեբանական, իրավաբանական ծառայությունները: Սակայն ցածր վարձատրության հետևանքով այդ ծառայությունները կոմպլեկտավորված չեն որակյալ մասնագետներով և մոտակա ժամանակներում, քանի դեռ լուծված չէ բավարար վարձատրության խնդիրը, չեն կոմպլեկտավորվի:

Քրեակատարողական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի բարձրացում էր նախատեսված 2004թ. հունվարի 1-ից: Առ այսօր այդ խնդիրը չի լուծված:

ՀՀ առողջարարության նախարարությունը լուրջ անելիքներ ունի քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների նյութական և կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ:

❖ Խոցելի տեղ է նաև դատարանների նյութական ապահովման հարցը: Նյութատեխնիկական միջոցների ձեռք բերման համար բյուջեից կատարվող ֆինանսական հատկացումները դատարաններին խիստ անբավարար են և մշտապես զգացվում է թղթի, գրասենյակային պարագաների, նաև դատարանի ունեցած համակարգչային տեխնիկայի սպասարկման համար անհրաժեշտ միջոցների սղությունը, ինչը հանգեցնում է դատական ակտը դատավարության կողմին հանձնելն ուշացնելուն, պահանջվող քանակի օրինակներ չտրամադրելուն, երբեմն նաև նրան անօրինական պահանջներ ներկայացնելուն:

Այս ամենից հետևում է, որ ցանկացած ծառայության՝ բյուջեից կատարվող ֆինանսավորում պետք է կատարել այնպիսի հաշվարկով, որ ապահովվի տվյալ ծառայության պահանջմունքների բավարարման գոնե միջին մակարդակը:

❖ Նվազագույն աշխատավարձի չափի ավելացմանը զուգահեռ, տրամաբանական է, որ պետք է ավելացվեին նաև կենսաթոշակների նվազագույն չափերը: Սակայն առ այսօր ՀՀ կառավարության 19.06.03թ. թիվ 707-ն որոշմամբ սահմանված հիմնական կենսաթոշակի նվազագույն չափը՝ 3000 դրամ, մնացել է անփոփոխ: Այսօր բավարար չեն կարող համարվել ծերերին ու հաշմանդամներին, պատերազմի վետերաններին, զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողներին կամ նրանց ընտանիքի անդամներին և նման կատեգորիային պատկանող այլ անձանց տրվող կենսաթոշակներն ու նպաստները: Հենց վճարվող կենսաթոշակի, նպաստի, տրվող այս կամ այն բնույթի օգնության չնչին լինելուց է, որ բողոքում են այս խմբերին պատկանող քաղաքացիները:

Թեև զգալիորեն բարելավվել է կենսաթոշակների և նպաստների հաշվարկման և վճարման կարգը, նախատեսված ժամկետներում վճարելը, այնուամենայնիվ վատ վարչարարության, կոռուպցիայի առկայության հետևանքով զգալի թիվ են կազմում կենսաթոշակառուների և նպաստառուների կողմից տրվող բողոքներն ու դժգոհությունները:

Ընտանեկան նպաստ ստանալու, այս կամ այն օժանդակությունն ստանալու իրավունքի տրամադրման հարցերում երբեմն տեղ են գտնում քաշքշուկը, կամայական մոտեցումները, ինչը և հանգեցնում է դժգոհության, կասկածի տակ է առնվում սոցիալական օժանդակություններից առաջացած միջոցների բաշխման արդարացիությունը:

❖ Ներկայումս կենսաթոշակատուների համար հրատապ խնդիր է դարձել **սոցիալական քարտ չունենալու դեպքում իրենց թոշակ չվճարելու** խնդիրը: ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի հայտարարության համաձայն, **այդպիսի կենսաթոշակատուների թիվը կազմում է մոտ 11 հազար**: Ընդ որում, այդ թոշակատուներից 2778-ը սոցիալական քարտեր չեն ստացել նախկին «խորհրդային» անձնագրերը փոխած չլինելու պատճառով, 3813-ը չեն դիմել քարտեր ստանալու համար, բացակայում են 539-ը և **սոցիալական քարտեր ստանալուց հրաժարվել են միայն 461 թոշակատուներ**:

Ստացվում է, որ մարդկանց սոցիալական պաշտպանության համար ստեղծված քարտերի կիրառությունն ուղղված է մարդկանց շահերի դեմ:

❖ Չի լուծված Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին տրվող կենսաթոշակների և արտոնությունների չափերի հավասարեցումը Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրվող չափերին, ինչը նախատեսված է միջպետական պայմանագրերով: Չի կարգավորվում անհատական բնակելի տուն կառուցելու համար բռնադատվածներին կամ նրանց առաջին հերթի ժառանգներին արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկեր տրամադրելու հարցը, այն տարիներ շարունակ չի լուծվում:

❖ Խնդիր է առաջանում կապված «Բռնադատվածների մասին» օրենքի 6-րդ հոդվածի ձևակերպման հետ, ըստ որի ՀՀ տարածքից բռնադատվածներին իրենց նախկին բնակության վայրում տրամադրվում է սահմանված չափի հողատարածք՝ բնակարանային անհատական շինարարության համար: Օրենքի՝ «իրենց նախկին բնակության վայրից» հասկացությունը չարաշահվում է Երևանի քաղաքապետարանի կողմից և երևանաբնակ քաղաքացիներին, եթե նրանք բռնադատվել են հանրապետության այլ բնակավայրերից, նույնիսկ հնարավորության առկայության դեպքում, մերժվում է Երևանում հողատարածք հատկացնելը:

Անհասկանալի տրամաբանությամբ ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածով բռնադատվածների՝ հողատարածք ստանալու իրավունքը սահմանափակված է երկու տարով, հաշված 28.11.02 թվականին հողվածում կատարված փոփոխության օրվանից, և արդեն բռնադատվածներն այդ իրավունքից չեն օգտվում:

Պաշտպանին բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների կողմից սույն թվականի մարտի 1-ի դրությամբ հասցեագրվել են 20-ից ավելի բողոքներ: Ստացված բողոքների ուսումնասիրությունը վեր է հանում այս ոլորտի իրավական կարգավորման հետևյալ հիմնահարցերը.

○ **Բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների կողմից օրենքով սահմանված կարգով հողատարածք ստանալու իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակումը:**

“Բռնադատվածների մասին” ՀՀ օրենքով բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների կողմից հողատարածք ստանալու իրավունքի իրականացումը չի սահմանափակվում որևէ ժամկետով: Սակայն մնան սահմանափակում նախատեսվել է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետով, համաձայն որի պետության սեփականություն հանդիսացող հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը նշված հոդվածի 1-ին կետով սահմանված դեպքերում երկու տարի է: Հետևաբար, բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին պետության սեփականություն հանդիսացող հողատարածքները կարող էին անհատույց տրամադրվել մինչև 01.04.2004թ.: Մեր կարծիքով բռնադատվածների և նրանց առաջին հերթի ժառանգների կողմից օրենքով սահմանված կարգով հողատարածք ստանալու իրավունքի ժամկետային սահմանափակումը հիմնավորված չէ և հանգեցնում է նրանցից շատերի իրավունքների իրականացման անհնարինությանը:

Դիմումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձինք և նրանց առաջին հերթի ժառանգները հաճախ օբյեկտիվ պատճառներով սահմանված ժամկետում չեն կարողացել օգտվել օրենքով սահմանված արտոնություններից: Նման խոչընդոտներ կարող էին հանդիսանալ բռնադատվածի առողջական վիճակը, տարիքը, օրենքով սահմանված արտոնությունների վերաբերյալ իրազեկված չլինելը, բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձի առաջին հերթի ժառանգի անչափահաս լինելը

և այլ հանգամանքներ: Միայն Երևանի քաղաքապետարանից ստացված տվյալներից պարզվել է, որ 2004թ. ընթացքում Երևանի քաղաքապետարան են դիմել բռնադատվածների 38 ընտանիքներ՝ բնակարանային անհատական շինարարության համար պետության սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց տրամադրելու խնդրանքով, սակայն ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված ժամկետը լրանալու հիմքով նրանց դիմումները մերժվել են:

Բացի այդ, ՀՀ հողային օրենսգրքով սահմանված երկամյա ժամկետի կիրառումը հստակեցնելու անհրաժեշտություն կա: Մասնավորապես, ՀՀ հողային օրենսգրքի ձևակերպմամբ. «Պետության սեփականություն հանդիսացող հողամասերի անհատույց տրամադրման ժամկետը սույն հոդվածի 1-ին կետով սահմանված դեպքերում երկու տարի է»:
Այս ձևակերպումից պարզ չէ, թե նշված ժամկետը նախատեսված է անձի կողմից իրավասու մարմիններին դիմում ներկայացնելու, թե, անկախ դիմումը ներկայացնելու ժամանակից, հողատարածքի տրամադրման համար:

Մեր կարծիքով, բռնադատվածների և բռնադատվածների առաջին հերթի ժառանգների կողմից մինչև 01.04.04թ. տրված դիմումների հիման վրա հողատարածքների տրամադրումը պետք է կատարվի առանց ժամկետի սահմանափակման: Հակառակ դեպքում անհասկանալի կլիներ այդ դրույթի նախատեսման նպատակը, քանի որ ժամկետի լրանալը կարող էր կախված լինել բացառապես հողատարածք հատկացնող մարմնի հայեցողությունից: Նույնիսկ բռնադատվածի կողմից մինչև 2002թ. իրավասու մարմիններին դիմումը ներկայացված լինելու պարագայում, համապատասխան մարմնի անգործության կամ դանդաղկոտության պատճառով հողամասը կարող է չհատկացվել քաղաքացուն՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալու հիմքով: Ուստի, պետական մարմնի անգործության կամ վատ աշխատանքի հետևանքով քաղաքացին զրկված կլինի օրենքով իրեն վերապահված իրավունքների իրականացումից:

Ժամկետի կիրառման առումով առավել հստակ ձևակերպում է տրված 10.06.1993թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» օրենքում: Համաձայն օրենքի 29-րդ հոդվածի. «Մինչև 1998թ. դեկտեմբերի 31-ը սահմանված կարգով տրված դիմումների հիման վրա բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումն իրականացվում է առանց ժամկետի սահմանափակման»: ***Մեր կարծիքով նույն կերպ պետք է ձևակերպվի ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետը:***

○ **Բռնադատվածներին տրամադրվող փոխհատուցման՝ օրենքով սահմանված չափը:** «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ բռնադատվածի սեփականությունը հանդիսացող բռնագրավված գույքի, նրա կողմից վճարված տուգանքի կամ պատիժը կրելու ընթացքում չստացած աշխատավարձի դիմաց տրվում է միանվագ դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի տասներկուպատիկ չափով: Հետևաբար, օրենքի այս դրույթին համապատասխան բոլոր բռնադատվածներին, անկախ նրանցից բռնագրավված գույքի, վճարված տուգանքի և պատիժը կրելու ընթացքում չստացած աշխատավարձի չափի, տրամադրվում է միանվագ դրամական փոխհատուցում տասներկու հազար դրամի չափով, ինչը մեր կարծիքով առնվազն չի համապատասխանում ողջամտության սկզբունքին: Ավելին, այս նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 28-րդ և Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված համարժեք փոխհատուցման սկզբունքին, ինչպես չափի, այնպես էլ փոխհատուցման որևէ տարբերակման բացակայության արդյունքում:

Հարկ է անդրադառնալ նաև «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի միջև առկա անհամապատասխանությանը: Մասնավորապես, «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն մահապատժի դատապարտված, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելիս կամ այդ պատիժը կրելուց հետո մահացած բռնադատվածի առաջին հերթի ժառանգներն օգտվում են նշված օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված արտոնություններից: Ուստի, նշված հոդվածի բովանդակությունից բխում է, որ բռնադատվածների առաջին հերթի ժառանգները չեն օգտվում օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ բռնադատվածի սեփականությունը հանդիսացող բռնագրավված գույքի, նրա կողմից վճարված տուգանքի կամ պատիժը կրելու

ընթացքում չստացած աշխատավարձի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից: Նշված նորմը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 11-րդ մասին, համաձայն որի արդարացվածի մահվան կամ անգործունակության դեպքում պահանջի իրավունքը անցնում է նրա մոտակա հերթի ժառանգներին: Հետևաբար, արդարացվածի մոտակա հերթի ժառանգները որպես հատուցում իրավունք ունեն ստանալ աշխատավարձը, թոշակը, նպաստները, այլ եկամուտներ, որոնցից նա զրկվել է գույքի բռնագրավմամբ՝ այն պետության եկամուտ դարձնելու, քննություն իրականացնող մարմինների կողմից առգրավելու, գույքի վրա կալանք դնելու հետևանքով: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում նախատեսել նաև փոխհատուցման իրավունքից օգտվելու հնարավորությունը բռնադատվածի ինչպես առաջին հերթի, այնպես էլ մոտակա հերթի ժառանգներին՝ օրենքով սահմանված կարգով:

Բացի այդ, անհասկանալի է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների նախատեսումը միայն մահապատժի դատապարտված, ազատազրկման ձևով պատիժը կրելիս կամ այդ պատիժը կրելուց հետո մահացած բռնադատվածի առաջին հերթի ժառանգների համար: Փաստորեն այդ արտոնություններից օգտվելու իրավունքից զրկվում են նախկին ԽՍՀՄ տարածքից արտաքսված, անօրինական կարգով բժշկական բնույթի հարկադրական միջոցների ենթարկված անձանց առաջին հերթի ժառանգները, մինչդեռ օրենքի 1-ին հոդվածի իմաստով նշված անձինք նույնպես բռնադատվածի կարգավիճակ ունեն և արդարացի կլինեն, որ նրանց առաջին հերթի ժառանգները նույն սկզբունքով օգտվեն սահմանված արտոնություններից:

Առանձին ուշադրության են արժանի ՀՀ բռնադատվածների վերաբերյալ օրենսդրության բազմակի խախտման դեպքերը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից:

«Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքին և ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 20-ի 410 որոշմանը համապատասխան բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում, բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին սեփականության իրավունքով հողատարածքը տրամադրվում է *բնակարանային անհատական շինարարության նպատակով*: Սակայն, հաշվի առնելով, որ բնակարան գնելու համար կպահանջվեր ավելի քիչ գումար, քան բնակարանային շինարարություն իրականացնելու համար, որի ընթացքում կխնայվեին պետական բյուջեի միջոցները, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը որոշ վարկառուների համաձայնություն է տվել վարկի գումարի հաշվին ձեռք բերել բնակարաններ: Այսինքն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից խախտվել է անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով վարկ տրամադրելու օրենքով սահմանված պահանջը: Հետագայում, վարկի գումարի հաշվին բնակարան գնելու համար մյուս վարկառուների ներկայացրած առաջարկությունները մերժվել են:

Մեր կարծիքով, այս պարագայում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից կոպտորեն խախտվել է վարկի տրամադրման՝ օրենքով սահմանված կարգը, իսկ ինչ վերաբերում է բնակարան ձեռք բերելու նպատակով վարկի տրամադրման նպատակահարմարությանը, ապա համապատասխան փոփոխության առաջարկով նախարարությունը կարող էր հանդես գալ կառավարությունում, ինչը նրա կողմից մինչ օրս չի իրականացվել:

❖ Դեռևս վերջնականապես չեն լուծված Ադրբեջանից բռնագաղթվածների բնակարանային և սոցիալ-կենցաղային խնդիրները՝ չնայած 1988 թվականից ի վեր փախստականների բնակարանային խնդիրները լուծելուն ուղղված կառավարության մի շարք ծրագրերի իրականացմանը: Դեռևս մեծ թիվ են կազմում հանրակացարաններում, հյուրանոցներում և ժամանակավոր այլ կացարաններում բնակվողները: Կան բնակվողներ նաև վթարային շինություններում, որտեղ հաճախ չկան նույնիսկ նվազագույն պայմաններ կենցաղային կարիքների բավարարման համար: Նույնը վերաբերում է երկկողմ ծնողագուրկ

երեխաներին, զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներին, 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին:

Այս կատեգորիայի անձանց սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելուն ուղղված կառավարության ջանքերը թեկուզ և դրական են, սակայն գործընթացի դանդաղությունը, տեղական ինքնակառավարման մարմինների, որոշ պաշտոնատար անձանց կողմից ցուցաբերվող անտարբերությունը, բյուրոկրատական մոտեցումները խանգարում են խնդրի արագ լուծմանը:

Կառավարության որոշումներով կարևորվել և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքին են դասվել փախստականների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը վերաբերող միջոցառումները: Մինչդեռ հարցի լուծման կարևորությունը և հրատապությունը հաճախակի անտեսվում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, այս կամ այն պաշտոնատար անձի կողմից:

Անընդունելի է քաղաքապետարանի ձեռնարկած արշավը «Նորքի այգիներ» կոչվող հատվածում գտնվող նախկին ՀԿԿ Կենտկոմի բարձրագույն դպրոցի շենքում տեղավորված փախստականների դեմ: Այստեղ փախստականների տասնյակ ընտանիքներ տեղավորվել են դեռևս 1988 թվականին: Նրանց զգալի մասն արդեն ձեռք է բերել ՀՀ քաղաքացիություն: 2004թ. սկզբներին դատարանով ճանաչվել է նրանց սեփականության իրավունքն ըստ զբաղեցրած բնակտարածքի, որով գոնե լուծվել են այդ փախստականների բնակարանային խնդիրները:

Հանրապետության դատախազությունը գտել է, որ փախստականների բնակարանային խնդիրների լուծմամբ խախտվել է պետության գույքային շահը, և առաջին ատյանի դատարանների վճիռները բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան, ինչը վկայում է, որ ՀՀ դատախազությունը փախստականների բնակկենցաղային խնդիրների լուծումը ստորադաս է համարում պետական գույքային շահի նկատմամբ: Դատախազությունը գտել է, որ այդ կառույցում փախստականները միայն ժամանակավոր բնակիչներ են, անթույլատրելի է այդտեղ նրանց սեփականատեր ճանաչելը: Որքան էլ տարօրինակ է, ՀՀ վճռաբեկ դատարանը դատախազության նման մոտեցման հետ համաձայնվել է:

Կարելի է պատճառաբանել, որ դատախազությունը և վճռաբեկ դատարանը ղեկավարվել են օրենքի տառով, ինչը խրախուսելի է: Սակայն նման մոտեցումն արդարացված չէ, երբ էական է համարվել օրենքի ձևական խախտումը, անտեսվել է տվյալ բնագավառում պետական քաղաքականության նպատակաուղղվածությունը, այն դեպքում, երբ այլ գործերով, որոնք դարձյալ վերաբերում են սեփականության իրավունքի ճանաչմանը Երևանի իրացման գոտում ներառված տարածքներում, դատարանն առաջնությունը տվել է ոչ թե օրենքին, այլ ենթաօրենսդրական ակտին՝ կառավարության որոշմանը:

Պետական շենքերի ու շինությունների սեփականաշնորհման կամ ապապետականացման ընթացքում հաճախ անտեսվում են դրանցում բնակվող փախստականներին տեղավորելու խնդիրները:

Այն, որ «Փախստականների մասին» ՀՀ օրենքը չի առանձնացրել Ադրբեյջանից բռնագաղթված հայերին, չի օգտագործել «բռնագաղթված» հասկացությունը, նրանց կարգավիճակը նույնացնելով այլ երկրներից և այլ պատճառներով փախստական դարձած անձանց կարգավիճակի հետ, չի որոշակիացրել պետության պարտականություններն այս անձանց նկատմամբ, տեղիք և հնարավորություն է տալիս նման անձանց շահերի անտեսման կամ շրջանցման համար:

Տեղական ինքնակառավարման մարմինները, փախստականի վտարման հարց դնելիս, հաճախակի հաշվի չեն նստում փախստականների և միգրացիայի վարչության կարծիքի հետ: Ունենք կոնկրետ դեպք, երբ թաղապետարանը վաճառել է բնակելի շենքի նկուղը և դատարանով վտարել տարիներ շարունակ այնտեղ բնակվող փախստականին:

ՀՀ կառավարության 20.05.04թ. թիվ 747-ն «1988-1992 թվականներին Ադրբեյջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովման առաջնահերթ ծրագրի մասին» որոշումով հաստատված ծրագրով իրականացվող միջոցառումներն արդեն որոշակի և դրական քայլ են այդ խնդիրների լուծման ճանապարհին: Ի կատարումն այդ ծրագրային պահանջի՝ պետական գույքի կառավարման վարչությունը փախստականներով զբաղեցված շենքեր և շինություններ օտարելիս, օտարման պայմանագրերում նախատեսում է գնորդի

պարտականությունը՝ փախստականներին տրամադրել այլ բնակարան կամ համարժեք փոխհատուցում: Պայմանագրում նման դրույթ մտցնելը պետք է ամրագրել օրենքով:

Չափազանց գոհացնող է պետական գույքի օտարման մասին «Բարի ծիծեռնակ» երիտասարդական տուրիստական կենտրոն ԲԲԸ-ի հետ գնորդի կողմից պայմանագրով այնպիսի պարտավորություն ստանձնելը, ինչպիսին է՝ նոր աշխատատեղեր ստեղծելու միջոցով փախստականներին աշխատանքով ապահովելը:

❖ Ադետի գոտու վերականգնման միջոցառումների մասին ծրագիրը գործողության մեջ է և հաջողությամբ իրականացվում է, ինչը հույս է ներշնչում, որ այնտեղ մոտակա տարիներին սոցիալական խնդիրները կհասցվեն նվազագույնի: Ադետի գոտուց ստացվող բողոքներն արդյունք են վատ վարչարարության, իրականացվող ծրագրերի, միջոցառումների, օրենսդրական խնդիրների մասին տեղեկատվության սահմանափակ լինելուն և հիմնականում վերաբերում են բնակարանային խնդիրներին՝ բնակարանների բաշխման անարդարացիությանը, փոխհատուցման ոչ համարժեք լինելուն, խոստացած ժամկետում բնակարաններ չտրամադրելուն և այլն:

Բնակարանային խնդիրները լուծելիս, ըստ նախագծի, փոխհատուցում տրվում է միայն ադետի հետևանքով կորցրած բնակտարածության համար: Ծրագրի հենց այդ կետի պատճառով այսօր բազմանդամ դարձած ընտանիքները, եթե նախկինում ունեցել և ադետի հետևանքով կորցրել են ընդամենը մեկ կամ երկու սենյականոց բնակարան, դրանից ավելին չեն ստանում: Մեր գնահատմամբ, այսպիսի մոտեցումը կհանգեցնի նրան, որ բնակարանային կարիք ունեցողների հարցերի համեմատաբար հեշտ լուծումն այսօր կբերի հրատապ լուծում պահանջող խնդիրների առաջացման հետագայում:

Ադետի գոտուց, ինչպես և հանրապետության այլ բնակավայրերից, կան բողոքներ, դժգոհություններ կապված սոցիալական նպաստների, կենսաթոշակային ապահովման, աշխատանքից ապօրինի ազատման և այլ խնդիրների հետ:

❖ Ընդհանուր լուծում պահանջող խնդիր է առաջացել կապված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածով սահմանված սկզբունքի հետ, համաձայն որի մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը /10.04.2003թ./ և անհատական բազայի ձևավորումը՝ ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը աշխատանքային գրքույկն է, **իսկ 1992 թ. հունվարից սկսած՝ նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելը հաստատող փաստաթուղթը:**

Նույնն է սահմանվել նաև ՀՀ կառավարության 29.05.03թ. թիվ 793-ն որոշմամբ:

Օրենքի այս սկզբունքից ելնելով, սոցիալական ապահովության մարմինները կենսաթոշակի անցած աշխատողների ապահովագրական ստաժ չեն համարում նրա աշխատած այն տարիները, որոնց ընթացքում որպես ապահովադիր հաշվառված գործատուն ապահովագրական վճարումներ հաշվարկել, սակայն չի փոխանցել անվճարունակության պատճառով: Ապահովագրական մարմնի պահանջի իրավունքը նման գործատուի նկատմամբ պահպանված է, և նա այդ գանձումը կատարելու է գործատուի մոտ ֆինանսական միջոցների առաջացման դեպքում՝ չհաշված նաև օրենքով նախատեսված տույժերի գանձման իրավունքը: Չնայած դրան, գործատուի անբարեխղճության հետևանքները ծանրանում են կենսաթոշակի իրավունք ստացած աշխատողի վրա՝ նրա ապահովագրական ստաժը չի հաշվարկվում, քանի դեռ չի ներկայացրել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելը հաստատող փաստաթուղթ:

Հողվածով ամրագրված պահանջն արդարացված է միայն անհատական աշխատանք կատարողների, անհատ ձեռնարկատերերի և ապահովադիր հանդիսացող ֆիզիկական այլ անձանց համար, իսկ ապահովադիր հանդիսացող գործատուի մոտ աշխատանքային պայմանագրով աշխատողին նման պահանջ ներկայացնելն անընդունելի է:

Այդպիսի իրավիճակ ունենք այսօր «Նաիրիտ» գործարանի կենսաթոշակի անցած աշխատողների ապահովագրական ստաժի հաշվարկման հարցում: Գործարանն ունի խոշոր պարտքեր՝ սոցիալական վճարումների գծով: Պարտքը հաշվարկված է, գործարանն այն ընդունում է, սակայն վճարման միջոցներ չունի:

Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին» ՀՀ օրենքի, սոցիալական ապահովության մարմինը պարտավոր է դիմել դատարան՝ ապահովադիրին անվճարունակ ճանաչելու հայցով: Պարզ չէ, թե ինչի համար է սահմանվել

լիազոր մարմնի այդ իրավունքը, եթե ապահովադրի վճարում չկատարելու հետևանքները պետք է կրի աշխատողը:

❖ Երկրում գործազրկության բարձր մակարդակի պայմաններում, կրթության ոլորտում իրականացվող օպտիմալացման ծրագրի հետ կապված՝ մանկավարժների զանգվածային կրճատումներն ստեղծել են լրացուցիչ սոցիալական լարվածություն: Բնականաբար այստեղ նույնպես, քանի որ կա ընտրություն կատարելու խնդիր, զգալի է դառնում հովանավորչության և հարցը լուծելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձի սուբյեկտիվ մոտեցումների ազդեցությունը:

❖ Բուժապարկման, անվճար բուժօգնություն ստանալու իրավունքի իրականացման ոլորտին առնչվող բողոքներ չեն ստացվել: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ այստեղ վիճակը բարվոք է: Մեր անցկացրած դիտարկումները, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատ քիչ բան է արված ինչպես վճարովի, այնպես էլ անվճար բուժապասարկումը կանոնակարգելու, «ձախ» վճարումներից հիվանդին ու հիվանդատիրոջն ազատելու ուղղությամբ: **Հիվանդի համար երբեք ու ոչ մի տեղ որոշակի չէ, թե որտեղ է սկսվում և որտեղ է վերջանում իր բուժման վճարովիությունը, թե ինքը որ ծառայությունից կարող է օգտվել անվճար:**

Սոցիալական ոլորտին վերաբերող կուտակված խնդիրների ընդհանուր վելուծությունը ցույց է տալիս, որ դրանց մի զգալի մասը հնարավոր է կարգավորել օրենսդրական փոփոխությունների ճանապարհով, իսկ հիմնական մասը լուծելի է երկրի տնտեսական զարգացման առաջընթացն ապահովելու գույքնթաց:

3.22. Խոցելի և հատուկ խմբերի իրավունքներ

3.22.1. Հաշմանդամներ

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված հաշմանդամների թիվը, ըստ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների գործակալության պետի տրամադրած տվյալների, կազմում է 135.716 մարդ, որոնցից մինչև 18 տարեկան 7870 երեխաներ, 18-ից մինչև 40 տարեկանը՝ 23.551 մարդ, 40 տարեկանից մինչև կենսաթոշակային տարիքը՝ 51.390 մարդ:

Սոցիալական բնույթի դիմումներից 30-ը վերաբերում են հաշմանդամների խախտված իրավունքներին: Դիմումները վերաբերում են տարբեր ոլորտների:

Առանձնապես մեծ են ԲՄՓՀ-ներին վերաբերող դիմումները: Ըստ դիմումատուների, այս կամ այն բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովն իրենց, առանց առողջական վիճակի մեջ որևէ դրական փոփոխության, զրկել է հաշմանդամությունից կամ անօրինական ձևով փոխել է հաշմանդամության խումբը:

Հաշմանդամության խումբ չեն ստանում նաև այն հաշմանդամ մայրերը, որոնց զավակները հասնում են զորակոչային տարիքի:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ ՀՀ կառավարության 13 հունիսի 2003թ. թիվ 780 որոշմամբ «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները» խստացվել են, որի հիման վրա մի խումբ հաշմանդամներ զրկվել են հաշմանդամությունից: Առանց այն էլ սոցիալապես վատ վիճակում գտնվող հաշմանդամը զրկվում է իր թոշակից և մի շարք արտոնություններից, որոնցից նա կօգտվեր հաշմանդամության խմբի դեպքում:

Հաշմանդամների իրավունքների ապահովման վերահսկողության, սոցիալական բնույթի օժանդակությունների գործընթացում զգալի է հասարակական կազմակերպությունների դերը, որոնց հետ սերտ համագործակցում է Պաշտպանը: Քննարկումները տեղի են ունենում «կլոր սեղանների» շուրջ, որի ընթացքում փորձ է արվում միասին գտնել այս կամ այն խնդրի լուծման եղանակները:

3.22.2. Փախստականներ

Պաշտպանին փախստականների կողմից առ այսօր հասցեագրվել է մոտ 50 դիմում-բողոք, որոնց մի մասը կոլեկտիվ բնույթ է կրում: Դիմումների ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ և բացեր ինչպես օրենսդրության, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի բնագավառում:

Դիտարկումները ցույց են տալիս, որ փախստականների մի մասը, ցավոք, առ այսօր ապահովված չէ նույնիսկ ժամանակավոր կացարանով, իսկ կացարանով ապահովված փախստականների մեծ մասը բնակվում է ծայրահեղ անմխիթար սանիտարահիգիենիկ պայմաններում, քանի որ նրանց հատկացված բնակելի տարածքներում տարիներ ի վեր վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել: Նման դիմումների կապակցությամբ մեր կողմից հարցումներ են ուղարկվել համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ փախստականների բնակարանային պայմանների բարելավման հնարավորությունները ճշտելու նպատակով: Ինչպես ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ ի վիճակի չեն եղել աջակցելու այս խնդիրների լուծմանը՝ բնակարանային ֆոնդի բացակայության պատճառով:

Թեև, սկսած 1988 թվականից, փախստականների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարության կողմից ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ միջազգային համագործակցության շնորհիվ, իրականացվել են մի շարք ծրագրեր, այնուամենայնիվ, փախստականների բնակարանային խնդիրները առ այսօր հիմնականում մնում են չլուծված, իսկ պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունքում արդեն իսկ առկա խնդիրները առավել սրվել են, մասնավորապես՝ սեփականաշնորհված տարածքներից փախստականների բռնի վտարումների հետևանքով:

ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության տվյալներով՝ Ադրբեյջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետությունում հանգրվանած փախստական ընտանիքներից շուրջ տասը հազարը համարվում են բնակարանի կարիքավորներ: Նշվածից ժամանակավոր կացարաններում առաջնահերթ բնակարանի կարիքավոր 3470 ընտանիք 2003թ. հաշվառվել են վարչության կողմից, և այդ ընտանիքները ՀՀ կառավարության կողմից 20.05.2004թ. ընդունված «1988-1992 թվականներին Ադրբեյջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովման առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 747-Ն որոշման համաձայն առաջիկա տարիներին ապահովվելու են բնակարաններով: 2005թ. պետական բյուջեով ծրագրի իրականացման համար նախատեսված է 1,161 մլրդ դրամ:

Որոշ դեպքերում պետության գույքային շահը վեր է դասվում փախստականների իրավական պաշտպանության շահից, մինչդեռ փախստականների բնակարանային ապահովման հիմնախնդրի լուծումն իր հերթին հանդիսանում է պետության առաջնահերթ խնդիրներից մեկը:

Սեփականաշնորհման գործընթացի արդյունքում հաճախ ոտնահարվում են մասնավորեցվող շենքերում բնակվող փախստականների իրավունքները և օրինական շահերը:

Շատ հաճախ, փախստականներին համարժեք կացարանով կամ փոխհատուցմամբ ապահովելու պարտավորություն չի նախատեսվում ոչ ՀՀ կառավարության որոշումներով, և ոչ էլ պետական գույքի օտարման պայմանագրերով: Սեփականաշնորհման ենթակա շենքերում բնակվող փախստականների իրավական պաշտպանության վերաբերյալ դրույթներ չի պարունակում նաև «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքը, որի արդյունքում հաճախ ոտնահարվում են մասնավորեցվող շենքերի փախստական բնակիչների իրավունքները և օրինական շահերը, վերջիններս փաստորեն վտարվում են պետության կամ գնորդի կողմից՝ առանց որևէ կացարան կամ փոխհատուցում ստանալու:

Պաշտպանը համակարծիք է ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի դիրքորոշման հետ այն մասին, որ փախստականների իրավական պաշտպանության կարգավորումը պետք է առավել մանրամասնեցված լինի, և փախստականների իրավական պաշտպանության պարտավորությունը պետք է հստակ ամրագրվի պետական գույքի սեփականաշնորհման

մասին ակտերում, առաջին հերթին «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքում²:

Թեև «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանվել է, որ պետական համապատասխան մարմինները իրենց իրավասությունների շրջանակներում օժանդակում են փախստականներին՝ ձեռք բերելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, այնուամենայնիվ, այս ոլորտում նույնպես առկա են որոշակի խնդիրներ: Մասնավորապես, փախստականներին հաճախ մերժվում է անձնագրի տրամադրումը՝ հաշվառման վայր չունենալու պատճառաբանությամբ: Հաշվի առնելով փախստականների բնակարանային ապահովման ցածր մակարդակը՝ նման մոտեցումը փախստականների ինտեգրման գործընթացում կարող է լուրջ խոչընդոտներ առաջ բերել: Բացի այդ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն անձնագիր ստանալու և հաշվառվելու համար սահմանված է պետական տուրք՝ յուրաքանչյուր գործողության համար բազային տուրքի չափով, ինչը, հաշվի առնելով Հայաստանում բնակվող փախստականների ծանր սոցիալական դրությունը, կարող է հանգեցնել ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու ընթացակարգի բարդացմանը: Ուստի, *նպատակահարմար կլիներ համապատասխան փոփոխության նախաձեռնել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում:*

3.22.3. Անօթևաններ

Հայաստանի Հանրապետությունը 1993թ. հունիսի 9-ին միացել է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին, որով և պարտավորվել է դաշնագրի 2-րդ հոդվածին համապատասխան անհատական կարգով և միջազգային օգնության ու համագործակցության կարգով, մասնավորապես տնտեսական և տեխնիկական բնագավառներում եղած ռեսուրսների առավելագույն սահմաններում, միջոցներ ձեռնարկել այն բանի համար, որպեսզի աստիճանաբար, բոլոր հնարավոր եղանակներով, ներառյալ օրենսդրական միջոցների ընդունումը, ապահովվի մարդու՝ նույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լրիվ իրականացումը:

Բացի այդ, եվրոպական սոցիալական խարտիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ բնակավայրի իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել, որոնք ուղղված կլինեն՝

- նպաստելու համապատասխան ստանդարտի բնակավայրի մատչելիությանը,
- կանխելու և կրճատելու անօթևանությունը՝ նպատակ ունենալով դրա աստիճանական վերացումը,
- մատչելի դարձնելու բնակավայրի գները համապատասխան ռեսուրսներ չունեցողների համար:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր քաղաքացի ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրավունքի իրականացման համար»: Նշված իրավունքն իր ամրագրումն է գտել նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի առաջին մասում, որի համաձայն՝ դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որը ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ ապահովելու համար այդ իրավունքի իրականացումը, ընդունելով այդ առումով ազատ համաձայնության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը:

Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է քաղաքացիների բավարար կենսամակարդակի իրավունքի լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկել

² «ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները պետական/հանրային սեփականություն հանդիսացող փախստականաբնակ կոմունալ կենտրոնների սեփականաշնորհման վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ Հայաստանյան գրասենյակ, 20.01.2003թ.

համապատասխան միջոցառումներ, ինչպես օրենսդրական, այնպես էլ գործառնական մակարդակով: ՀՀ կառավարության կողմից որոշակի բնագավառներում, ինչպես օրինակ՝ աղետի գոտու, վթարային շենքերի բնակիչների և փախստականների բնակարանային ապահովում, մշակվել են ծրագրեր, որոնց մի մասն իրականացվել է:

Պետության ուշադրությունից, սակայն, կարծես թե դուրս են մնացել անօթևան անձինք, որոնք բնակվում են փողոցներում՝ զուրկ լինելով որևէ սոցիալական աջակցությունից: Ընդ որում նմանատիպ պայմանները նպաստում են տարբեր հիվանդությունների և հանցավորության աճին: Անօթևան մարդիկ մահանում են փողոցում ցրտահարությունից, սովից և տարբեր հիվանդություններից: Անօթևան մարդկանց համար նախատեսված է առանձին գերեզմանահատված, ընդ որում գերեզմանաքմբերի վրա անուն-ազգանուններ և այլ տվյալներ չկան, նշվում է միայն հերթական համարը: Ցավով պետք է արձանագրենք, որ ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ միայն 2004թ. դեկտեմբեր ամսին փողոցում մահացել են 35-ից ավելի անօթևան մարդիկ: Ներկայումս Ազգային ժողովում քննարկվում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախատեսվում է ժամանակավոր օթևանի տրամադրում անօթևան, մուրացիկ եւ թափառաշրջիկ, ինչպես նաև բռնության ենթարկված անձանց՝ սոցիալական, կենցաղային, բժշկական, հոգեբանական եւ իրավական օգնություն ցուցաբերելու նպատակով, ինչպես նաև սոցիալական աջակցության այլ ձևեր: Օրինագծի ընդունումը պայմանավորված է բնակչության սոցիալական աջակցության հիմնահարցերի վերաբերյալ պետական քաղաքականության իրականացման և սոցիալական հասցեագրված մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությամբ:

3.23. Այլ իրավունքներ

3.23.1. Բնապահպանություն

Հարկ է նկատել, որ Պաշտպանին իր գործունեության ողջ ժամանակահատվածում հասցեագրվել են շատ սահմանափակ թվով դիմում-բողոքներ՝ մարդու բնապահպանական իրավունքների խախտումների վերաբերյալ, ինչը ևս մեկ անգամ վկայում է այս հիմնախնդրին ՀՀ-ում երկրորդական նշանակություն տալու մասին, հասարակական գիտակցության և շրջակա միջավայրի հարցերով իրազեկության ցածր մակարդակի մասին:

Այսինքն՝ հասարակության և շրջակա միջավայրի փոխգործողության ոլորտում առաջնայնությունը ՀՀ-ում դեռևս տրվում է տնտեսական պրոբլեմներին, բացակայում է բնակիչների համար բարենպաստ շրջակա միջավայրի ապահովման հետ կապված պրոբլեմների առաջադրման և լուծման գործում պետական կամքը, նաև այն փաստի ճանաչումը, որ շրջակա միջավայրի համարժեք պաշտպանությունն անհրաժեշտ է մարդու բարեկեցության ապահովման և նրա հիմնական իրավունքների, այդ թվում կյանքի իրավունքի, իրականացման համար:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքները հիմնականում վերաբերում են՝

ա/ ապօրինի շինություններին, քաղաքաշինության գործընթացը կարգավորող մի շարք օրենքների աննախադեպ խախտումներին,

բ/ անօրինական հողահատկացումներին հիմնականում հողահատկացման կարգը խախտելու, աճուրդների մասին նախապես չհայտարարելու կամ դրանք օրենքով սահմանված ժամկետների և կարգի խախտումներով հայտարարելու վերաբերյալ: Այս առումով հարկ է նկատել, որ հարյուրավոր թերթերի առկայության պարագայում ոչ մեծ հայտարարության տեղադրումը որևէ մեկ թերթում, ըստ ամենայնի, չի կարող համարվել տեղեկացման արդյունավետ միջոց:

Բացի այդ, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հասարակայնության մասնակցությունը ոչ միայն նախատեսվող նախագծերի վերաբերյալ որոշումների կայացմանը, այլև մասնակցությունը սկզբունքների, ծրագրերի և գլխավոր պլանների ընդունմանը: Մակայն այդ օրենքը և մասնավորապես հասարակայնության մասնակցությանը վերաբերող նրա դրույթները ոչ արդյունավետ են գործում:

գ/ կանաչ տարածքները, տնտեսական նշանակության հողերը կառուցապատման համար հատկացնելու վերաբերյալ խախտումներին:

Կանաչ տարածքները շինարարության համար հատկացնելը, որն իր հերթին կոպիտ կերպով խախտում է քաղաքի գլխավոր հատակագիծը, հիմնականում կատարվում է առանց էկոլոգիական փորձաքննության և պրակտիկորեն առանց հասարակական լսումների:

Խախտելով ինչպես ՀՀ օրենսդրությունը /«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք, 1995թ./, այնպես էլ Օրհուսի կոնվենցիայի դրույթները, ոչ մի կերպ չի ապահովվում հասարակայնության մասնակցությունը վերոհիշյալ հարցերի կապակցությամբ որոշումների ընդունմանը:

Այս առումով Պաշտպանը մտադիր է ակտիվ մասնակցություն ունենալ գլոբալ նշանակություն ունեցող Օրհուսի կոնվենցիայի դրույթների լայնածավալ կիրառման ապահովմանը ՀՀ-ում՝ համագործակցելով այդ ոլորտի իրավասու տարբեր պետական և ոչ պետական մարմինների հետ, քանի որ այս ոլորտում խախտվում են մարդու այնպիսի հիմնական իրավունքներ, ինչպիսիք են՝

ա/ տեղեկատվության մատչելիությունը,

բ/ շրջակա միջավայրին վերաբերող հարցերով որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցությունը,

գ/ արդարադատության մատչելիությունը:

3.23.2. Սպառողների իրավունքներ

Սպառման ոլորտում ծառայություններ մատուցողների կողմից թույլ տրվող խախտումները, ծառայությունն անբարեխղճ մատուցելը, անորակ ապրանք մատակարարելը և դրանց հետ կապված այլ հարցեր շոշափում են այնպիսի շահեր և իրավունքներ, որոնք առնչվում են մարդկանց տնտեսական, սոցիալական և այլ կարևոր իրավունքների հետ:

Այն, որ շուկայական հարաբերություններում սպառողը հիմնականում հարաբերվում է տնտեսվարող մասնավոր սուբյեկտների հետ, որ նման սուբյեկտների բազմապիստությունն ու բազմաքանակությունը դժվարացնում է վերահսկողության իրականացումը, պետությանը բոլորովին չի ազատում իր մարմինների միջոցով սպառողի համար պատշաճ սպասարկում ապահովելու պարտականությունից:

Հայտնի է, որ տնտեսվարող սուբյեկտը՝ իրավաբանական թե ֆիզիկական անձ, ձգտում է շահույթ, գերշահույթ ստանալ ի հաշիվ մատուցվող ծառայությունների և մատակարարվող ապրանքների որակի իջեցման, երբեմն նաև՝ ի հաշիվ սպառողի շահերի ոտնահարման:

Այս բնագավառում աշխատանքներ իրականացնելիս Պաշտպանը հատկապես կարևորում է լայն սպառման այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ ջրամատակարարումը, էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը, տրանսպորտը, կապը, նոտարական ծառայությունը:

Այս ծառայությունները հատկապես կարևորվում են այն առումով, որ սպասարկման կոնկրետ բնագավառներում մենաշնորհ ունենալով՝ դրանք սպառողին թելադրում են իրենց պայմանները, սպառողը լիովին անպաշտպան է այս ծառայությունների կամայականություններից:

Ջրամատակարարման ծառայությունը կարողացավ սպառողին թելադրել իր պայմանները և, պարտավորություն ունենալով ինքը հաշվարկելու իր մատակարարած խմելու ջրի ծավալը, հաշվիչներ տեղադրելու պարտականությունը դրեց սպառողի վրա:

Խմելու ջրի մատակարարման պայմանագրերով, որը դարձյալ մատակարարն է պարտադրել սպառողին, նա որևէ պատասխանատվություն չի կրում անորակ ջուր մատակարարելու կամ ժամանակին ջուր չմատակարարելու համար: Այդպիսի աղմկահարույց օրինակ էր Արաբկիր համայնքում բնակիչներին մի քանի օր աղոտոված խմելու ջուր մատակարարելու դեպքը:

Այն, որ բնակչությանը խմելու ջրի մատակարարման հարցում կա դրական տեղաշարժ, որ ջանքեր են ներդրվում ջրամատակարարումն աստիճանաբար դարձնել շուրջօրյա, որ ուժեղացվում է հսկողությունը մատակարարվող ջրի որակի նկատմամբ, զգալի և խրախուսելի է: Մակայն անհանգստացնողը մատակարարվող ջրի սակագների պարբերաբար բարձրացումն է: Անընդունելի պետք է համարել այն, որ ջրամատակարարման համակարգի անսարքությունների հետևանքով տեխնիկական նորմաներով սահմանվածից ավելի բնական

կորուստների համար վճարումը՝ սակագները բարձրացնելու ճանապարհով, դրվում է սպառողի վրա:

Առավել անընդունելի վիճակ կա ոռոգման ջրի մատակարարման բնագավառում: Ջրօգտագործողների ընկերությունների և դրանց միությունների ստեղծումը չի բերել դրական տեղաշարժի: Հողօգտագործողը դարձյալ չի կարողանում ժամանակին և պահանջվող ծավալով ոռոգման ջուր ստանալ:

Ջրօգտագործողի կողմից վճարումներ չկատարելու հիմքերով ոռոգման ջրի մատակարարման դադարեցումը ամենաանհրաժեշտ ժամանակահատվածներում բացարձակապես անընդունելի է: Ջրամատակարարման դադարեցման հետևանքով պատճառվող վնասը կարող է լինել զգալի և անդառնալի ոչ միայն հողօգտագործողի համար, այլև ընդհանուր տնտեսության համար՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքի տեսակետից: Ջրամատակարարը հնարավորություն ունի կուտակված պարտքերը գանձելու դատական կարգով, ինչից չի օգտվում, այլ ջրամատակարարումը դադարեցնելու ճանապարհով գերադասում է օգտագործել իր մենաշնորհային դիրքը՝ սպառողին հարկադրելով կատարել վճարումը:

Նույնն է վիճակը նաև էլեկտրամատակարարման բնագավառում: Պարտքի դեպքում մատակարարը միանգամից, առանց նախազգուշացման, դադարեցնում է էլեկտրականության մատակարարումը՝ հաշվի չառնելով սպառողի կողմից նախորդ վճարումները պարտաճանաչ կատարելը:

Մատակարարը կարող է ցանկացած ժամանակ անջատումներ կատարել՝ վթար տեղի ունենալու պատճառաբանությամբ: Անսպասելի անջատումների հետևանքով իր կրած վնասները սպառողը չի կարող ապացուցել՝ անջատումն արձանագրելու, անջատման վերաբերյալ տեղեկանքի տրամադրման, վնասների հաշվարկման կարգը էլեկտրամատակարարման պայմանագրերով սահմանված չլինելու պատճառով: Հաճախակի են դեպքերը, երբ հոսանքի տատանման հետևանքով շարքից դուրս են գալից էլեկտրական սարքեր, և ոչ մեկը դրա համար պատասխանատվություն չի կրում:

Քիչ չեն բազմաբնակարան շենքերը, որտեղ էլեկտրահաշվիչները տեղադրված են առաջին հարկում՝ բնակիչների հսկողությունից դուրս, ինչը հնարավոր է դարձնում սպառողի վստահության չարաշահումը մատակարարի ներկայացուցչի կողմից:

Հանրապետությունում լայն թափով ընթանում են բնակավայրերի և բնակարանների գազաֆիկացման աշխատանքները: Հայտնվել են մոնոտաժման աշխատանքներն իրականացնող բազմաթիվ մասնավոր ընկերություններ, որոնք դուրս լինելով պետական հսկողությունից, սպառողին թելադրում են իրենց պայմաններն ու իրենց գինը, և որքան էլ տարօրինակ է, այդպիսի կազմակերպությունների նման բազմաբնակության պայմաններում, երբ կա ծառայությունների մատուցման մրցակցություն, դրանց մատուցման դիմաց գանձումների չափի էժանացում չի նկատվում՝ համաձայնության գալով, նրանք բոլոր տեղերում պահանջում են նույն վարձավճարը, պարտադիր համարելով մոնոտաժման աշխատանքների իրականացումը միայն ընկերության նյութերով:

Մեծ թվով բնակարաններում առկա են նախկինից մնացած գազամատակարարման գծեր, որոնք կարող են փոքր ծավալի աշխատանքներով վերականգնվել: Սակայն այս կազմակերպությունները «վերականգնում» հասկացություն չեն ընդունում, սպառողին պարտադրում են նոր գիծ անցկացնել՝ արհեստականորեն բարձրացնելով ծառայությունների արժեքը:

Հեռահաղորդակցության բնագավառում «Արմենթել» ընկերության մենաշնորհը հանգեցրել է այն բանին, որ հանրապետության բնակիչը, դժգոհ լինելով ընկերության ծառայություններից, չունի այլընտրանքի հնարավորություն:

Գիտության ու տեխնիկայի զարգացման ներկա պայմաններում հանրապետության բնակիչը զրկված է ձեռքի հեռախոսի քարտ ձեռք բերելու հնարավորությունից:

2004թ. կնքված ԱրմենՏել - ՀՀ կառավարություն պայմանագիրը, որն անառարկելի դարձրեց ԱրմենՏելի մենաշնորհը հեռահաղորդակցության բնագավառում՝ առանց հաշվի առնելու այդ բնագավառում գործունեություն իրականացնելու համար տասնյակ ընկերություններին տրված լիցենզիաների առկայությունը, կառավարության խոստացած դրական փոփոխությունների չի բերել:

Միջքաղաքային, միջնարգային ուղևորատար տրանսպորտային ծառայությունների մատուցման որակը շարունակում է մնալ անբավարար: Ավտոկանգառներում ուղևորների կուտակումները, մարդկանց ժամանակի անհիմաստ կորուստը, որը հանգեցնում է մարդու աշխատանքի և հանգստի համար անհրաժեշտ ժամանակի սահմանափակմանը, կարծես թե չի անհանգստացնում պատկան մարմիններին:

Երթուղիները սպասարկելու իրավունք ստացած տրանսպորտային կազմակերպությունները հաճախակի չեն կատարում պայմանագրային իրենց պարտավորությունները՝ չեն ապահովում սահմանված քանակի ավտոմեքենաներ երթուղիում, խախտվում է մեքենաների՝ երթուղի դուրս գալու պարբերականությունը:

Ուղևորափոխադրման վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների տվյալների հիման վրա կապի և տրանսպորտի նախարարյանը ներկայացվել են համապատասխան առաջարկներ: Դեռևս շոշափելի տեղաշարժ չի նկատվել:

Մեծ է դժգոհությունը նոտարական ծառայություններից՝ մատուցվող ծառայությունների դիմաց նոտարների կողմից կամայական վարձավճարներ սահմանելու և գանձելու վերաբերյալ:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով նոտարական գործողությունների վճարովիության մասին ձևակերպումների երկիմաստությունները հնարավոր են դարձրել ծառայություն ստացողից, գանձվող պետական տուրքին զուգահեռ, գանձել նաև այլ գումարներ՝ ծառայության դիմաց տրվող վճարի անվան տակ: Օրինակ՝ հասարակ լիազորագիր հաստատելու համար սահմանված 500 դրամ պետական տուրքին զուգահեռ, նոտարները գանձում են նաև 2500 դրամ որպես ծառայության մատուցման վարձ:

Նման իրավիճակը բնակչության անապահով խավերի համար նոտարական ծառայությունը դարձնում է անհասանելի:

3.23.3. Հանգստի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք:

Պաշտպանի ստացած դիմումների թվում եզակի չեն այն բողոքներն ու ահազանգերը, որոնք վերաբերում են Երևանի Կենտրոն համայնքի տարածքի բազմաբնակարան շենքերի առաջին կամ նկուղային հարկերում վերջին տարիներին բացված և գործող մի շարք գիշերային ակումբների գործունեությանը, հատկապես գիշերային ժամերին բնակիչների հանգիստը խանգարելուն: Շուրջ մեկ տասնյակի հասնող այդ «օբյեկտները», որոնց թվում՝ «Օմեգա», «2x2», «Անտոնյան», «Կարաոկե», «Հավրն», «Ռելաքս», «Յոժիկ» (վերջինս դատարանի 15.07.04թ. վճռով փակվեց բնակիչների երկարատև և հետևողական ջանքերի և Պաշտպանի համապատասխան միջնորդության շնորհիվ) և այլ ակումբներ, տեղակայված լինելով բնակելի շենքերի նկուղներում և դրանց հարող տարածքներում, խախտում են բնակիչների գիշերային հանգիստն ու անդորրը՝ ստեղծած աղմուկի և քրեածին մթնոլորտի պատճառով:

Ստացված բողոքների կապակցությամբ անցկացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա արձանագրվել է.

1. Վերջին տարիներին ազատ շուկայական հարաբերությունների նոր ձևավորվող պայմաններում ի թիվս ձեռնարկատիրական գործունեության այլ տեսակների, զգալի տարածում ունի նաև գիշերային ակումբների, բար-սրճարանների, սթրիպ ակումբների բիզնեսը:

2. Ձեռնարկատիրական գործունեության նման տեսակը կարգավորված չէ ներպետական օրենսդրությամբ, չկա գործունեության այդ տեսակի հստակ սահմանումը, ներկայացված չէ դրանով զբաղվելու համար արտոնագիր ունենալու պահանջ, սահմանված չեն նմանատիպ ակումբների համար տեղակայման հստակ վայրեր, որոնք չեն գտնվի բնակելի շենքերում կամ դրանց մոտակայքում:

3. Գործող օրենսդրությամբ տնտեսվարող սուբյեկտը համապատասխան թաղապետարանից ստանում է ընդամենը երկու թույլտվություն (լիցենզիա)՝

- ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի,
- ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու:

4. Գործող օրենսդրության սահմաններում, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նշված խնդրում վերահսկողություն իրականացնող իրավասու պետական մարմինները խնդրի լուծմանը պատշաճ միջամտություն չեն ցուցաբերում, մինչդեռ՝

ա) առողջապահության նախարարության **հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչությունը** իրավասու մարմին է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում, կոչված է իրականացնել վերահսկողական գործառույթներ և կիրառել պատասխանատվության միջոցներ սանիտարահամաճարակային օրենսդրության, և, մասնավորապես, «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերի խախտման դեպքերում,

բ) տեսչությունը, սեփական նախաձեռնությամբ միջոցառումներից զատ, պարտավոր է բնակչության կողմից բարձրացված հարցերի կապակցությամբ, նրանց բողոքների հիման վրա և համապատասխան մասնագիտացված հաստատությունների օժանդակությամբ կազմակերպել և իրականացնել փորձաքննություն,

գ) սահմանված նորմերի և նորմատիվների խախտման փաստերի բացահայտման դեպքերում հանձնարարականներ տալ տնտեսվարող սուբյեկտին վերացնելու խախտումը կամ դրան ծնող պատճառները,

դ) նշված ժամկետում քայլեր չձեռնարկելու դեպքում տեսչությունը իրավասու և պարտավոր է տվյալ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կիրառել վարչական տույժի միջոցներ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված տուգանքներ մինչև նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, ինչպես նաև հայց ներկայացնել դատարան՝ տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ:

Իրականում սանեպիդկայանները գերազանցապես խուսափում և չեն միջամտում տվյալ խնդիրների լուծմանը: Բնակիչների բողոքներով հետազոտություններ անցկացնելիս, որպես կանոն, «խախտում չի հայտնաբերվում»:

Հիմնախնդրի լուծումը հնարավոր ենք համարում բազմաբնակարան շենքերում, դրանց տարածքներում, ընդհանրապես բնակելի շենքերի մոտակայքում ռեստորանների, բարերի, զվարճանքի օբյեկտների տեղադրումն օրենքով արգելելու ճանապարհով:

4. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

4.1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է «Ազգային կառույցների մասին» Փարիզյան սկզբունքներին համապատասխան և արժեքավոր է հատկապես Պաշտպանի անկախության սկզբունքների լիարժեք ամրագրման տեսակետից: Սակայն այս օրենքում առկա են մի շարք սկզբունքների անորոշ, երբեմն նաև հակասական կամ գործունեությունը կաշկանդող ձևակերպումներ:

Դա նկատի ունենալով և գտնելով, որ անհրաժեշտություն կա օրենքում որոշակի փոփոխություններ կատարելու ճանապարհով ուժեղացնել Պաշտպանի դիրքերն իր գործունեությունն իրականացնելիս, նախատեսվում է առաջարկել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքում և դրա հետ կապված այլ օրենքներում կատարել որոշակի փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես նկատի են առնված հետևյալ հանգամանքները.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության ձևակերպումը՝ «Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նա կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին և առաջարկներ ներկայացնել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը», թերի լինելու պատճառով, տեղիք է տվել տարակարծությունների և նույնիսկ զնահատվում է որպես միջամտություն դատական վարույթին:

Դրանից խուսափելու համար, հարկ կա հոդվածում ավելացնելու. «Պաշտպանի կողմից նման առաջարկ ներկայացնելը չի կարող զնահատվել որպես միջամտություն դատական վարույթին»: Դրա հետ միասին հարկ կա քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով սահմանել դատարանի կողմից Պաշտպանի նման առաջարկների քննարկման կարգը: Դատարանը երբեք կաշկանդված չի լինի Պաշտպանի անհիմն առաջարկը մերժելու հարցում:

Նույն 7-րդ հոդվածով սահմանված է Պաշտպանի իրավասությունը ներկա լինել Ազգային ժողովի և կառավարության նիստերին, ելույթ ունենալ, ներկայացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմանը վերաբերող հարցեր: Միաժամանակ ԱԺ և կառավարության կանոնակարգերում Պաշտպանին վերաբերող համապատասխան լրացումներ չեն կատարված, չի սահմանված Պաշտպանի ներկայացրած հարցերի քննարկման վերաբերյալ որոշում ընդունելու պարտականություն:

Այդ առումով լրացման կարիք ունեն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքը և կառավարության կանոնակարգը:

Օրենքի 12-րդ հոդվածով Պաշտպանին ամրագրված քրեական և քաղաքացիական գործերին ծանոթանալու իրավունքի հիման վրա հարկ կա համապատասխան լրացումներ կատարել նաև քրեական ու քաղաքացիական դատավարության օրենսգրքերում:

Օրենքի 11-րդ և 15-րդ հոդվածներով նախատեսված որոշումներն իրենց անվանումներով չեն համապատասխանում Պաշտպանի գործունեության բնույթին և կաշկանդում են հարցի լուծումների վերաբերյալ համապատասխան փաստաթղթային ձևակերպումներում:

Այս և մի շարք այլ հարցեր են, որոնց վերաբերյալ նախապատրաստված են համապատասխան առաջարկներ:

Իրավունքի խախտման մասին բողոքների ուսումնասիրության և հետազոտության տվյալներով Պաշտպանը պատրաստվում է առաջարկներ անել համապատասխան օրենքներում, իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Այդ տեսակետից առաջնահերթությունը տրվում է ՀՀ Սահմանադրության բարեփոխումներին վերաբերող քննարկումներին մասնակցելուն: Պաշտպանի հաստատության փորձագիտական խորհրդում քննարկվում է սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ մի ամբողջական փաթեթ, որտեղ առաջնությունը տրվում է

իշխանության բոլոր թևերի հստակ տարանջատմանը: Առաջարկվում է «Դատական իշխանություն» գլխից դատախազությանը վերաբերող մասի առանձնացումը, վերահսկիչ պալատին վերաբերող դրույթների դուրսբերումը «Օրենսդիր իշխանություն» գլխից: Ընդունելի պետք է համարել առաջարկն այն մասին, որ ավելացվի Սահմանադրության առանձին գլուխ՝ այլ մարմիններ, որի տակ կարող են ներառվել Պաշտպանը, վերահսկիչ պալատը, դատախազությունը:

Դատախազությունը դատական համակարգից առանձնացնելն առաջնային և չափազանց կարևոր է այն առումով, որ դատախազությունը, լինելով քրեական հետապնդման մարմին, չի կարող ներառվել արդարադատություն իրականացնելուն կոչված մարմինների համակարգ, երբ նաև խնդիր կա ազատվել դատարանների վրա դատախազության ներկայումս գոյություն ունեցող անցանկալի ազդեցություններից: Դատական համակարգի լիարժեք ապահովման անհրաժեշտությունն այն ցավոտ խնդիրներից է, որոնց լուծման անհրաժեշտությունը դարձել է հրատապ: Դրա հետ պետք է կապել նաև Արդարադատության խորհրդի ձևավորման սկզբունքների, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերում արդարադատության նախարարության դերի վերանայման անհրաժեշտությունը:

Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ քննարկման դրված նախագծերը չեն պարունակում դրույթներ Պաշտպանի մասին: Նման դրույթներ նախապատրաստված են և Պաշտպանը հանդես կգա համապատասխան առաջարկով: Դրա հետ կապված, նախատեսվում է առաջարկներ ներկայացնել նաև քրեական ու քաղաքացիական դատավարության օրենսգրքերում, ԱԺ և կառավարության կանոնակարգերում անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:

Քննարկվող նախագծերով շրջանառության մեջ է դրված «Իրավունքի գերակայություն և օրենքի իշխանություն» հասկացությունը: Պաշտպանը գտնում է, որ դա անընդունելի է, քանի որ օրենքի իշխանություն լինել չի կարող՝ եթե գերակա լինի իրավունքը, իրավունքը սահմանափակող օրենքը չի գործի: Իրավունքի գերակայությունը պետք է ամրագրվի օրենքում:

Մշակված են նաև մի շարք այլ առաջարկներ, որոնք նպատակ ունեն առավել հստակեցնելու և ընդարձակելու մարդու իրավունքներին և հիմարար ազատություններին վերաբերող դրույթները: Օրենսդրական փոփոխությունների առաջարկները հիմնականում վերաբերում են սոցիալական ոլորտը կարգավորող օրենսդրությանը, նպատակ ունենալով նպաստել հասարակության առավել անապահով խավերի իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանը:

4.2. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հետ փոխկապակցված այլ օրենքներ

Հարկ ենք համարում նշել նաև առավել էական մի շարք օրենսդրական հակասություններ՝ կապված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի դրույթների հետ:

Նախ և առաջ կարևոր է անձի իրավունքների և ազատությունների ապահովման խնդիրը քրեական գործի վարույթն իրականացնող մարմինների (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատարան) կողմից: Նշված ոլորտում նկատելի են զգալի հակասություններ թե՛ օրենսդրության մեջ, թե՛ գործնական աշխատանքում՝ սկսած քրեական գործի հարուցման փուլից մինչև գործի քննությունը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի կողմից:

Մասնավորապես, զգալի թիվ են կազմում դիմումները, որոնք վերաբերում են նախնական քննության մարմինների կողմից դիմումատուների պնդմամբ նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու, ինչպես նաև դրանք չվերացնելու վերաբերյալ դատախազների ու դատարանների որոշումներին: Այս առումով հարկ ենք համարում ներկայացնել անձի իրավունքների խախտման դեպքերը և գործնական աշխատանքում առաջացող բարդությունները օրենսդրական հակասությունների համատեքստում: Նախ, քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ,

իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետապնդման մարմինների կողմից հաճախակի է խախտվում նշված նորմը: Հաճախ դա պատճառաբանվում է աշխատանքի խիստ ծանրաբեռնվածությամբ, ինչը պատասխանատվությունից ազատելու կամ այն մեղմացնելու միանշանակ հանգամանք չի կարող համարվել: Բացի այդ, բողոքների ստվար մասը վերաբերում է դատախազական թույլ հսկողությանը, դրա ոչ պատշաճ իրականացմանը դատախազների կողմից: Գործերի մի մասը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազություն, իսկ մյուս մասով գրվել են գրություններ համապատասխան մարմիններին:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության տեսանկյունից, մեր կարծիքով, անընդունելի է ՀՀ քրեադատավարական օրենսդրության 185-րդ հոդվածի 3-րդ մասը. «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ վերաքննիչ դատարան»: Դիմումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերադաս դատախազին որոշումը բողոքարկելուց հետո ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը այլևս դիմումը չի քննում: Ընդամին, հարցի լուծման նման տարբերակը պաշտպանվում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝ օգտվելով քրեական դատավարության օրենսգրքում հարցի ոչ ճիշտ կարգավորվածությունից: Նույնը նշված է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի համապատասխան որոշման մեջ: Փաստորեն, այս կերպ ակնհայտ անհիմն ձևով սահմանափակվում է անձի՝ ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ տարբեր միջազգային-իրավական փաստաթղթերով նախատեսված դատական պաշտպանության իրավունքը:

Որոշակի հակասություններ են առաջանում քրեական վարույթն իրականացնող մարմինների վարույթում գտնվող գործերի վերաբերյալ տեղեկություններ կամ փաստաթղթեր պահանջելու ժամանակ: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերն իրավացիորեն սահմանում են, որ բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրության ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

Դրան հակառակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Նույն օրենսգրքի 1-ին հոդվածը արձանագրում է. «Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար»: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին (հոդված 9, 1-ին մաս):

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն արձանագրում է, որ դատախազը, քննիչը պարտավոր չեն բացատրություններ տալ իրենց վարույթում գտնվող գործերի, նյութերի վերաբերյալ, ինչպես նաև դրանք տրամադրել ծանոթանալու այլ կերպ, քան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

Մեկ այլ հանգամանք ևս: Ըստ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է ծանոթանալ քրեական, քաղաքացիական,

վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատարանի դատավճիռները, վճիռները, որոշումները օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը: Ինչպես երևում է, օրենքը չի հիշատակում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու, ինչպես նաև կասեցնելու վերաբերյալ որոշումների մասին: Պաշտպանի աշխատակազմում ձևավորված պրակտիկան վկայում է, որ կարճված կամ կասեցված քրեական գործերը պահանջելիս առաջանում են խնդիրներ այն իմաստով, որ դրանք կան ընդհանրապես չեն տրամադրվում՝ հղում կատարելով քրեադատավարական օրենսդրության վրա, կան էլ նման թույլտվություն տրվում է, սակայն գործի նյութերի ծանոթացումը կատարվում է տվյալ պետական մարմնում: Հետևաբար, ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաև որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում (հոդված 5-րդ, 2-րդ մաս): Սա նշանակում է, որ Պաշտպանը մինչև քրեական գործի հարուցումը նյութերի նախապատրաստման դեպքում (քանի որ հոդվածի դիսպոզիցիայում խոսքը գնում է բացատրությունների մասին, ապա կարելի է եզրակացնել, որ հարցը վերաբերում է նաև նյութերի նախապատրաստմանը) կամ քրեական գործի քննության ընթացքում չի կարող հարցաքննվել և ցուցմունքներ տալ վկայի դատավարական կարգավիճակով: Դրան հակառակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը սպառնիչ թվարկում է այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող կանչվել և հարցաքննվել որպես վկա: Եթե հաշվի առնենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը համապարփակ իրավական ակտ լինելու ուժով ավելի բարձր իրավաբանական ուժ ունի, ապա ստացվում է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ նորմը չի գործում: Մեր կարծիքով, Պաշտպանին նշված հոդվածում ընդգրկելն ունի չափազանց կարևոր նշանակություն և կարող է մեծապես նպաստել անձի իրավունքների պաշտպանության երաշխիքային կառուցակարգերի կատարելագործմանը: Սակայն դրա համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է լրացնել համապատասխան նորմով:

Չի կարելի չհիշատակել ընդհանուր իրավասության դատարանների կողմից քրեադատավարական օրենսդրության խախտման դեպքերը՝ կապված դատական քննության պայմանները, ապացույցների հետազոտման, միջնորդությունների և բացարկների քննարկման կարգը չպահպանելու, մրցակցային դատավարության սկզբունքային պահանջները չկատարելու հետ:

Այս առումով հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածը հստակ սահմանում է. «Ամբաստանյալի չներկայանալու դեպքում գործի քննությունը հետաձգվում է: Առանց հարգելի պատճառների ամբաստանյալի չներկայանալու դեպքում նա դատարանի որոշմամբ կարող է բերման ենթարկվել և սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց կամ փոխարինվել ավելի ծանրով»: Ըստ նույն օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի՝ դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործը քննվել է ամբաստանյալի բացակայությամբ: Այսինքն՝ օրենքով դա համարվում է դատավճռի բեկանման անվերապահ հիմք: Օրենսդրական նման դրույթները բխում են քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքի ապահովմանն ուղղված այն պահանջից, որ դատարանում գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 8-րդ մաս): Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատական քննության ժամանակ քրեական գործով սահմանված սկզբունքների (այդ թվում՝ մրցակցության) խախտումը համարվում է քրեադատավարական օրենքի էական խախտում:

Համաձայն ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 12.02.2000թ. որոշման 7-րդ կետի՝ եթե դատական նիստը խանգարում է ամբաստանյալը, ապա դատարանի որոշմամբ նա կարող է հեռացվել նիստի դահլիճից: Նման դեպքերում գործի քննությունը շարունակվում

է ամբաստանյալի բացակայութեամբ: Ակնհայտ է, որ այդ որոշման նշված կետը նույնպէս չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից: Բացի այդ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումները պարտադիր բնույթ չեն կրում:

Քիչ թվաքանակ չեն կազմում նաև այն բողոքները, որոնք վերաբերում են քրեական հետապնդման մարմինների կողմից անձանց ազատությունից ապօրինի զրկելուն, տարբեր վայրերում առանց համապատասխան որոշումների պահելուն, ծեծի ենթարկելուն: Յավոք, նման դեպքերը դժվար ապացուցելի են և շատ անգամ արդյունք են թույլ դատախազական հսկողության ու գերատեսչական վերահսկողության: Նման դեպքերի թիվը հատկապէս զգալի է մարզերում:

Գործնական աշխատանքում խախտվում են նաև ձերբակալման, կալանքի տակ պահելու՝ օրենքով նախատեսված ժամկետները:

Ուսումնասիրված բողոքների թվում նշանակալի տեղ են զբաղեցնում դատարանների կողմից կալանքը որպէս խափանման միջոց ընտրելու մասին որոշումների դեմ ուղղված բողոքները, որոնցով հիմնականում կայացվել են բողոքը չքննարկելու մասին որոշումներ:

Մեր խորին համոզմամբ քրեադատավարական գործունեության ոլորտում Պաշտպանին պետք է օժտել խիստ որոշակի լիազորություններով, ինչը պետք է նպատակ հետապնդի ոչ թե փոխարինել քրեական գործի վարույթն իրականացնող մարմիններին (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատարան), այլ լրացնել քրեադատավարական ոլորտում անձի իրավունքների պաշտպանության կառուցակարգերը:

4.3. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք

Սոցիալական ապահովության ոլորտին վերաբերող օրենսդրական թերություններից քննարկման արժանի է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի «Ապահովագրական ստաժը հաստատելու կարգի և ստաժը հաստատող փաստաթղթերի մասին» թիվ 47-րդ հոդվածը, ըստ որի՝ «Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը և անհատական բազայի ձևավորումը ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է, իսկ 1992թ. հունվարից սկսած՝ նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելը հաստատող փաստաթուղթը: Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով: Պահանջվող /25 տարի/ ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում: Դատական կարգով ստաժը կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասով, սակայն տասը տարուց ոչ ավելի»: Անընդունելի է 1992 թվականից հետո սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելը հաստատող փաստաթուղթ պահանջել այն անձանցից, որոնք աշխատել են որպէս ապահովադիր գրանցված գործադիրների մոտ:

4.4. Հաշմանդամ և սոցիալապես անապահով խավի մասին օրենքներ

Հաշմանդամ և սոցիալապես անապահով խավի կողմից ստացված դիմումներից պարզվել է, որ որոշակի դժգոհության կա Ազգային ժողովի կողմից 09.06.1997թ. ընդունված ՀՀ օրենքի վերաբերյալ, որով հաշմանդամներին տրված բոլոր արտոնությունների և գեղչերի փոխարեն սահմանվել է դրամական փոխհատուցում, որն այնուհետև վերացվել է /1998թ./: 2004թ. փետրվարի 5-ին ՀՀ կառավարության թիվ 207-Ն որոշման համաձայն արտոնությունների դիմաց դրամական փոխհատուցում է նշանակվել Հայրենական մեծ պատերազմի վետերաններին և հաշմանդամ վետերաններին, որի չափը 2005թ. ենթարկվել է փոփոխության: Հաշմանդամ վետերանները, օրինակ, 2004թ. ստացել են 3500 դրամ, իսկ 2005թ.՝ 4500 դրամ փոխհատուցում:

Հաշմանդամների մոտ դժգոհություն է առաջացրել նաև ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 13-ի՝ «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները» թիվ 780

որոշումը, համաձայն որի մեծ թվով հաշմանդամներ հաշմանդամության խումբ այլևս չեն ստանում:

Ուշադրության է արժանի այն, որ մեզ մոտ բացակայում են թերահարթակները շենքերի և շինությունների մոտ, ինչը խոչընդոտ է հանդիսանում հաշմանդամների տեղափոխության համար:

Հաշմանդամների համար մատչելիություն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել փոփոխություններ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում:

Փոփոխություններ ենք ակնկալում նաև բուհ ընդունվելու համար հաշմանդամներին հատկացվող երաշխավորագրերի տրման մեխանիզմում: «Հաշմանդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում հաշմանդամներին տրվում է անվճար ուսուցման հնարավորություն, որը ճիշտ չի կիրառվում պրակտիկայում, քանի որ հաշմանդամ ուսանողը անվճար սովորում է միայն այն դեպքում, երբ նա ներկայացնում է կենտրոնական ԲՄՓՀ գործակալության կողմից տրված երաշխավորագիր: Դա արգելք է հավասար իրավունքներով և հնարավորություններով հաշմանդամների՝ բուհերում անվճար սովորելու համար: Այդ հարցով Պաշտպանին են դիմել «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը և մի շարք հաշմանդամ ուսանողներ, որոնք այժմ սովորում են բուհերում և վճարում են ուսման համար:

4.5. «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք

1988-1990 թվականներին Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի այլ բնակավայրերում բնակվող հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության արդյունքում բազմաթիվ հայազգի քաղաքացիներ սպանվել կամ հաշմանդամ են դարձել: Սպանվածների հարազատները, որոնք վերապրել են նման բարբարոսական արարքների սարսափները, գտնվելով մեր հանրապետությունում, չեն հավասարեցվել զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամներին, իսկ նույն պայմաններում հաշմանդամ դարձածները չեն հավասարեցվել հաշմանդամ ազատամարտիկներին: Սա այն դեպքում, որ այս անձինք կորցրել են նաև տուն, ունեցվածք՝ միայն ազգությամբ հայ լինելու պատճառով: Նույն վիճակում են նաև այն անձինք, որոնք որպես պատանդ են պահվել Ադրբեջանում, ենթարկվել են խոշտանգումների, կորցրել են առողջությունը և դարձել հաշմանդամ:

Հարցի լուծումը հնարավոր է «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով:

4.6. «Փախստականների մասին» և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքներ

03.03.2004թ. «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում կատարված լրացման համաձայն՝ «փախստական երեխաները կորցնում են փախստականի կարգավիճակը, եթե օրենքով սահմանված կարգով նրանց ծնողները ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.»): Այս փոփոխության արդյունքում առավել վատթարանում է 14-18 տարեկան փախստական երեխաների իրավական վիճակը, քանի որ վերջիններս, կորցնելով փախստականի կարգավիճակը, համաձայն «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չեն բերում, այլ փաստորեն, վերածվում են քաղաքացիություն չունեցող անձանց, ինչը հակասում է «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածին, երեխայի իրավունքների մասին և ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիաների պահանջներին: Հետևաբար, կա «Փախստականների մասին» և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքների վերանայման անհրաժեշտություն՝ եղած անորոշությունները և հակասությունները վերացնելու և փախստական երեխաների շահերի պաշտպանության վերաբերյալ դրույթներ ամրագրելու նպատակով:

5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Նախորդ տարվա աշխատանքային փորձի ընդհանրացումը և վերլուծությունը հնարավոր է դարձնում նախանշել Պաշտպանի հետագա գործունեության հիմնական ուղղությունները, իրավունքի պաշտպանության իրականացման աշխատանքներում առավել արդյունավետ մեթոդների ներդրումը:

Անցած տարվա ընթացքում ամբողջապես ուսումնասիրվել է մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող օրենսդրությունը: Ուսումնասիրության արդյունքների ընդհանրացման և դրանք իրավունքի խախտման մասին բողոքների տվյալներով դիտարկելու շնորհիվ ստեղծվել է այն հիմքը, որի վրա հենվելով Պաշտպանը պետք է առաջարկներ ներկայացնի համապատասխան օրենքներում և իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ՝ նկատի ունենալով նաև հանրապետության միջազգային պարտավորություններն այդ բնագավառում:

Այդ տեսակետից առաջին հերթին կարևորվում է առավել ակտիվ մասնակցությունը ՀՀ Սահմանադրության բարեփոխումներին վերաբերող քննարկումներին: Պաշտպանն ունի առաջարկների ամբողջական փաթեթ, որը քննարկվում է իր կառույցի փորձագիտական խորհրդում:

Պաշտպանի հետագա աշխատանքների առաջնահերթությունների թվում է երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների անցկացումը, նկատի ունենալով, որ կան տվյալներ՝ երեխաների իրավունքների պաշտպանվածության մակարդակը անբավարար գնահատելու համար:

Շարունակում են առաջնահերթությունների շարքում մնալ Ադրբեջանից բնագաղթվածների սոցիալ-կենցաղային խնդիրները, քանի դեռ բոլոր փախստականները ապահովված չեն բնակարանով, չեն լուծված գոնե նվազագույն կենսապահովման պայմաններ նրանց տրամադրելու խնդիրները:

Հետագա աշխատանքի ընթացքում ևս պարտադիր են լինելու մշտական այցելությունները գործասեր՝ ինչպես դիտարկումների, այնպես էլ իրավունքների ու ազատությունների հարցերով ուսուցողական պարապմունքներ իրականացնելու նպատակով:

Պաշտպանության նախարարության հետ քննարկվելու է բանակում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ ունենալու հնարավորության հարցը:

Քրեակատարողական հիմնարկները եղել և մնալու են առաջնահերթությունների շարքում: Անհատական աշխատանքն անազատության մեջ գտնվող անձանց հետ դիտվել և դիտվելու է որպես կարևորագույն պարտականություն:

Նկատի ունենալով, որ մարդու նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսևորման ռիսկը կապվում է հիմնականում անձին բերման ենթարկելու, անազատության մեջ պահելու հետ, նման դեպքերը մշտապես պահվելու են ուշադրության կենտրոնում և քննարկվելու են առանձնակի հետևողականությամբ, նպաստելով քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների պաշտպանվածության աստիճանի բարձրացմանը:

Քանի որ խոսքի ազատության սահմանափակման ցանկացած դրսևորում, ներառյալ լրագրողների մասնագիտական գործունեության կամ մասնավոր անձանց կարծիք հայտնելու, տեսակետ ներկայացնելու իրավունքների անօրինական սահմանափակում, անմիջապես անդրադառնում է մարդու իրավունքների պաշտպանվածության վրա, այն դառնալու է Պաշտպանի գործունեության գերակայություններից մեկը:

Առավել ուշադրություն է կենտրոնացվելու դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության և իրավունքների պետական գրանցման մարմնի /«Կադաստր»/ գործունեության վրա, նկատի ունենալով, որ այս ծառայություններում առավել հաճախակի են մարդու իրավունքների խախտումները:

Դիտարկումները դատարաններում դառնալու են մշտական՝ առավել ուշադրություն կենտրոնացնելով նաև մարզային դատարանների վրա:

Այցելությունները մարզեր և հեռավոր բնակավայրեր՝ բնակչության հետ հանդիպելու, իրավունքի պաշտպանության վիճակի ուսումնասիրություններ անցկացնելու, իրավական թեմաներով պարապմունքներ, սեմինարներ կազմակերպելու նպատակով, դառնալու է Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

Մարզերում ներկայացուցչություններ ունենալու խնդիրը հնարավոր կլինի լուծել անհրաժեշտ ֆինանսավորման առկայության դեպքում: Պաշտպանի հանդիպումների ընթացքում մարզպետները, քաղաքապետերը պատրաստակամություն են հայտնել օժանդակել իրենց մոտ ներկայացուցչություն հիմնելուն, տրամադրելու համապատասխան տարածքներ:

Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող առանձին հարցերի քննարկման ընթացքում, ինչպես նաև համակարգային հիմնախնդիրների անդրադառնալիս Պաշտպանը ձեռնարկելու է անհրաժեշտ միջոցներ, որոնք կնպաստեն Հայաստանում օրենսդրական և իրավակիրառական պրակտիկան միջազգային փաստաթղթերով ամրագրված հանրաճանաչ նորմերին ներդաշնակեցնելուն, միջազգային հանրության առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները կատարելուն:

6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը ծնվել է Բաքվում: Ավարտելով Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտը, աշխատել է Բաքվի թիվ 2 մանկատանը, այնուհետև դպրոցում:

1968 թ. տեղափոխվել է Երևան, 1968-1991թթ. աշխատել է գիտահետազոտական տարբեր հաստատություններում:

1988թ. ստեղծված «Արցախ» հայրենակցական միության հիմնադիրներից է և պատասխանատու քարտուղարը: Ադրբեջանից փախստականների առաջին իսկ խմբերի հետ ծավալել է աշխատանքներ նրանց ընդունման, հաշվառման, աշխատանքով ու կենցաղային պայմաններով ապահովելու ուղղությամբ:

1990-1995 թթ. եղել է ՀՀ Գերագույն Խորհրդի Արցախի հարցերով հանձնաժողովի գլխավոր փորձագետ:

1991թ. հիմնել և մինչև 2004թ. հանդիսացել է «Ընդդեմ իրավական կամայականության» (նախկինում «Պատանդների պաշտպանության ֆոնդ») հասարակական կազմակերպության գործադիր տնօրենը: Լ. Ալավերդյանի ղեկավարությամբ կազմակերպությունը մշակել ու իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնց հիմնական նպատակն էր պատանդների, անհետ կորածների ու ռազմագերիների հայտնաբերումն ու վերադարձը, նրանց, ինչպես նաև փախստականների ու բռնի տեղահանված անձանց իրավական, բժշկահոգեբանական ու բարոյական աջակցություն ցույց տալը, մարդու իրավունքների պաշտպանությունը: Կազմակերպության ջանքերով մոտ 1800 պատանդ, կոմբատանտ և ռազմագերի է վերադարձել հայրենիք: 1992-1996 թթ. «Փրկենք պատանդ երեխաներին» նախաձեռնության շնորհիվ հայրենիք են վերադարձել տասնյակ երեխաներ:

Լ. Ալավերդյանի մասնակցությամբ է հիմնադրվել կազմակերպված բռնություններից տուժած մարդկանց՝ Հարավային Կովկասում ստեղծված առաջին վերականգնողական կենտրոնը, որը գործում է մինչ օրս:

Լ. Ալավերդյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային ու տարածաշրջանային գիտաժողովների, հանդիպումների՝ ըստ արժանվույն ներկայացնելով այն խնդիրներն ու հիմնահարցերը, որոնցով զբաղվում է «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպությունը:

2001-2003թթ. եղել է ՀՀ նախագահին կից մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամ:

Լ. Ալավերդյանը հեղինակ է մարդու իրավունքներին վերաբերող հրապարակումների, ժողովածուների: Մասնակցել է աղքատության կրճատման ռազմավարության մշակմանը, պատրաստել դարաբաղյան հարցին առնչվող մի շարք փորձագիտական փաստաթղթեր:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալը

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալ Ռաֆիկ Մխիթարյանը ծնվել է 1945 թվականին Լենինականում (ներկայումս Գյումրի), ծառայողի ընտանիքում:

1952 - 1963 թթ. սովորել է Գ. Սունդուկյանի անվան միջնակարգ դպրոցում:

1963 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ:

Ելնելով ծանր սոցիալական պայմաններից՝ 1968թ. ակադեմիական արձակուրդ է վերցրել ու աշխատել Լենինականի հոկոդ հաստոցների գործարանում, որպես փականագործ:

1970 թ. ընտրվել է ԵՊՀ ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարի տեղակալ, իսկ 1973-1977թ.՝ քարտուղար:

1977 թ. մարտին նշանակվել է ՆԳ Երևանի վարչության քաղբաժնի պետ:

1971-1974 թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժինը:

1978 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդում, որպես ավագ ռեֆերենտ: 1980 թվականից աշխատել է ՀԿԿ Կենտկոմի հրահանգիչ, իսկ 1985-ից՝ սեկտորի վարիչ:

1986թ. ընտրվել է Արտաշատի շրջսովետի գործկոմի նախագահ, 1988-ին կրկին տեղափոխվել է ՀԿԿ Կենտկոմ՝ որպես բաժնի վարիչի տեղակալ:

1990 թ. ընտրվել է Արտաշատի շրջկոմի առաջին քարտուղար, աշխատել է մինչև 1991-ի սեպտեմբերը: 1990թ. Արտաշատի թիվ 120 ընտրական տեղամասից ընտրվել է ՀՀ ԳԽ պատգամավոր:

1992թ. ընտրվել է ԳԽ-ի իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, իսկ 1993թ.՝ հանձնաժողովի քարտուղար: Միաժամանակ, 1992-1993թթ. աշխատել է ՀՀ կառավարությունում, որպես գործերի կառավարիչի առաջին տեղակալ:

1990-1993թթ. հեռակա կարգով սովորել և ավարտել է ՌԴ կառավարման ակադեմիան:

2000-ից մինչև 2004թ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովում՝ որպես ԱԺ նախագահի խորհրդական:

Ամուսնացած է, ունի երկու որդի, մեկ դուստր:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ**

2004թ. Պաշտպանի աշխատակազմում աշխատանքից ազատման, աշխատավարձերի չվճարման կամ ուշացումներով վճարման, արտադրությունում ստացված խեղումների կամ ձեռք բերված մասնագիտական հիվանդությունների համար հասանելիք վնասների փոխհատուցումների չվճարման առնչությամբ մոտ 130 դիմում է մուտքագրվել: Ստացված դիմումների գերակշռող մեծամասնությունը վերաբերում է *մասնավոր սեկտորին*: Թեև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը իրավունք է վերապահում Պաշտպանին քննարկել միայն պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների խախտման վերաբերյալ բողոքները, սակայն այդ դիմումները նույնպես ուսումնասիրվում են՝ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլ տրվող անգործությունը հայտնաբերելու նպատակով:

Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունների առկա վիճակի վերլուծությունը վկայում է, որ աշխատանքային իրավունքները մեր իրականության մեջ, *գերազանցապես մասնավոր ոլորտում*, զանգվածաբար ոտնահարվում են:

Դրան նպաստում են օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի մի շարք գործոններ: Կարևորագույն գործոններից մեկը սոցիալ-տնտեսական իրավիճակն է, որն ազդում է հասարակական հարաբերությունների վրա: Պետական որոշ մարմիններ չեն օգտագործում առկա բոլոր հնարավորությունները, որպեսզի սոցիալական ոլորտում և մասնավորապես, աշխատանքի բնագավառում, պահպանվեն մարդկանց իրավունքներն ու օրինական շահերը:

Բացասական գործոն է նաև պետության կողմից աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ ոչ բավարար հսկողությունը: Այնինչ՝ եվրոպական որոշ երկրներում աշխատանքի տեսչությունները (սոցիալական ոստիկանություն) գոյություն ունեն մոտ 150 տարի:

Ներկայումս ՀՀ Ազգային ժողովում քննարկվում է Հայաստանում 2005 թվականին աշխատանքի պետական տեսչության ստեղծումը: Տարիներ ի վեր նման մեխանիզմի բացակայությունը բազմաթիվ գործատուների մոտ վստահություն է ներշնչել, որ իրենք աշխատանքային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն չեն կրի:

Աշխատավարձի վճարման ուշացումները, անօրինական արձակուրդները, առանց աշխատավարձի պահպանման հարկադիր արձակուրդներ ուղարկելը կարելի է պատճառաբանել տնտեսական ճգնաժամով, սակայն օրենքի խախտումների մեծ մասը չի կարելի բացատրել տնտեսական պատճառներով, և տարեցտարի կրկնվող խախտումները դառնում են «ավանդական»: Խախտումների մեծ մասը գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի դադարեցման անօրինականության հետևանք է: Այդ խախտումները բնորոշվում են առավելապես նրանց գիտակցությամբ, քանի որ աշխատանքային օրենսգիրքը միանշանակ նշում է աշխատանքային պայմանագրի դադարեցման հիմքերը և կարգը, ինչը բացառում է օրենքի ինքնակամ մեկնաբանության հնարավորությունը:

Երբ աշխատողները հարկադրաբար, առանց աշխատավարձի վճարման, ուղարկվում են արձակուրդ՝ մեծանում է թաքնված գործազրկությունը:

Բացահայտ է այն փաստը, որ ձեռնարկությունում սեփականության ձևի փոփոխումը, որպես կանոն, հանգեցնում է աշխատողների իրավունքների խախտմանը: Փոքր և միջին ընկերությունների աճը սրում է աշխատողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության խնդիրը, քանի որ նրանցում բացակայում են արհեստակցական կազմակերպությունները կամ էլ աշխատանքային կոլեկտիվի այլ միավորումները, իսկ գործատուներն անտեսում են աշխատանքային օրենսդրությունը:

Աշխատանքային պայմանագրի խախտումը սկսվում է հենց պայմանագրի կնքումից: Աշխատանքային պայմանագիրը հաճախ իրավական պատշաճ ձևով չի կնքվում: Լինում են

դեպքեր, երբ մոլորության մեջ են գցում աշխատողներին՝ աշխատանքային պայմանագիրը փոխարինելով քաղաքացիականով: Գործատուին դա թույլ է տալիս առանց հիմքերի և առանց անհրաժեշտ ձևակերպման դադարեցնել աշխատողի հետ հարաբերությունները, հաճախ չվճարելով աշխատավարձը: Ամենից հաճախ դա տեղի է ունենում մասնավոր ընկերությունների մանր բաժնետերերի և ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատողների հետ: Գործատուն ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել աշխատավարձի վճարումը, իսկ հետագայում աշխատողն ընդհանրապես կարող է մնալ առանց աշխատանքի:

Աշխատանքային գորույկը հաճախ չի ձևակերպվում կամ պատշաճ ձևով չի ձևակերպվում, ինչը հետագայում բարդություններ է առաջացնում աշխատողի համար:

Կնքվող աշխատանքային պայմանագրերը հաճախ հակասում են ՀՀ մինչ օրս գործող աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածին, ըստ որի աշխատանքային պայմանագրի այն պայմանները, որոնք ՀՀ աշխատանքային օրենսդրության համեմատությամբ վատթարացնում են աշխատողների վիճակը, համարվում են անվավեր: Գործատուները պայմանագրի մեջ մտցնում են աշխատողի դրությունը բացահայտորեն վատթարացնող պայմաններ: Օրինակ, կանանց առաջադրում են պայման, որ հղիության դեպքում աշխատանքային պայմանագիրը նրանց հետ կդադարեցվի: Եվ ելնելով իրենց ծանր կացությունից՝ մարդիկ հաճախ համաձայնում են այդ պայմաններին: Գործատուներն աշխատողներին հաճախ վերաբերում են որպես միջոցի, որի օգնությամբ ստանում են շահույթ, ինչի մասին նրանք ավելի շատ են մտածում, քան աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքների և շահերի մասին:

Բազմաթիվ ընկերություններում չեն պահպանվում աշխատանքի անվտանգության տարրական պայմանները, ինչի հետևանքով առաջանում են մասնագիտական հիվանդություններ, արտադրական խեղումներ և առողջության այլ խաթարումներ:

Արտադրության կրճատման պարագայում ձեռնարկություններում դժբախտ պատահարների փաստերը կարելի է բացատրել գործատուների սոցիալ-տնտեսական կացությամբ, որի հետևանքով նրանք չեն մտածում աշխատանքի անվտանգ պայմանների մասին, քանի որ դրա ապահովման համար անհրաժեշտ են բավականին լուրջ գումարներ և համապատասխան որակավորում ունեցող կադրեր: Վերջիններիս պակասը մեզանում նույնպես լուրջ խնդիր է: Որոշ ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության ծառայությունները դադարեցրին իրենց գոյությունը, առաջին օգնության և պրոֆիլակտիկայի ծառայությունների ստորաբաժանումները նույնպես լուծարվեցին, իսկ նոր ձեռնարկություններում դրանք չեն էլ ստեղծվում: Կա նաև սուրբյեկտիվ գործոնը:

Փաստ է այն, որ շարունակվող տնտեսական վերափոխումների և ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքում աշխատանքի պաշտպանության համակարգի բարեփոխումը զգալիորեն ետ է մնացել:

Գործատուները հաճախ շահագործում են աշխատողներին: Որոշ ընկերություններում աշխատողի համար երբեմն սահմանվում է աշխատանքային օր, որը զգալիորեն գերազանցում է նորման: Աշխատավարձի չափը հաճախ սահմանվում է ոչ թե աշխատանքային փորձին կամ որակավորմանը համապատասխան, այլ ելնելով անձնական նվիրվածությունից կամ զանազան ծառայությունների մատուցումից:

Փոքր և միջին բիզնեսի ընկերություններում արհմիությունները կամ իսպառ բացակայում են, կամ էլ անվերապահորեն կատարում են գործատուի կամքը: Որպես կանոն, ղեկավարները արհմիությունների վրա ճնշում են գործադրում, իսկ առաջնորդներին առաջարկում են ավելի արտոնյալ վիճակ: Այսպիսով, արհմիութենական մարմինները, նրանց առաջնորդները դասվում են էլիտայի շարքին՝ հակադրվելով աշխատողներին: Այսպիսի իրադրությունում արհմիությունները տալիս են իրենց համաձայնությունը աշխատողների անօրինական արձակմանը, չեն պաշտպանում աշխատողների շահերը՝ աշխատավարձի չվճարման ժամանակ, չեն արձագանքում ղեկավարության կողմից աշխատանքային օրենսդրության մյուս խախտումներին:

Խելամտորեն անցկացնելով ազատականացումը, որը շուկային անցնելու պարագայում անխուսափելի է, չափազանց կարևոր է, որ արհմիություններն արդյունավետ կատարեն իրենց գործառույթները: Հզոր արհմիություններն անհրաժեշտ են ոչ միայն պաշտպանական գործառույթների իրականացման և կոլեկտիվ պայմանագրերի կնքման համար, այլև

սոցիալական գործընկերների շահերի հավասարակշռության քաղաքականության ապահովման համար:

Դիտարկենք աշխատանքային իրավունքների առավել բնութագրական խախտումները:

1. ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 16-րդ հոդվածը՝ որոշակիացնելով հիշատակված նորմը, արգելում է աշխատանքի ընդունման չհիմնավորված մերժումը:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ աշխատանքի ընդունելիս չի թույլատրվում որևէ իրավունքի ուղղակի կամ անուղղակի սահմանափակում, ուղղակի կամ անուղղակի առավելությունների սահմանում՝ ելնելով սեռից, ռասայից, ազգային պատկանելությունից և կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից:

Սակայն պրակտիկայում ականատես ենք լինում նշված նորմի գրեթե համատարած խախտմանը, հատկապես մասնավոր սեկտորում: Մեզանում սովորական են դարձել աշխատանքի ընդունման մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում են մինչև 35 տարեկան որակյալ գլխավոր հաշվապահներ, կամ 18-25 տարեկան բարետես վաճառողուհիներ, մատուցողներ, հավաքարարներ, խոհարարներ և այլն:

Հիշատակված, ինչպես նաև համանման այլ դեպքերում, որոնք, ցավոք, մեր իրականության անբաժանելի մասն են, աշխատանքային պայմանագրի կնքումից գործատուի հրաժարվելու պատճառները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին և կադրերի գործարար հատկանիշներով ընտրության սկզբունքին:

Մեր հասարակության որոշ հատված /40-63 տարեկան/ գտնվում է սոցիալական առավել ռիսկային գոտում, քանի որ չափազանց ցածր են նրանց հնարավորությունները աշխատաշուկայում, չեն կարող ստանալ կենսաթոշակ, շատ հաճախ չեն ստանում ընտանեկան նպաստներ, քանի որ համարվում են աշխատունակ:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանվում է աշխատանքային գրքույկի տրամադրման և լրացման կարգը:

Պրակտիկայում հաճախ կարելի է հանդիպել ադմինիստրացիայի կողմից աշխատանքային գրքույկների չլրացման կամ սահմանված ժամկետի կոպիտ խախտումով լրացման դեպքերի, ասենք՝ աշխատողին աշխատանքից արձակելու ժամանակ: Որոշ դեպքերում աշխատանքային գրքույկում անփութորեն չեն գրանցվում բանվորին շնորհած նոր կարգը կամ նույն ընկերությունում նրան այլ՝ հատկապես աշխատանքի վնասակար և վտանգավոր պայմաններ ունեցող, արտադրամաս տեղափոխելը: Կադրային ստորաբաժանումների կողմից թույլ տված անփութությունները հետագայում էական ազդեցություն են ունենում աշխատողին արտոնյալ կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակների նշանակման կամ չափի վրա, ինչը հարուցում է տուժած անձանց արդարացի դժգոհությունը:

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 36-րդ հոդվածը նախատեսում է այն հիմքերը, որոնցով ադմինիստրացիան իր նախաձեռնությամբ կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը: Նշված հոդվածը սահմանում է ադմինիստրացիայի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման ընդհանուր հիմքերի սպառիչ թվարկումը: Ադմինիստրացիայի նախաձեռնությամբ աշխատողների աշխատանքից արձակումը որևէ այլ հիմքով, բացի օրենքում նշվածներից, չի թույլատրվում:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 36-րդ հոդվածի 9-րդ կետից յուրաքանչյուրը նախատեսում է աշխատողին աշխատանքից արձակման ինքնուրույն հիմք, պրակտիկայում, որքան էլ դա տարօրինակ թվա, կան դեպքեր, երբ աշխատողն աշխատանքից արձակվում է միանգամից չորս կետերի հիման վրա կամ աշխատանքից ազատման մասին հրամանում առհասարակ բացակայում է հղումը որևէ կետի:

4. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 42²-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Առաջիկա ազատման մասին աշխատողներն անհատապես նախազգուշացվում են ոչ ուշ, քան երկու ամիս առաջ»: Որոշակիացնելով նշված նորմը՝ «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի «գ» կետը սահմանում է. «Վերակազմավորման, լուծարման, աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման հետևանքով ազատվող

անձանց այդ մասին տեղեկացնել նրանց ազատելուց ոչ ուշ, քան երկու ամիս առաջ և վճարել արձակման նպաստ՝ ամսական միջին վաստակի չափով»:

Չնայած մեջբերված երկու իրավական ակտերի հստակ սահմանմանը՝ պրակտիկայում բազմաթիվ են գործատուների կողմից նախազգուշացման և նրա գրավոր ձևի անտեսման դեպքերը:

5. Աշխատողներին ամենամյա արձակուրդ է տրվում առնվազն 15 աշխատանքային օր տևողությամբ: Սակայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված դեպքերում որոշ կատեգորիայի աշխատողներին տրվում են լրացուցիչ արձակուրդներ, որոնք տրվում են հիմնականի հետ միասին:

Արձակուրդը պետք է տրվի ամեն տարի, սահմանված ժամանակ: Ամենամյա արձակուրդը պետք է հետաձգել կամ երկարացնել՝ աշխատողի ժամանակավոր անաշխատունակության դեպքում, աշխատողի կողմից պետական կամ հասարակական պարտականություններ կատարելիս, օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Բացառիկ դեպքերում, երբ աշխատողին ընթացիկ աշխատանքային տարում արձակուրդ տալը կարող է անբարենպաստ անդրադառնալ ընկերության, հիմնարկի, կազմակերպության աշխատանքի նորմալ ընթացքի վրա, թույլատրվում է աշխատողի և արհկոմիտեի համաձայնությամբ, արձակուրդը հետաձգել մյուս աշխատանքային տարի: Հետաձգված արձակուրդը կարող է միացվել հաջորդ աշխատանքային տարվա արձակուրդին:

Արգելվում է ամենամյա արձակուրդ չտրամադրել անընդմեջ երկու տարվա ընթացքում, ինչպես նաև տասնութ տարեկան չդարձած աշխատողներին և այն աշխատողներին, որոնք աշխատանքի վնասակար պայմանների կապակցությամբ լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեն (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 80-րդ հոդված):

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 82-րդ հոդվածի՝ «Ընտանեկան հանգամանքներով և այլ հարգելի պատճառներով աշխատողին, նրա դիմումի համաձայն, ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության ղեկավարի կամ արտադրական միավորի ղեկավարի թույլտվությամբ կարող է տրվել կարճատև արձակուրդ՝ առանց աշխատավարձի պահպանման, որը ձևակերպվում է հրամանով (կարգադրությամբ): Անհրաժեշտ դեպքերում կողմերի համաձայնությամբ այդ արձակուրդի դիմաց աշխատողը կարող է աշխատել հետագայում, ելնելով արտադրության պայմաններից ու հնարավորություններից»:

Ինչպե՞ս են օրենսգրքի այս դրույթները կիրառվում պրակտիկայում: Որոշ մասնավոր ընկերություններում, կազմակերպություններում կարելի է հանդիպել դեպքերի, երբ գործատուն չի ցանկանում չնորմավորված աշխատանքային օրով աշխատողներին տրամադրել լրացուցիչ արձակուրդ, որի տևողությունը պետք է կազմի մինչև 12 աշխատանքային օր: Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ընկերություններում, հիմնարկներում, գերատեսչություններում հաճախ խախտվում է նաև աշխատողին յուրաքանչյուր տարի արձակուրդ տալու վերաբերյալ օրենսգրքի պահանջը և արձակուրդները չեն տրվում տարիներով, ինչը վերջիվերջո բացասաբար է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, առաջանում է գերհոգնածություն և որպես հետևանք՝ կտրուկ ընկնում է արտադրողականությունը: Մի շարք մասնավոր ընկերություններում գոյություն չունի անգամ արձակուրդ հասկացությունը կամ էլ այն փոխարինվում է դրամական փոխհատուցմամբ, ինչը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 81-րդ հոդվածով չի թույլատրվում:

Ամենատարածված խախտումներից է նաև գործատուի կողմից առանց աշխատավարձի պահպանման աշխատողին արձակուրդի տրամադրման չարաշահումը: Առանց աշխատավարձի պահպանման երկարատև արձակուրդ գործատուները հիմնականում պարտադրում են աշխատողներին՝ խախտելով աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված ժամկետները:

6. Ամենացավոտ խնդիրներից են աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ստացած խեղումները, մասնագիտական հիվանդությունները և առողջության այլ վնասումները, քանի որ դրանց հետևանքով անձը կարող է մասամբ կորցնել աշխատունակությունը, ինչի պատճառով ստիպված կլինի փոխել իր աշխատանքի բնույթը, կամ հաշմանդամ կդառնա:

Հաշվի առնելով տուժողի նյութական ապահովության խնդրի կարևորությունը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 181-րդ հոդվածը սահմանում է. «Ձեռնարկությունները,

հիմնարկները, կազմակերպությունները ՀՀ օրենսդրությանը համապատասխան նյութական պատասխանատվություն են կրում այն վնասի համար, որ պատճառվել է աշխատողներին՝ վերջիններիս կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղմամբ կամ առողջության այլ վնասումով»:

Ի լրացումն հիշատակված հոդվածի՝ ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ հաստատված «Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին» կանոնների 1-ին կետի 1-ին և 2-րդ մասերը հստակորեն սահմանում են. «Ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, անկախ սեփականության ձևից, նյութական պատասխանատվություն են կրում իրենց մեղքով աշխատողների՝ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման համար, եթե այն առաջացել է կազմակերպության տարածքում կամ դրանից դուրս աշխատանքային պարտականություններ կատարելիս, ինչպես նաև կազմակերպության օգտին որևէ անհրաժեշտ գործողություն կատարելիս»:

Կազմակերպությունն ազատվում է վնասի փոխհատուցումից, եթե ապացուցում է, որ աշխատողի խեղումը, մասնագիտական հիվանդությունը կամ առողջության այլ վնասումն առաջացել է ոչ իր մեղքով»:

«Վնասի փոխհատուցումը կատարում է այն կազմակերպությունը, որը պատասխանատու է աշխատողին պատճառած խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման համար» (կետ 14):

«Կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին» (կետ 16):

Ինչպես տեսնում ենք՝ թվարկված նորմատիվ ակտերը հստակորեն գործատուի վրա են դնում փոխհատուցում վճարելու պարտականությունը: Մակայն բազմաթիվ գործատուներ կոպտորեն ոտնահարում են նշված դրույթների կատարումը, այն է՝ տուժողներին չեն վճարում փոխհատուցման հասանելիք գումարները, ինչն առաջացնում է սոցիալական անհարկի լարվածություն: Խախտումները հիմնականում կատարվում են առանց իրավահաջորդության դադարեցման մասնավորեցված ընկերությունների գործատուների կողմից, այն պատճառաբանությամբ, որ իրենք գործ չունեն գոյություն չունեցող ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության պարտավորությունների հետ:

7. Կարևոր խնդիր է նաև աշխատանքային հարաբերություններում կանանց իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 197-րդ հոդվածն արգելում է կանանց աշխատանքի չընդունել և նրանց աշխատավարձն իջեցնել հղիության և երեխային կերակրելու հետ կապված պատճառներով:

Չի թույլատրվում նաև հղի կանանց, ծծմայրերին, մինչև երեք տարեկան երեխա ունեցող մայրերին աշխատանքից ազատել ադմինիստրացիայի նախաձեռնությամբ, բացառությամբ ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության լրիվ լուծարման դեպքերի, երբ արձակումը թույլատրվում է աշխատանքի տեղավորելու պարտադիր պայմանով:

Գործատուները հաճախ անտեսում են նշված դրույթը և խուսափում աշխատանքի ընդունել նորապսակ կամ մանկահասակ երեխաներ ունեցող կանանց: Կան դեպքեր, երբ կանայք հղիության և ծննդաբերության արձակուրդի կամ երեխային խնամելու համար լրացուցիչ արձակուրդի ընթացքում ադմինիստրացիայի հրամանով արձակվում են աշխատանքից:

8. Իրավական և բարոյական բոլոր նորմերի խախտում է նաև այն, երբ գործատուն անձին ընդունում է աշխատանքի՝ պայմանով, որպեսզի նա երկու ամիս աշխատի անվճար, որպես «փորձաշրջան», և եթե անցնի այդ «փորձաշրջանը», ստանա աշխատավարձ: Անձն այդ երկու ամսվա ընթացքում օրական աշխատում է 12-14 ժամ, սակայն նրան ոգևորում է «փորձաշրջանն» անցնելու միտքը: Այնուհետև, երկու ամիս անց, գործատուն աշխատողին

հայտարարում է, որ նա «փորձաշրջանը» չի անցել, և նրանց միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն աշխատած ժամանակը չի վարձատրվում:

9. Պաշտպանի աշխատակազմում հանրապետության մարզերից ստացվել են բողոքներ և ահազանգեր տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատավարձի տարիներով չվճարումների վերաբերյալ: Ստացված դիմումների կապակցությամբ հարցում ենք կատարել բոլոր մարզպետներին: Մարզպետներից ստացված պատասխաններում նշվում է, որ հանրապետության բոլոր մարզերում տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատավարձերի վճարման ուշացումներ կան, որի պատճառը համայնքների կողմից սեփական եկամուտների ոչ լրիվ և ոչ ժամանակին հավաքագրումն է: Ըստ մարզպետների, դա պայմանավորված է այդ համայնքների ղեկավարների և նրանց աշխատակազմերի կողմից բյուջեի եկամուտների հավաքագրման գործում թույլ տրվող թերություններով: Անընդունելի համարելով աշխատողների աշխատավարձերի վճարման ուշացումները և ստեղծված իրավիճակը որակելով որպես մարդու իրավունքների միանշանակ խախտում, Պաշտպանը 2005թ. փետրվարի 2-ին համապատասխան գրություն է հղել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարին, առաջարկելով ձեռնարկել համապատասխան միջոցներ օրենքով նախատեսված ժամկետներում աշխատավարձերի վճարումը ապահովելու ուղղությամբ և այդ մասին տեղեկացնել Պաշտպանին: Նախարարը իր հերթին դիմելով մարզպետներին՝ խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցներ իրավիճակը շտկելու ուղղությամբ: Ներկայումս Պաշտպանը գրություններ է ստանում մարզպետներից, որտեղ նրանք հայտնում են այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին: Համոզված ենք, որ խնդրո առարկա հիմնահարցի կարգավորումը ոչ միայն կմեղմացնի մարզերում առկա սոցիալական լարվածությունը, այլև կնպաստի տեղական ինքնակառավարման մարմինների կայացմանն ու զարգացմանը:

Աշխատանքային հարաբերությունների ոլորտում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ: Աշխատանքային հարաբերությունների կարգավորման համալիր մոտեցումը կարգախոս չէ, այլ ցանկացած սոցիալ-տնտեսական խնդրի լուծման օբյեկտիվ պահանջ, այդ թվում՝ մարդկային գործունեության հիմնական աշխատանքի ոլորտում:

Այդ շարքում առաջին կարևոր և դրական քայլը կարելի է համարել ՀՀ նոր աշխատանքային օրենսգրքի ընդունումը: Սակայն բացի աշխատանքային օրենսգրքից անհրաժեշտ է ընդունել նաև ոլորտին վերաբերող այլ նորմատիվ-իրավական ակտեր:

Անչափ կարևոր է աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողության առկայությունը, որն աշխատողների իրավունքների պաշտպանվածության հիմնական գրավականն է: Աշխատանքի պետական տեսչության ստեղծումը նախատեսվում է 2005 թվականի ընթացքում: Շատ կարևոր է, որ աշխատանքի պետական տեսչությունը ի սկզբանե ապահովի աշխատանքային օրենսդրության անշեղ կատարումը բոլոր ձեռնարկություններում և կազմակերպություններում՝ նրանց սեփականատերի հասարակական և գույքային դիրքից անկախ: Կարևոր է նաև այդ տեսչությունը որակյալ կադրերով համալրելու խնդիրը:

Դրական է նաև ՀՀ նոր աշխատանքային օրենսգրքում սոցիալական գործընկերության համակարգի ամրագրումը: Սոցիալական գործընկերությունը՝ պետական իշխանության մարմինների և աշխատանքային հարաբերությունների կողմերի ներկայացուցիչների համագործակցությունն է տնտեսության զարգացման, աշխատանքի պայմանների բարելավման և աշխատավորների կենսամակարդակի բարձրացման նպատակով:

Սոցիալական գործընկերությունը հարկավոր է դիտարկել որպես շուկայական տնտեսությանը բնորոշ սոցիալ-աշխատանքային հարաբերությունների հատուկ ձև, որը վարձու աշխատողների, գործատուների և պետության հավասար համագործակցության հիման վրա ապահովում է նրանց հիմնական շահերի օպտիմալ հավասարակշռությունն ու իրականացումը:

Հայաստանում դեռ պետք է ստեղծել գործընկերային հարաբերությունների տնտեսական, սոցիալական, իրավական, հոգեբանական հիմքերը, կուտակել կազմակերպական, գիտա-մեթոդական, կադրային, ֆինանսական ապահովման փորձ, ձևավորել գործընկերային հարաբերությունների կուլտուրան:

Վերոգրյալ խնդրի հաջողությամբ լուծելը հնարավոր է սոցիալական գործընկերներից յուրաքանչյուրի՝ արհմիությունների, գործարարների և պետության ակտիվ մասնակցության դեպքում միայն:

Մեզանում հատկապես կարևոր է արհեստակցական միությունների դերի ակտիվացումը, որոնք աշխատանքի պետական տեսչությանը զուգահեռ պետք է իրականացնեն հասարակական վերահսկողություն աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ:

Կյանքի հրամայականներից է նաև բնակչության, այդ թվում՝ գործատուների և աշխատողների իրավական կուլտուրայի բարձրացմանն աջակցելը:

Այսպիսով՝ ազգային աշխատանքային օրենսդրության համալրումը, սոցիալական գործընկերության համակարգի ձևավորումը, աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ պատշաճ հսկողությունն ու վերահսկողությունը զգալիորեն կբարելավեն աշխատանքային հարաբերությունների ներկա անմխիթար վիճակը, կբարձրացնեն աշխատանքի արդյունավետությունն ու արտադրողականությունը, կնպաստեն հասարակական հարաբերությունների ներդաշնակությանը:

Հայաստանի Հանրապետությունում կանանց իրավունքների պաշտպանության մասին

Կանանց հավասար և լիարժեք մասնակցությունը երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր կյանքին նախապայման է հանդիսանում այնպիսի ժողովրդավարական պետության ստեղծման համար, որը հիմնվում է օրենքի գերակայության և սոցիալական արդարության վրա:

ՀՀ ներպետական իրավական ակտերը և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերը լայն իրավունքներ են վերապահում կանանց, սակայն ավելի արդիական է կանանց և տղամարդկանց դե-ֆակտո հավասարության խնդիրը: Դե-ֆակտո իրականությունն ավելի խնդրահարույց է: Բանն այն է, որ կանանց կարգավիճակին վերաբերող իրավական ակտերը հաճախ կրում են միայն հռչակագրային բնույթ և չեն իրականացվում: Իրական կյանքում կանանց նկատմամբ խտրականության դեպքերի կարելի է հանդիպել ինչպես ընտանիքում, այնպես էլ աշխատավայրում, հասարակությունում: Այս երևույթի պահպանմանն են նպաստում մշակութային և կրոնական սովորույթները և պատկերացումները, որոնք նսեմացնում են կնոջ դերը:

Կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում կարևորագույն իրադարձություն կարելի է համարել ՀՀ կառավարության կողմից թիվ 645-Ն որոշմամբ ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրի և դրա միջոցառումների ժամանակացույցի հաստատումը: Այս ծրագիրը սահմանում է ՀՀ-ում կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տարվող պետական քաղաքականության սկզբունքները, առաջնահերթությունը և հիմնական ուղղությունները:

Ուշագրավ է նաև, որ 2004թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ «Աջակցել կանանց առաջընթացին՝ ազգային ծրագիրը գործողության մեջ» միջազգային խորհրդաժողովը:

Ուղղունելի է Հայաստանում կանանց հիմնահարցերով զբաղվող **հասարակական կազմակերպությունների աճը**, որոնք իրականացնում են լայնածավալ գործունեություն՝ նպաստելով կանանց առաջընթացին ամենատարբեր, այդ թվում՝ քաղաքական, տնտեսական և սոցիալական, ոլորտներում, ինչպես նաև մեծ դեր են խաղում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման, կանանց քաղաքական և հասարակական ակտիվության բարձրացման գործում: Ներկայումս հասարակական կազմակերպությունների կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև այնպիսի հիմնախնդիրների վրա, ինչպիսիք են՝ պետական մարմինների անգործությունը կամ ոչ համարժեք գործունեությունը ընտանիքում կանանց նկատմամբ կիրառվող բռնության և կանանց առուվաճառքի հետ կապված:

Հայաստանում կանանց առաջխաղացման գործընթացում կարևոր դեր խաղացող հասարակական կազմակերպությունների աճը որպես դրական կողմ հիշատակել է նաև կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե):

Կանանց ընդգրկվածությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացում

Ինչպես հայտնի է, երկար տարիների ընթացքում երկրի քաղաքական ոլորտում կանանց մասնակցության ցածր տոկոսը դիտվել է որպես նվազ կարևորություն ունեցող հարց, ընդ որում նման իրավիճակի համար հաճախ մեղադրվել են կանայք (նրանք չեն հետաքրքրվում քաղաքականությամբ, նրանք բավականին ուժեղ չեն գտնվել ընտրարշավների ժամանակ և այլն): Ի տարբերություն նախկին մոտեցումների, այժմ շատ հաճախ հանդիպում ենք այն կարծիքին, որ կանանց նվազ մասնակցությունը

քաղաքականության մեջ հանդիսանում է խոչընդոտ ոչ միայն կանանց զարգացման, այլ նաև ժողովրդավարության զարգացման համար և վկայում է «վատառողջ ժողովրդավարության» մասին:

Երկրի քաղաքական կյանքին կանանց մասնակցությանն առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (այսուհետ՝ կոնվենցիա), որին Հայաստանը միացել է 1993 թվականին:

Այս կոնվենցիան, բնականաբար, միակ միջազգային իրավական փաստաթուղթը չէ, որ անդրադառնում է քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց հավասար մասնակցության ապահովման հիմնախնդրին: Մի շարք այլ կոնվենցիաներ, հռչակագրեր և միջազգային հետազոտություններ նույնպես մեծ ուշադրություն են դարձնում այս խնդրին: Մասնավորապես՝ մարդու իրավունքների հռչակագիրը, քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան, Վիեննայի հռչակագիրը, պեկինյան հռչակագիրը և գործողությունների ծրագիրը և այլն:

ՀՀ Սահմանադրությունը և օրենքները բացառում են քաղաքական կյանքում կանանց մասնակցության սահմանափակումները: ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը նախատեսում է, որ ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիները ունեն անմիջականորեն կամ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունք: ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածը նախատեսում է, որ ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու իրավունք, իսկ 3-րդ հոդվածը երաշխավորում է «ընտրելու կամ ընտրվելու իրավունքը»:

Այնուամենայնիվ ՀՀ-ում վիճակն այս առումով բարվոք համարել չի կարելի: Ակնհայտ է որոշումների կայացման մակարդակներում և քաղաքականության մեջ կանանց ոչ բավարար ներգրավվածությունը, կանանց և տղամարդկանց անհավասար մասնակցությունը: Իրական կյանքում մեր հանրապետությունում առկա է բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն: Այդ է վկայում քաղաքական ոլորտում կանանց ընդգրկվածության վերլուծությունը:

Այսպիսին է ներկայիս իրավիճակը. 2003թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից հետո *կանայք ՀՀ Ազգային ժողովում կազմում են 4,1 տոկոս*: 6 կին պատգամավորներից մեկն ընտրվել է մեծամասնական ցուցակով, հինգը՝ համամասնական: Կանայք մեծամասնական ցուցակներում կազմում էին 4 տոկոս, իսկ համամասնական ցուցակներում՝ 14,1 տոկոս³: Այսինքն՝ փոքր է ինչպես արդեն իսկ ընտրված կին պատգամավորների թվաքանակը, այլ նաև ընտրություններին առաջադրված կին-թեկնածուների թվաքանակը:

Ազգային ժողովում կին ներկայացուցիչների թիվն ավելացնելու ուղղությամբ կատարված երկարատև աշխատանքի արդյունքում օրենսդրորեն ամրագրվեց, որ պետք է երաշխավորվի կանանց առնվազն 5 տոկոս ներկայացուցչությունը Ազգային ժողովի ընտրությունների համար յուրաքանչյուր կուսակցության թեկնածուական ցանկում: Սակայն այս հարցը ներկայումս նույնպես հանդիսանում է լայն քննարկումների առարկա: Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի շարք հասարակական կազմակերպություններ շեշտում են այն հանգամանքը, որ իրականում կուսակցությունները կին թեկնածուների անունները նշվում են ցանկերի վերջում, որի արդյունքում շատ քիչ թվով կանայք են ընտրվում: Քննարկվել է նաև այն հարցը, որ անհրաժեշտ է ավելացնել կին ներկայացուցիչների թիվը քաղաքական կուսակցությունների ցուցակներում առնվազն 20-25 տոկոսով՝ ցուցակի առաջին տասը տեղերում նշելով առնվազն մի քանի կին թեկնածուի:

Պատահական չէ, որ միջխորհրդարանական խմբի կողմից իրականացված միջազգային հետազոտության արդյունքների համաձայն⁴ օրենսդիր մարմնում կանանց ներկայացուցչության առումով 2005 թ. փետրվարի 28-ի դրությամբ 184 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 109-րդ տեղը:

³ ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիր:

⁴ Այս հետազոտությունը իրականացվել է տարբեր երկրների կառավարությունների կողմից ներկայացված տվյալների հիման վրա:

Հուսադրող չէ կանանց թիվը նաև **գործադիր իշխանության** մարմիններում: Ներկայումս ՀՀ-ում կին նախարար չկա: Ցավոք, միջազգային հարաբերությունների ոլորտում նույնպես հայ կանայք քիչ են ընդգրկված: Այդ են վկայում կին դեսպանների փոքրաքանակ կազմը, պատվիրակություններում կանանց ցածր տոկոսը և այլն:

Նմանատիպ իրավիճակ է նաև **տարածքային կառավարման** և **տեղական ինքնակառավարման** մարմիններում: Այսպես, Հայաստանում **երբևէ չի եղել կին մարզպետ**, իսկ 2002թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում **932 կին թեկնածուներից ընտրվել է 8 կին**:

Ի տարբերություն երկրի քաղաքական կյանքում որոշումների կայացման գործընթացի՝ բավականին բարձր է կանանց ընդգրկվածությունը հասարակական կազմակերպությունների աշխատանքներում:

Հայաստանում կանանց թիվը գերակշռում է կրթության, առողջապահության, մշակույթի և սպասարկման ոլորտներում: Բայց, չնայած որ ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կանայք են, դպրոցների տնօրենները մեծ մասամբ տղամարդիկ են:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ չնայած ձեռնարկված որոշակի քայլերի և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերի, այնուամենայնիվ որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության տոկոսը շատ ցածր է: Կանանց հմտությունը և ներուժը բավարար չափով չեն օգտագործվում պետության ջանքերում՝ պայքարելու այն լուրջ տնտեսական և հասարակական դժվարությունների դեմ, որոնց բախվում է երկիրը: Վերջերս միջազգային կազմակերպությունների առաջարկությամբ հայ հասարակությունն ակտիվորեն քննարկում է ժամանակավոր հատուկ միջոցների կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նշված է կոնվենցիայի 4-րդ հոդվածում, օրինակ՝ քվտաների ընդունումը, ուսուցողական ծրագրերի և իրազեկությունը բարձրացնող քարոզարշավների իրականացման անհրաժեշտությունը, ինչը պետք է նպաստի քաղաքականության մեջ որոշումներ կայացնելու գործընթացում կանանց դերի բարձրացմանը:

Մարդկանց առուվաճառքը

Մարդկանց և մասնավորապես կանանց և երեխաների առուվաճառքը ողջ աշխարհում լայն տարածում ստացած երևույթ է: Մարմնավաճառությանը և մարդկանց առուվաճառքին հատկապես նպաստում են աղքատությունը, պատշաճ վարձատրվող աշխատանքային հնարավորությունների պակասը, ծանր տնտեսական վիճակը, իրազեկության ցածր մակարդակը: Մարդկանց առևտրի գոհ են դառնում, որպես կանոն, սոցիալապես անապահով կանայք:

Վերջին տարիների ընթացքում մարդկանց առուվաճառքի դեմ պայքարում Հայաստանը իրականացրել է որոշ կարևորագույն քայլեր: Մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրության վավերացումը (վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի թիվ Ն-335-2 որոշմամբ):

ՀՀ կառավարությունը 15.01.2004թ. թիվ 58-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման և առուվաճառքի կանխման հայեցակարգն ու Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի կանխման 2004-2006թթ. միջոցառումների ազգային ծրագիրը: Ծրագրում հիմնական միջոցառումներն ուղղված են կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիքինգի երևույթի վերացմանը: Ծրագրի հիմնական ուղղություններն են՝ ուսումնասիրությունների կատարում, կանխարգելում, պաշտպանություն և աջակցություն:

2004թ. մարտին ՀՀ կառավարության և ՄԱԶԾ-ի միջև ստորագրվել է պայմանագիր «Մարդկանց առուվաճառքի դեմ պայքար. օժանդակություն հզորությունների զարգացմանը և աջակցություն տուժածներին» ծրագիրը իրականացնելու մասին:

ՀՀ օրենսդրությունը չի պարունակում որևէ օրենք, որն ուղղակիորեն նվիրված է մարդկանց առուվաճառքին, սակայն այս առումով հարկ է նշել, որ ներկայումս գործող

ՀՀ քրեական օրենսգիրքը (ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ին) մարդկանց առուվաճառքը նախատեսում է որպես առանձին հանցատեսակ: ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը որպես մարդկանց առևտուր է սահմանում մարդուն գնելը կամ վաճառելը, հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է նրան պոռնկության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարագոր վիճակի հասցնելու կամ կախյալ վիճակի մեջ դնելու կամ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել նաև ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք այլ հոդվածներ, օրինակ 131-րդ հոդվածը (մարդուն առևանգելը), 133-րդ հոդվածը (ազատությունից ապօրինի գրկելը), 138-րդ հոդվածը (բռնաբարություն), 139-րդ հոդվածը (սեքսուալ բնույթի բռնի գործողություններ) և այլն: Արդեն իսկ ստեղծված իրավիճակը խոսում է հօգուտ համապարփակ գործունեություն ծավալելու մասին մարմնավաճառության և մարդկանց առուվաճառքի մասին հասարակական իրազեկության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև թրաֆիքինգի զոհերին հասարակության մեջ վերաինտեգրվելու ուղղված աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ:

Հայաստանում չկա որևէ կառույց, որն աշխատեր թրաֆիքինգի զոհ դարձած սնձանց հետ՝ մատուցելով նրանց հոգեբանական, իրավաբանական ծառայություններ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ ապաստան, և այդ հարցերով հիմնականում զբաղվում են տարբեր հասարակական կազմակերպություններ: Նպատակահարմար է այնպիսի կառույցի ստեղծումը, որտեղ զոհերը կարող են օգտվել հասարակության մեջ իրենց վերաինտեգրման համար հարկավոր տարբեր ծառայություններից: Ընդ որում, թրաֆիքինգի զոհի հետ աշխատանքը հսկայական նշանակություն ունի ոչ միայն վերջինիս վերահաստատման համար, այլ նաև հանցավոր խմբերի բացահայտման համար:

Կանանց իրավունքների պաշտպանությունը կրթության ոլորտում

Կրթության իրավունքը առանձնանում է մյուս իրավունքներից, որը պայմանավորված է նրանով, որ կրթության իրավունքը միաժամանակ հանդիսանում է նաև յուրահատուկ հիմք մյուս իրավունքների, այդ թվում՝ քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական իրավունքների իրականացման համար: Բնական է, որ կանանց հավասար կարգավիճակը կրթության ոլորտում հսկայական նշանակություն ունի նաև հետագայում ամենատարբեր ոլորտներում նրանց հավասար կարգավիճակի համար, այդ թվում՝ աշխատավայրում, ընտանիքում, հասարակությունում:

Կրթության իրավունքը իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածը ամրագրում է, որ մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի կրթության իրավունքը:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածը նախատեսում է, որ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը նաև կրթության ասպարեզում՝ կանանց համար տղամարդկանց հետ հավասար իրավունքներ երաշխավորելու նպատակով:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պարտավորեցնում է անդամ պետություններին երաշխավորել միևնույն հնարավորությունները սպորտին և ֆիզիկական պատրաստության պարապմունքներին ակտիվորեն մասնակցելու համար: Այս առումով մեր հանրապետությունում աղջիկներին և տղաներին հնարավորություն է տրված մասնակցելու սպորտային միջոցառումներին:

Կրթական տարբեր մակարդակներում սովորողների ընդգրկվածության առումով սեռային խտրականության հիմնախնդրին առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրում: Այս ծրագրում բերվում են նաև որոշ ուշագրավ վիճակագրական տվյալներ, որոնց նպատակահարմար է անդրադառնալ:

Այսպես, 2002թ. նախադպրոցական հիմնարկներ հաճախել է 44849 երեխա, դրանցից 22488-ը՝ աղջիկ: Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հիմնարկներում

կազմել է 18,5 տոկոս: Հիմնական կրթության ոլորտում (1-8 դասարաններ) սովորողների թիվը 424372 է, որից 208029-ը՝ աղջիկներ: 2002-2003 ուսումնական տարում ավագ դպրոցում աղջիկները կազմում էին սովորողների շուրջ 51,8 տոկոսը: Մասնագիտական կրթության ոլորտում առկա է կանանց որոշ գերակշռություն: 2002-2003 ուսումնական տարվա տվյալները վկայում են, որ տարբերությունները հատկապես ակնհայտ են եղել միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, որտեղ կանայք կազմել էին ընդգրկվածների 66 տոկոսը, իսկ տղամարդիկ՝ 34 տոկոսը: Բարձրագույն ուսումնական հաստատություններում կանանց տեսակարար կշիռը 49,7 տոկոս է՝ պայմանավորված մասնավոր բուհերում ընդգրկվածության ավելի բարձր աստիճանով: Ինչ վերաբերում է հետբուհական կրթական համակարգում կանանց ավելի փոքր տեսակարար կշիռին՝ 34,2 տոկոս, ապա դա հիմնականում պայմանավորված է ասպիրանտուրայում սովորող տղամարդկանց թվով՝ շուրջ 65,9 տոկոս, մինչդեռ մագիստրատուրայում ավելի բարձր է եղել կանանց տեսակարար կշիռը՝ շուրջ 51,9 տոկոս: Դոկտորանտուրայում սովորողների թվաքանակը կազմել է 28, նրանցից 27,4 տոկոսը կանայք էին:

Մեր հանրապետության կրթական համակարգում առկա է բավականին մեծ անհավասարություն՝ կապված մանկավարժական կազմի հետ: Ակնհայտ է, որ ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կանայք են: Սակայն տնօրենների մեծամասնությունը կազմում են տղամարդիկ: Մանկավարժների թվաքանակը նախադպրոցական հաստատություններում կազմել է 5397, նրանցից կանայք՝ 5394: Նախադպրոցական հիմնարկներում հիմնականում աշխատում են կանայք:

Հանրակրթական դպրոցներում 2002-2003 ուսումնական տարում աշխատել է շուրջ 54276 մանկավարժ, որոնցից 83,4 տոկոսը կանայք են:

Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում դասախոսների թվաքանակը կազմել է 4157, նրանցից կանայք՝ 3044, բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխանաբար՝ 8495 և 3906:

Վերոգրյալը վկայում է կրթական ոլորտում մանկավարժական համակազմի սեռային անհամամասնության մասին: Հատկապես հանրակրթության ոլորտում առկա է ֆեմինացում (ուսուցիչների 83,4 տոկոսը կին է): Բացի այդ, առկա է որակյալ մասնագետների արտահոսք, ընդ որում հիմնական պատճառը ցածր աշխատավարձն է, և աշխատանքից հեռանում են հիմնականում տղամարդ ուսուցիչները:

Զբաղվածության ոլորտ

Առանձնահատուկ ուշադրության է արժանի կնոջ իրավունքների պաշտպանությունը աշխատանքի և զբաղվածության բնագավառում: Միջազգային հանրությունը, գիտակցելով այս հիմնախնդրի կարևորությունը, բազմիցս անդրադարձել է դրան և փորձել հնարավորինս պաշտպանել կանանց իրավունքները այս ոլորտում: Աշխատանքի ոլորտում փաստացի իրավահավասարության հասնելու համար անհրաժեշտ է սահմանել նաև որոշակի արտոնություններ, որը հաշվի է առնվել միջազգային իրավական փաստաթղթերի մշակման ժամանակ: Խստագույնս արգելվում է կնոջն աշխատանքից ազատել հղիության, հղիության արձակուրդի, ծննդաբերության հիման վրա կամ ընտանեկան դրության նկատառումներով:

ՀՀ-ում գործում են մի շարք ներպետական իրավական ակտեր, որոնք կարգավորում են աշխատանքի, աշխատավարձի և զբաղվածության ոլորտում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքը, «Զաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքը, «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը:

Անհրաժեշտ է կարևորել աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի հիմնադրումը: Խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում 2004թ. սեպտեմբերին ՀՀ աշխատանքի պետական տեսչության ստեղծմանը՝ աշխատանքի պետական կարգավորման, աշխատանքային իրավունքների՝ մասնավորապես աշխատավայրում կանանց իրավունքների պաշտպանության, գենդերային հավասարության ապահովման նպատակով:

Զբաղվածության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված առանձին նորմ է նախատեսված նաև կոնվենցիայում (հոդված 11):

Կնոջը վերապահված աշխատանքի իրավունքի ցանկացած սահմանափակում անհամատեղելի է կոնվենցիայի դրույթների հետ:

Աշխատանքի ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության առումով նույնպես կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը, որը որպես մոտեցում ամրագրել է այն դրույթը, որ անհրաժեշտ է չհակադրել ընտանիքը կնոջ մասնագիտական կամ հասարակական և քաղաքական գործունեությանը, այլ ստեղծել պայմաններ՝ կնոջ հնարավորությունների լիակատար դրսևորման համար աշխատանքային ոլորտում և ընտանիքում: Այս ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը կարող է հսկայական նշանակություն ունենալ այս ոլորտում կանանց առաջընթացի համար:

Ըստ ՀՀ ազգային զեկույցի՝ գործազուրկ կանանց թիվը հանրապետությունում 2004թ. նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում է 78,0 հազ. մարդ: Գործազուրկների թվի մեջ կանանց տեսակարար կշիռը շարունակում է մնալ բարձր և կազմում է 70,0 տոկոս: Գործազուրկ կանանց թվի մեջ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմում է 94 տոկոս: Գործազուրկ կանանց կրթական մակարդակը հետևյալն է. բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են 11,9 տոկոս, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները՝ 23,7 տոկոս, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 60 տոկոս, թերի միջնակարգ կրթություն ունեցողները՝ 4,4 տոկոս: Մինչև 18 տարեկանները կազմում են գործազուրկ կանանց 0,2 տոկոսը, 18-22 տարեկանները՝ 4,9 տոկոսը, 22-30 տարեկանները՝ 20 տոկոսը, 30-50 տարեկանները՝ 66 տոկոսը, 50-ից բարձր տարիքի կանայք 8,9 տոկոսը:

Այս ամենը գալիս է ապացուցելու, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մեծ մասամբ համապատասխանում է միջազգային օրենքներին և հիմնական խնդիրը հանգում է հավասար իրավունքները հավասար հնարավորություններով ապահովելուն:

Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության մասին

ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության իրավիճակի ստորև ներկայացվող վերլուծության մեջ օգտագործվել են երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ մինչ օրս կատարված վերլուծությունները, մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարության դատաիրավական վարչության կողմից ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ անցկացված ազգային օրենսդրության հետազոտության մեջ բերված «Քաղված դասերն ու հանձնարարականները», Երեխայի առողջության պահպանման ասոցիացիայի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ անցկացված «Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների առողջական վիճակի գնահատում» զեկույցում բերված եզրահանգումներն ու առաջարկությունները, ինչպես նաև Երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագրում բերված ոլորտային վերլուծությունը:

ՀՀ-ում Երեխաների իրավունքների պաշտպանությանը նվիրված այս ակնարկում հակիրճ ներկայացվում են երեխաներին առնչվող ՀՀ օրենսդրության և միջազգային փաստաթղթերի, Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիքների, ձեռնարկված օրենսդրական բարեփոխումների, դրանց ընթացքի, ռազմավարության և սոցիալական քաղաքականության, քաղած դասերի և հանձնարարականների մասին վերլուծությունը:

Պաշտպանն իր մեկամյա գործունեության ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության իրավիճակային առանձին ուսումնասիրություն չի անցկացրել: Պաշտպանը սույնով նախանշում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իր ռազմավարությունն ու որդեգրած առաջնահերթությունները:

Երեխաներին առնչվող օրենսդրությունը և միջազգային փաստաթղթերը, Երեխաների իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիքները

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան 1992թ. հունիսի 12-ին՝ դրանով իսկ փաստելով երեխաների իրավունքների հարցերը առաջնահերթ դարձնելու և դրանք ազգային ծրագրերում ներառելու իր պատրաստակամությունը: Կոնվենցիան ստորագրվել է առանց վերապահումների: 1994թ. ՀՀ նախագահը ստորագրել է «Երեխայի կենսապահովման, պաշտպանության և զարգացման մասին» համաշխարհային հռչակագիրը: 1996թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Երեխայի իրավունքների մասին» օրենքը, որը հիմնված է ՀՀ Սահմանադրության, երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի վրա և սահմանում է երեխաների իրավունքներն ու այդ իրավունքների պաշտպանության համար երկրի ստանձնած պարտավորությունները: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն 2000թ. քննախոսել է Հայաստանի ներկայացրած առաջին պարբերական զեկույցը՝ հաշվետվության եզրափակիչ դիտողություններում մասնավորապես նշելով այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի նորմերի իրականացմանը:

ՀՀ-ում երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման գործընթացը համակարգող և վերահսկող միասնական կառույց առայժմ գոյություն չունի: Այս բնագավառում ունեցած ձեռքբերումներից է այն մեխանիզմի ստեղծումը, որի միջոցով պետք է ի կատար ածվեն երեխայի իրավունքների ասպարեզում ստանձնած պարտավորությունները, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների գործողությունների ազգային ծրագիրը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 27-ի թիվ 1654 որոշմամբ հաստատվել է երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական

ռազմավարական ծրագիրը և այդ ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Ծրագրով նախատեսված միջոցառումները, մասնավորապես, ներառում են երեխայի հարցերով սոցիալական աշխատանքի ինստիտուտի ստեղծումը, կոնֆլիկտային կամ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար աջակցության մեխանիզմների մշակումը, մուր-մանկապարտեզների ցանցի ընդլայնումը, բոլոր մարզերում երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծումը, երեխայի կենսաբանական ընտանիքի կարիքների գնահատումը, ընտանիքին աջակցելու մեխանիզմների մշակումը, ծնողներին երեխայի դաստիարակության համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցումը, մանկատներում արդիական տեխնոլոգիաների ներդրումը, համապատասխան մասնագետներով ապահովումը և վերջիններիս պարբերական վերապատրաստումները, մանկատան սաներին միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության ընձեռումը, մանկական խնամակալական կազմակերպությունների աջակցության ծրագրի իրականացումը, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իրականացումն ապահովող իրավական ակտերի մշակումը և մի շարք այլ միջոցառումներ:

Որպես ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման պատասխանատուներ նախատեսված են աշխատանքի և սոցիալական հարցերի, ֆինանսների և էկոնոմիկայի, կրթության և գիտության, ինչպես նաև առողջապահության նախարարությունները:

2002թ. ապրիլին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և մի շարք նախարարությունների աջակցությամբ մշակել է երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների 10-ամյա ռազմավարական ծրագիր, որի տրամաբանությունը զարգանում է ըստ ոլորտների՝ առողջապահություն, օրենսդրություն, սոցիալական ապահովություն, կրթություն, հանգիստ, ժամանց, մշակութային կյանք, արդարադատություն, առանձնացվում են առկա հիմնախնդիրները, ուրվագծվում են դրանց լուծման ուղիները:

ՀՀ երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրում (ԳԱԾ) առանձնացվել են մասնավորապես հետևյալ հիմնախնդիրների լուծմանը խոչընդոտող հանգամանքները.

Օրենսդրական պահանջների և երկրի սոցիալ-տնտեսական կացության անհամապատասխանությունը,

Ընդունված իրավական ակտերը կիրարկող և ոլորտը կարգավորող ենթակառուցվածքների անկատարությունը,

Երեխայի իրավունքների խնդիրներով զբաղվող միասնական կառույցի բացակայությունը:

2002թ. ՀՀ Արտաքին գործերի նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ ստեղծվել էր Երեխաների ռեսուրս կենտրոն՝ ի կատարումն Երեխաների իրավունքների կոմիտեի կողմից Հայաստանին վերաբերող զեկույցում նշված՝ երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագրի կատարման վերահսկման մարմնի ստեղծման պարտավորության:

2003թ-ի դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովը հաստատեց երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագիրը: Այն ներառվել է ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մեջ:

Վերահսկման մեխանիզմները և հետագա գործողությունները

Վերահսկման մեխանիզմների և հետագա գործողությունների տեսանկյունից ԳԱԾ-ում բարձրացված հիմնախնդիրներին լուծում տալու նպատակով փաստաթուղթը մշակած կառավարական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները առաջարկում են իրականացնել կոնկրետ ծրագրեր, որոնց նպատակն է՝ ապահովել Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանությունը: Ըստ ԳԱԾ-ի, այդ ծրագրերի ընթացքը և արդյունքները կվերահսկվեն նախարարությունների ծրագրերի իրականացման տարեկան հաշվետվությունների միջոցով:

Ի լրումն վերը նշվածի, նպատակահարմար է հիմնել երեխայի իրավունքների պաշտպանության կառույց՝ լրացուցիչ մոնիտորինգ անցկացնելու և երեխայի իրավունքներն արդյունավետ պաշտպանելու նպատակով:

Այսպես, նկատի առնելով այն հանգամանքը, որ չնայած նշանակալի հետևողական քայլեր ու միջոցներ են ձեռնարկվել ՀՀ-ում **երեխային առնչվող օրենսդրությունը միջազգային փաստաթղթերի հետ ներդաշնակեցնելու** ուղղությամբ, այնուամենայնիվ, փաստ է, որ ՀՀ օրենքը հիմնականում կրկնում է կոնվենցիայի դրույթները և չի մատնանշում այն մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են նրանում նշված դրույթների կենսագործման համար: Այստեղ հարկ է մեջբերել ԵԻ կոմիտեի դիտողությունն առ այն, որ հստակ հետևողական քայլեր չեն ձեռնարկվում՝ մասնավորապես ԵԻԿ-ի նախորդ առաջարկությունների իրագործման հարցում, այն է՝ Երեխաների իրավունքները վերահսկող անկախ կոմիտեի ստեղծման ուղղությամբ: Կարևորելով Պաշտպանի կառույցի հիմնումը Հայաստանում, ԵԻ կոմիտեն առաջարկում է, որ ԵԻԿ-ի մասնակից պետությունը հիմնի կամ երեխաների իրավունքների համար պատասխանատու վստահված անձի ինստիտուտ, կամ Պաշտպանի կառույցում գործող երեխաների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու բաժին:

Հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը ոչ մի հատուկ ամրագրում կամ հղում չունի երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Այն իրավասություն է տալիս Պաշտպանին հավասարապես գործ ունենալ նաև երեխաների իրավունքների խախտումների հետ: Այդ նպատակով ներկայացված ծրագրի շրջանակներում նպատակահարմար է համարվել կենտրոնացնել բոլոր ռեսուրսները հատկապես երեխաների իրավունքների նկատմամբ հետևողական մոտեցման, խթանման ու պաշտպանությանն ուղղված տեղեկատվական քարոզարշավ ծավալելու և երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերի բացահայտման ու հասցեականացման ուղղությամբ:

Հիմնախնդիրներ

ՀՀ օրենսդրական բարեփոխումների նախաձեռնության կողմից ազգային օրենսդրության հետագոտության վերաբերյալ հանձնարարականների մեջ մասնավորապես ասվում է, որ.

- ՀՀ օրենսդրության մեջ կան այնպիսի դրույթներ, որոնք ներգործության և կիրարկման ուժով համարժեք չեն և չեն բխում սոցիալ-տնտեսական դժվարին պայմաններից՝ խոչընդոտելով երեխաների իրավունքների լիակատար իրականացմանը:

- Երեխաներին վերաբերող օրենսդրական դաշտի լուրջ բացթողումներից են ընդունված օրենսդրական ակտերը կիրարկող ենթակառուցվածքների անկատարությունը, առկա վարչական տարբեր հրահանգների և կանոնակարգերի շատ դեպքերում իրարամերժ և հակասական բնույթը:

- Կարիք կա օրենսդրական ակտերում սահմանել չափահասների պատասխանատվությունը երեխաների հետ դաժան վերաբերմունքի և նվաստացման համար:

- Առանձնահատուկ իրավական պաշտպանության կարիք ունեն ռազմական գործողություններից, երկրաշարժի և այլ բնական աղետներից տուժած, ինչպես նաև փախստականների և ներքին տեղահանվածների ընտանիքների երեխաները:

- Գործող օրենսդրական համակարգը բարեփոխումների կարիք ունի այնպիսի խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունն իրականացնելու մասով, ինչպիսիք են մուրացիկ և թափառաշրջիկ երեխաները:

- Դեռևս չկան այնպիսի օրենսդրական նորմեր, որոնք հստակորեն պաշտպանեն երեխաներին անօրինական տեղափոխումներից, այդ թվում՝ արտասահման: Այս առումով անհրաժեշտ է միանալ համապատասխան միջազգային փաստաթղթերին և վավերացնել դրանք:

- Հասունացել է նաև արտասահմանում գտնվող Հայաստանի քաղաքացիների երեխաների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով վերջին տարիների մեծաթիվ միգրացիան: Գաղտնիք չէ, որ այդ երեխաների ծնողներից

շատերը, գտնվելով անօրինական կարգավիճակում, ոչ միայն չեն կարող պաշտպանել նրանց իրավունքները և օրինական շահերը տարբեր տեսակի ոտնձգություններից, այլև շատ դեպքերում անհնարին է դառնում երեխաների ամենատարրական իրավունքների իրականացումը՝ այդ թվում, զարգացման և կրթության:

- Վերջին տարիներին հաճախակի են դարձել անչափահասների ծանր հիվանդությունների և մահվան դեպքերը՝ կրոնական տարբեր հոսանքներին և աղանդներին հարելու պատճառով: Շատ դեպքերում այդ աղանդների գործունեությունը լուրջ վտանգ է հանդիսանում երեխաների առողջության և հոգևոր զարգացման համար՝ դառնալով ընտանիքից և հասարակությունից օտարանալու պատճառ:

- Հաճախակի են դարձել տարբեր զանգվածային լրատվամիջոցներով ակոհողի և ծխախոտի գովազդները, ինչպես նաև մարդկային արժանապատվությունը նվաստացնող և բռնություն քարոզող տեղեկատվության (ֆիլմերի) տարածման դեպքերը:

- Մի շարք օրենքներ սահմանափակում են միմյանց, չնայած որ ընդունվել են ժամանակային չնչին տարբերությամբ: Դրանց թվին են պատկանում, օրինակ, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «*Երեխայի իրավունքների մասին*» օրենքները:

- Անհանգստության տեղիք են տալիս օրենսդրական դաշտի բացթողումները որդեգրման հարցերին վերաբերող մասով: Կարևորելով **Հասագայի կոնվենցիայի** դրույթները արտերկրյա որդեգրումների վերաբերյալ, ՀՀ-ն վերանայել է որդեգրման կարգը՝ առավելությունը տալով ներերկրյա որդեգրումներին:

- Օրենսդրական դաշտում առկա մտահոգիչ հարցերից են նաև անչափահասների դատարանների բացակայության պայմաններում անչափահասների գործերի քննման և նրանց վկայություն տալու կարգին վերաբերող հարցերը: ՀՀ նոր գործող քրեական օրենսգիրքը համապատասխան հոդվածներ է նախատեսում նաև բռնության կանխարգելման և երեխաներին աջակցելուն վերաբերող հարցերի կարգավորման համար: Երեխայի իրավունքների բնագավառում օրենսդրական բարեփոխումները կազմում են երկրում ընթացող համակողմանի բարեփոխումների մի մասը:

*Հարկ է նշել, որ Հայաստանը չի վավերացրել Աշխատանքի միջազգային կազմակերպության 138 (Աշխատանքի ընդունման համար նվազագույն տարիքի մասին) և 182 (Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին) կոնվենցիաները, սակայն ՀՀ նոր աշխատանքային օրենսգիրքը պարունակում է անչափահասների աշխատանքին նվիրված հոդվածներ, որոնք համապատասխանում են միջազգային իրավական ակտերին: 2003 թվականին ՀՀ-ն ստորագրել է Երեխաների իրավունքների վերաբերյալ կոնվենցիայի երկու հավելյալ արձանագրությունները՝ **Չինված հակամարտություններում երեխաների մասնակցությանը վերաբերող հավելյալ արձանագրությունը և Երեխաների առջուկվածառջին, մանկական մարմնավաճառությանը և մանկական պռոնոգրաֆիային վերաբերող հավելյալ արձանագրությունը**, և մշակել է թրաֆիքինգի դեմ ազգային ծրագիր, որի մեջ ներառված են նաև անչափահասների խնդիրները:*

2005թ. ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է զինված հակամարտություններում երեխաների մասնակցության վերաբերյալ ԵԻԿ-ի կից արձանագրությունը: Այն դատապարտում է զինված հակամարտությունների ժամանակ երեխաների իրավունքների նկատմամբ ոտնձգությունները ինչպես նաև սահմանում է նրանց պաշտպանության մեխանիզմներն ու սկզբունքները: Այս արձանագրությունը վավերացնելով՝ ՀՀ-ն պարտավորվում է գործի դնել բոլոր հնարավորությունները՝ բացառելու անչափահասների մասնակցությունը զինված գործողություններում և նրանց ծառայությունը կանոնավոր բանակում, սահմանային ու ներքին զինված ուժերում: Բացի այդ, ՀՀ-ն պարտավորվում է ամրագրել բանակում ծառայության նվազագույն տարիքը և միջոցներ ձեռնարկել այդ պարտավորության կատարման ուղղությամբ:

Օրենքների կատարմանն օժանդակելուն ուղղված ինստիտուցիոնալ պայմաններ

Ինչպես նշվել է, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և հարակից օրենքների բարեփոխումներին օժանդակելու նպատակ ունեցող միասնական և բազմակողմանի գործառույթներ իրականացնող հաստատություն ստեղծված չէ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Պետությունը համապատասխան մարմինների միջոցով

համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող անձանց և հասարակական միավորումների հետ»: ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված է, որ. «Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ՀՀ կառավարությունը և ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինները»: ՀՀ կառավարության 2000թ. մարտի 13-ի որոշման համաձայն՝ պետական կառավարման հանրապետական լիազորված մարմնի իրավասությունները վերապահվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարությանը (2004թ. սկզբից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), իսկ պետական կառավարման տարածքային մարմնի իրավասությունները՝ մարզպետներին: Վերջիններս իրենց գործունեության մասին պարբերաբար տեղեկացնում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Վերոհիշյալ որոշմամբ հաստատվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, որով որպես այդ մարմինների խնդիրներ՝ սահմանված է անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև ծնողների, որդեգրողների բացակայության, դատարանով ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու, այլ պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը: Ինչպես կարելի է նկատել մեջբերված դրույթի բովանդակությունից՝ հիշյալ մարմինների գործառույթների շրջանակից դուրս է մնում երեխաների մի ստվար մասը:

Վերոհիշյալ կանոնադրությանը համաձայն, խնամակալության և հոգաբարձության մարմինները կարող են ստեղծել նաև խնամակալության և հոգաբարձության՝ հասարակական հիմունքներով գործող հանձնաժողովներ:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներից բացի, գործում են անչափահասների գործերով համապատասխանաբար մարզային, քաղաքային և համայնքային հանձնաժողովներ, որոնց հիմնական գործառույթը անչափահասների հետ կանխարգելիչ աշխատանքների և երեխա - ընտանիք կապի ապահովումն է: Վերջիններիս գործունեության ոլորտում առկա կարևորագույն հիմնախնդիրը **օրինակելի** կանոնադրության բացակայությունն է: Նախկինում անչափահասների գործերով հանձնաժողովներն առաջնորդվում էին դեռևս 1968 թվականին հաստատված կանոնադրությամբ: **Օրինակելի** կանոնադրություն ունենալու դեպքում հնարավոր կլինի ապահովել տարբեր բնագավառներում երեխաների կարիքների ուղղությամբ իրականացվող քաղաքականության և միջոցառումների միասնականությունը և նույնականությունը հանրապետության ողջ տարածքում՝ հաշվի առնելով, անշուշտ, տվյալ տարածքին բնորոշ առանձնահատկությունները: Ընդ որում, նպատակահարմար է համարվում վերոհիշյալ երկու հանձնաժողովների միավորումը:

ՀՀ օրենսդրական բարեփոխումների նախաձեռնության կողմից անցկացված ազգային օրենսդրության հետազոտության, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմում երեխայի իրավունքների հարցերով զբաղվող առանձին ստորաբաժանում չի գործում: Նախարարության աշխատակազմում գործում է դատախարակական բարեփոխումների վարչություն, որի կազմից էլ նշանակվում է երեխայի իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցության պատասխանատու մասնագետ:

ՀՀ արդարադատության նախարարության կազմում գործող քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1699 որոշմամբ հանձնվեցին համայնքների ենթակայությանը: Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունը կատարում է քաղաքացիական կացության ակտերի տարածքային բաժինների մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը, ուսումնասիրում է այդ բաժինների գործունեության դեմ ուղղված բողոքները, ստուգումներ կատարում այդ բաժինների կողմից գրանցման գործառույթների օրինականության նկատմամբ: ՔԿԱԳ տարածքային բաժիններն իրենց գործունեության ընթացքում առաջնորդվում են ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքով, ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ՔԿԱԳ ծառայության գործունեության կարգով,

ՀՀ արդարադատության նախարարի հրամաններով, ՔԿԱ գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով:

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության կազմում գործում է մոր և մանկան առողջության պահպանման բաժին, որի գործառույթները, ի թիվս այլ հարցերի, ներառում են մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում իրավիճակային վերլուծությունների կատարումը, կարիքների գնահատումը, պլանավորումը, ծրագրերի մշակումը, իրականացումը, բնագավառի ընդհանուր համակարգումը: Բաժինը կազմակերպական-մեթոդական խորհրդատվություն է տրամադրում առողջապահության համակարգի՝ կանանց և երեխաներին առողջապահական ծառայություններ մատուցող բուժհաստատություններին, իրականացնում է բնագավառի իրավական դաշտի կարգավորումը, պետական պատվերի փաթեթի նախապատրաստումը, համակարգում է նախարարության համակարգում գործող պոլիկլինիկաների, հիվանդանոցների և առողջարանների գործունեությունը:

ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության վարչության ենթակայությամբ գործում է 7-րդ բաժին (անչափահասների գործերով բաժին): Վերջինիս խնդիրներն են՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների բացահայտումը և կանխարգելումը, երեխաների իրավունքների պաշտպանությունը, մուրացկանության և թափառաշրջիկության մեջ ներգրավված երեխաների հաշվառումը, նրանց ընտանիքների/ծնողների հետ տարաբնույթ աշխատանքների կատարումը (կրթություն, ուսուցում, աշխատանքի տեղավորում), համագործակցությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում գործող խնամակալության և հոգաբարձության, ինչպես նաև՝ անչափահասների գործերով քաղաքային, մարզային կամ համայնքային հանձնաժողովների հետ, համատեղ գործունեությունը ՀՕՖ-ի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի հետ, որում գործում է նաև 7-րդ բաժնի բաժանմունքը, այդ բաժանմունքի՝ ՀՀ ողջ տարածքում գործող ստորաբաժանումների (մոտ 60) աշխատանքների համակարգումը և ղեկավարումը:

ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմում և երեխայի իրավունքների վերաբերյալ հարցերով առանձին ստորաբաժանում նախատեսված չէ: Այդ խնդիրներով զբաղվում է նախարարության մշակութային քաղաքականության վարչության պետական ծրագրերի, մշակութային համագործակցության, կրթության և գիտության բաժինը:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունում հատկապես երեխաների հիմնախնդիրներով զբաղվող ստորաբաժանում չի գործում: Աշխատակազմում գործում է հանրակրթության վարչություն, որը համակարգում է հանրակրթական դպրոցների կրթակարգի, այդ թվում՝ չափորոշիչների մշակումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների և հատուկ հանրակրթական դպրոցների (նախկին գիշերօթիկ դպրոցների) գործունեության ուղղորդումը: Նախարարությունում գործում է նաև տեղեկատվության վերլուծության և զարգացման ծրագրերի բաժին, որը կանոնակարգում է կրթության և գիտության ոլորտում իրականացվող ծրագրերը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմում գործում է ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն, որը ղեկավարում և համակարգում է հանրապետությունում գործող պետական և ոչ պետական մանկատների գործունեությունը, ուսումնասիրում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրները, մշակում համապատասխան ծրագրեր և քաղաքականություն, օրենքներում և իրավական այլ ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, կատարում որդեգրման ենթակա երեխաների և որդեգրող թեկնածուների կենտրոնացված հաշվառում, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերահսկողություն և ոլորտին առնչվող այլ գործառույթներ:

«Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է, որ դատարաններն արդարադատությունն իրականացնում են ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան:

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերում դատարանների դերն առանձնացնելը դժվար է, քանի որ ՀՀ դատական համակարգում երեխաների գործերով զբաղվող առանձին դատարաններ կամ դատավորներ նախատեսված չեն: Դատարաններում երեխաների վերաբերյալ գործերով քննությունն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (50-րդ գլուխ) նախատեսված անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները, ինչպես նաև՝ մի շարք այլ օրենքների դրույթներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատարանին իրավասություն է վերապահված դատավճիռ կայացնելիս անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ, եթե դատարանը հանգում է եզրակացության, որ նա կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու:

Հայաստանի Հանրապետությունում դատական պրակտիկան ամփոփում և դրա հիման վրա օրենքի կիրառման վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ է տալիս դատարանների նախագահների խորհուրդը, որի կազմում ընդգրկված են վճռաբեկ դատարանի, դրա պալատների, վերաքննիչ դատարանների և տնտեսական դատարանի և առաջին ատյանի դատարանների նախագահները: Դատարանների նախագահների խորհրդին, որի նախագահը վճռաբեկ դատարանի նախագահն է, իրավասություն է վերապահված դիմելու իրավասու պետական մարմիններին՝ օրենքների և իրավական այլ ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններով:

Երեխայի իրավունքների խնդիրներով զբաղվող պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, անկախ փորձագետներից կազմված, նաև երեխաների մասնակցություն ապահովող միասնական կառույցի ստեղծման պարագայում հնարավոր կլինի *միավորել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և երեխայի իրավունքներին առնչվող հարակից փաստաթղթերի դրույթները կենսագործելուն ուղղված գործողությունները, հասնել այդ գործողությունների հետևողականության, դրանց արդյունավետության բարձրացման:*

Ռազմավարությունը և դերակատարները

Երկրում ընթացող համընդհանուր բարեփոխումները, ներառյալ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվող քաղաքականությունը ձեռնարկել և, առավել ևս՝ իրականացնել հնարավոր չէր լինի առանց հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ընդգրկված գերատեսչությունների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների փոխգործակցության: Ինչպես արդեն նշվել է՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների գործողությունների ազգային ծրագիրը մշակող աշխատանքային խմբի կազմում ընդգրկված էին մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ի կատարումն «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի:

Երեխայի իրավունքների պաշտպանության միասնական կառույցի բացակայության պայմաններում ներկայումս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործում է արագ արձագանքման բաժին, որը, ի թիվս այլ հարցերի, զբաղվում է նաև երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ խնդիրներով: Արագ արձագանքման խումբն ունի ՀՀ ողջ տարածքում հատուկ կարիքներ ունեցող երեխաների հաստատություններ, մանկատներ, գիշերօթիկ դպրոցներ պարբերաբար այցելելու, փաստեր հավաքելու կանոնավոր ժամանակացույց:

Պաշտպանը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ փորձում է համակարգել երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերի իրականացումը պետական և հասարակական սեկտորների մակարդակով: Այդ նպատակով Պաշտպանը հանդիպել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչի հետ, քննարկել հնարավոր համագործակցության շրջանակները:

Երեխաների իրավունքների պաշտպանության իր ռազմավարության մեջ Պաշտպանը կարևորում է հետևյալ առաջնահերթությունները.

Երեխայի իրավունքների պաշտպանության միասնական կառույցի ստեղծումը՝

հարկավոր է կառավարական մակարդակով հիմնել երեխայի իրավունքների պաշտպանության կառույց, որը պատասխանատու կլինի Գործողությունների ազգային ծրագրի համակարգման, մոնիտորինգի և իրականացման համար՝ միջազգային, պետական, տարածաշրջանային և համայնքային մակարդակներում գործող մարմինների հետ սերտ համագործակցելով:

Պետության անունից գործող հիմնական մարմինների գործողությունների համակարգումը՝

Շատ հաճախ պետական գերատեսչությունները, երեխայի իրավունքներին առնչվող փաստաթղթերի նախագծեր մշակելիս ցուցաբերում են նեղ ոլորտային մոտեցում, ինչը հանգեցնում է պետական մարմինների ռազմավարության և գործողությունների խճողվածության և հակասականության: Ուստի, խիստ կարևոր է միջգերատեսչական համակարգող մեխանիզմի գոյությունը, որը թույլ կտա համապարփակ մոտեցում ցուցաբերել երեխայի իրավունքների պաշտպանությանը:

Պետական և ոչ կառավարական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացումը՝

Հետազոտությունը ցույց տվեց, որ երեխայի իրավունքների մասին հիմնականում բարձրաձայնում են տեղական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները: Վերջին 2-3 տարիների ընթացքում մի շարք հասարակական կազմակերպություններ ակտիվորեն ընդգրկված են երեխաների իրավունքների ուղղությամբ տարվող քաղաքականությանն առնչվող փաստաթղթերի ստեղծման աշխատանքներում, ինչպիսիք են, ասենք, Երեխայի իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագիրը, թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը կամ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը: Այդուհանդերձ, հարկավոր է այսուհետ ևս կատարելագործել այդ համագործակցությունը՝ միավորելու համար մասնագիտական ջանքերը, ինչի արդյունքում հնարավոր կլինի նպաստել «երեխային հարմար պետության» գաղափարի կայացմանը:

Երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ օրենսդրության բացերի վերացումը՝

Օրենսդրության առավելություններից բացի, հետազոտությունն ի հայտ բերեց այն հիմնական բացերը, որոնց հարկավոր է ուշադրություն դարձնել իրավական բարեփոխումների ընթացքում: Որոշ միջազգային փաստաթղթերի (ինչպիսիք են Աշխատանքի միջազգային կազմակերպության 138 և 182 կոնվենցիաները, Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման հարցերով համագործակցության մասին Հաագայի կոնվենցիան և այլն) վավերացմանը զուգընթաց պետք է կարևորվեն երեխայի պաշտպանության որոշակի խնդիրները (ծննդյան գրանցումը, անչափահասների գործերով զբաղվող հատուկ դատարանի ստեղծումը կամ դատավորների վերապատրաստումը, երեխայի աշխատանքային հարցերը, երեխայի դեմ բռնությունը, աղջիկների ամուսնության նվազագույն տարիքը և բազմաթիվ այլ հարցեր, որոնք բարձրացվել են կոնվենցիայի իրականացման մասին Հայաստանի վերաբերյալ զեկույցում):

Օրենսդրությունը կիրառող մեխանիզմների անկատարության վերացումը՝

Ցավոք, առաջադեմ օրենսդրությունը միշտ չէ, որ պաշտպանող միջավայր է ստեղծում բոլոր երեխաների համար: Խորհրդային Միությունից ժառանգած օրենսդրությունը կիրառող մեխանիզմների մեծամասնությունը կորցրել է արդյունավետությունը անկախությունից հետո

երկրում տեղի ունեցած շրջադարձային փոփոխությունների և միջազգային չափանիշներին չհամապատասխանելու արդյունքում: Հարկավոր է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են չափանիշների, կանոնակարգերի և ուղեցույցների մշակումը, որոնք թույլ կտան առավել արդյունավետ դարձնել օրենսդրության կիրառումը: Քայլեր պետք է կատարվեն նաև հին կառույցները վերակազմակերպելու և միջազգային չափանիշներին համապատասխանող նորերը ձևավորելու ուղղությամբ:

Հասարակությունում երեխայի իրավունքների մասին իրազեկության պակասը լրացնելը՝

Հասարակությունում ընդհանուր առմամբ և պետական մարմիններում մասնավորապես երեխայի իրավունքների մասին իրազեկության պակասն այն հիմնական խոչընդոտն է, որը թույլ չի տալիս կենսագործել երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ազգային և միջազգային օրենսդրությունը: Հարկավոր է մշակել բազմակողմանի և տևական ծրագիր՝ այդ բացը լրացնելու վերաբերյալ: Շեշտը պետք է դրվի երեխաների հարցերով զբաղվող մասնագետների (մանկավարժներ, բժիշկներ, իրավապահներ, սոցիալական աշխատողներ և այլն) իրազեկության վրա:

Պաշտպանի աշխատակազմն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել «Երեխաների առողջության պահպանման ասոցիացիայի» կողմից «Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների առողջական վիճակի գնահատման» զեկույցում առանձնացված հիմնախնդիրներին, մասնավորապես.

- հետազոտության արդյունքում ուսումնասիրված դպրոցներում (4) ընդգրկված երեխաների միջին հաշվով 16%-ը իրենց կարիքներով դպրոցի առանձնահատկություններին չէին համապատասխանում,

- երեխաների մոտ մեծ տարածվածություն ունեին քրոնիկ հիվանդությունները, ինչպես նաև անհետաձգելի դեպքերը,

- տվյալ հաստատությունում հատուկ կարիքներ չունեցող երեխաների գտնվելու հիմնական պատճառը նախ և առաջ ֆինանսականն է (42-ը 96 դեպքերից՝ մոտ 50%-ը), ապա՝ ծնողների ամուսնալուծությունը, երեխայի նկատմամբ չարաշահումները ընտանիքում, ծնողների հաշմանդամությունը և այլն,

- երեխաների մեծամասնությունը Երևանից են (մոտավորապես 60%-ը) և դպրոցի հարակից շրջաններից (Արարատ),

- առկա են երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնության շատ դեպքեր ոչ միայն ընտանիքում (391-ից 28 դեպք, 7%), այլև դպրոցներում (391-ից 9-ը, 2%),

- առկա են դպրոց ընդունվելու փաստաթղթային ձևակերպման խնդիրներ, բժշկական քարտերի, պատվաստման թերթիկների, ինչպես նաև ոչ լիարժեք պատվաստման, մասնավորապես ԲՅԺ-ի ռեվակցինացիայի բացակայության խնդիրներ,

- բժշկա-հոգեբանա-մանկավարժական հանձնաժողովի ուղեգրման թերթիկի բացակայություն,

- փոքրամասնությունների հանձնաժողովի և իրավաբանական որոշման բացակայություն (դպրոց թիվ 18),

- ծննդյան վկայականների բացակայություն (դպրոց թիվ 11),

- նոր ռեֆորմների և հրամանների վերաբերյալ տեղեկատվության պակաս դպրոցներում (դպրոց թիվ 11),

- տվյալ հաստատությունում գտնվող երեխաների մեծ մասը միայնակ կամ ամուսնալուծված, կամ էլ երկրորդ անգամ ամուսնացած ծնող ունեցող ընտանիքներից են:

Ուսումնասիրությունները շարունակելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում Արագ արձագանքման խմբի կողմից շարունակական այցեր են կատարվում երեխաների համար նախատեսված հատուկ հաստատություններ, գիշերօթիկ դպրոցներ ու մանկատներ:

Ուսումնասիրությունների արդյունքները իրենց ամբողջ ծավալով, կարևորությամբ և առաջարկներով կօգտագործվեն հատուկ կարիքներ ունեցող երեխաներին նվիրված քաղաքականության փոփոխման, նրանց ինտեգրացման, շահերի պաշտպանության,

ռազմավարությունների համատեղ մշակման համար: Պաշտպանի աշխատակազմը հետևողականություն կցուցաբերի գեկույցում առաջ քաշված հետևյալ դիտողությունների ու խորհուրդների տեսանկյունից.

- Կատարել կարիքների գնահատում, ընդհանուր վերանայում և մոնիտորինգ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար առկա բժշկական ծառայությունների վերաբերյալ,

- Բարձրացնել հանրության իրազեկությունը հատուկ կարիքներ ունեցող երեխաների ներկա առողջական վիճակի վերաբերյալ,

- Հզորացնել հիմնական շահագրգիռ կողմերի մասնակցությունն ու համագործակցությունը թիրախ խմբի բժշկական օգնության բարելավման համար:

Այդ գործունեության նպատակն է՝

1. Երեխաների նկատմամբ չարաշահումների կանխարգելումը.
2. Երեխայի իրավունքների կոնվենցիայի սկզբունքների ներդրումը պրակտիկայում (մանկավարժների, դեռահասների գործերով իրավապաշտպանների, պետական գործիչների և երեխաների ուսուցում).

3. Հատուկ դպրոցների համար վերահսկողական համակարգի հիմնումը՝ ներգրավելով պետական մարմինները, ՀԿ-ներն ու այլ ինստիտուտները:

Դիտողությունների և առաջարկությունների համար դիմել՝

**ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմ**

հասցեն՝

375019 Երևան, Պոռշյան 12
հեռ. 26 26 94, ֆաքս 26 26 95

E-mail: ombuds@ombuds.am